Ս.Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԱՆԲԵՐԴ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

С. В. АРУТЮНЯН

# АНБЕРД

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1978

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

902.6
Հ-42

1206

Ս. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԱՆԲԵՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1978

902.6(С43)
Հ 42

Մատենագրական տեղեկությունների, վիմական արձանագրությունների, հնագիտական պեղումներից հայտնաբերված առարկաների և այլ նյութերի ուսումնասիրության հիման վրա ցույց է տրվում, որ միջնադարյան Հայաստանի հզոր ամրոցներից մեկը՝ Անբերդը հիմնադրվել է X դարում՝ Բագրատունիների օրոք։ Այն առևտրական լայն կապեր է ունեցել ինչպես Հայաստանի, այնպես էլ Առաջավոր Ասիայի մշակութային կարևոր կենտրոնների հետ։

28066

ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека

Հ $\frac{30202}{703(02)-78}$ 39—76

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անբերդը միջնադարյան Հայաստանի հզոր ամրոցներից է։ Այն կառուցվել է պատմական Հայաստանի Արագածոտն գավառում, Արագածի հարավային լանջին, Բյուրական գյուղից 10 կմ հյուսիս։

Ամրոցի դժվարագնաց դիրքը, մանավանդ անցյալում, շատ քչերին է հնարավորություն տվել այցելել Անբերդ։ Այդ պատճառով էլ նրա ուսումնասիրությամբ քիչ են զբաղվել։

Անբերդի մասին առաջին անգամ հաղորդում է Ղ. Ինճիճյանը[1]։ Նա բերում է Վարդան պատմիչի՝ Անբերդը Գագիկ I-ի կողմից Հովհաննես-Սմբատին կտակելու, ինչպես նաև Կիրակոս Գանձակեցու և այլոց վկայությունները Զաքարե Ամիրսպասալարի կողմից Անբերդը սելջուկներից ազատագրելու մասին։ Այնուհետև խոսվում է Մկրտիչ Անբերդցի եպիսկոպոսի և այլ պատմական դեմքերի և իրադարձությունների մասին։

Անբերդի մասին տեղեկություններ է տալիս նաև Հ. Շահխաթունյանը[2]։ Նա համառոտակի նկարագրում է հուշարձանները, մեջ է բերում եկեղեցու հարավային մուտքի արևելյան կողմի XIII դ. արձանագրությունը։ Մնացած արձանագրությունները, ինչպես ինքն է հաղորդում, հողմնահարված լինելու պատճառով չի կարողանում ընդօրինակել։

Ինճիճյանից և Շահխաթունյանցից օգտվել է Ղ. Ալիշանը[3]։ Նա նկարագրում է ամրոցի ավերակները և մեջ է բերում նույն արձանագրությունը։ Ալիշանը տալիս է նաև Անբերդի պատմությունը, տեղեկություններ քաղելով Ինճիճյանից։ Նա խոսում է նաև Արագածոտն գավառի մասին, որը միջին դարերում անվանվել է նաև Անբերդու երկիր[4]։

Վիմագիր հիշատակարանների, ժամանակագիրների և Զաքարիա Սարկավագի հաղորդած տեղեկությունների հիման վրա Ալիշանը արծարծում է Վաչուտյանների ծագման և Անբերդի հետ նրանց կապի հարցը։ Վաչուտյանների առանձին ներկայացուցիչների նկատմամբ Ալիշանը թույլ է տալիս տարբեթվերի որոշ անճշտություններ, սակայն նրա առաջադրած տոհմածառը խիստ արժեքավոր է։ Ալիշանը կարողանում է տալ Վաչուտի (Վաչեի) և նրա հետնորդների

---

[1] «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց Տեառն Հ. Ղուկաս վարդապետի Ինճիճեան ի միաբանութենէ Մխիթարեան», Վենետիկ, 1822, էջ 503—504։

[2] «Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», աշխատասիրութեամբ Յովհաննու Շահխաթունեանց, էջմիածին, 1842, հ. II, էջ 70—71։

[3] Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց, տեղագրեաց Հ. Ղեւոնդ Ալիշան, Վենետիկ, 1890, էջ 156—160։

[4] Անդ, էջ 133։

ճիշտ հաջորդականությունը[5]։ Ալիշանից էլ Անբերդի մասին հատվածը վերցրել է Էփրիկյանը և տեղադրել իր «Բնաշխարհիկ բառարան»-ում[6]։

Անբերդ ամրոցին տարբեր առիթներով անդրադարձել է Թ. Թորամանյանը։ Իր ուսումնասիրություններից մեկում նա Անբերդը տեղադրում է նախնադարյան ամրոցների շարքում՝ հայտնելով այն կարծիքը, թե ամրոցը չափազանց հին ծագում ունի։ Թորամանյանը գտնում է, որ Անբերդի հարավարևելյան անկյունի շարվածքները ամենահին պատերն են, որոնք չունեն շինարարական ոչ մի օրինաչափություն։ Դրանք ավելի շուտ հսկայական քարերի անկարգ կուտակումով կազմված արգելափակեր են, քան պարիսպներ։ Դեպի արևելք և հարավ շարունակվող պարիսպների մասին ասում է, թե դրանք ոչ միայն ուրարտական, այլև քրիստոնեական շրջանների վերանորոգության արդյունք են։ Հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան պարսպապատերը կառուցված է համարում VIII—X դարերում[7]։ Հետաքրքիր է, որ Թորամանյանն Անբերդն անվանում է մեծ բերդաքաղաք։ Մեկ այլ տեղ ասում է, թե այն քաղաքի տպավորություն է թողնում[8]։

1922 թ. աշնանը Էջմիածնից մի արշավախումբ է մեկնում Անբերդաձորի հնությունները ուսումնասիրելու։ Աշխատանքներին մասնակցում էին Երվանդ Տեր-Մինասյանը (արշավախմբի ղեկավար), ճարտարապետ Թ. Թորամանյանը, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Սեներերիմ Տեր-Հակոբյանը և նկարիչ Տարագրոսը։ Արշավախմբի աշխատանքների մեջ մեծ տեղ էր հատկացվում Անբերդի հուշարձանների նկարագրությանն ու արժեքավորմանը, ինչպես նաև վիմական արձանագրությունների ընդօրինակմանը[9]։

Արագածի լանջերին հնագիտական ուսումնասիրություն կատարելու նպատակով 1924 թ. օգոստոսին Հայաստանի հնությունների պահպանման կոմիտեն կրկին արշավախումբ է կազմակերպում։ Այս երկու արշավախմբերի արդյունքներն ամփոփված են Թորամանյանի ծոցատետրում[10]։ Խոսելով Անբերդի պալատի մասին, Թորամանյանը գրում է, որ հյուսիսային կողմի բուրգերը շինված են նախաղաքարյանական շրջանի ոճով («ինչպես երևում է շատ լուրջ վերանորոգություն եղած է Բագրատունիների վերջին օրերում»), որ պալատը երկհարկանի է եղել և արևմտյան ու արևելյան կողմերի վրա նույնպես բուրգեր է ունեցել, որոնք այժմ փլված են։ Թորամանյանը նաև նշում է, որ պալատը իր սենյակներով և ներքին բաժանումներով նման է Տիգնիսի դղյակին։

Խոսելով Անբերդի եկեղեցու մասին, Թորամանյանը գտնում է, որ այն չափազանց նման է Մարմաշենի կաթողիկեին։ Թեև գեղեցկությամբ ու ճոխությամբ զիջում է վերջինիս, սակայն շինարարական տեսակետից սքանչելի է։ «Ինչ ապացույցի կարոտ պիտի լինի, որ մոտավորապես հազար տարի է անցել, սակայն շենքը տակավին հաստատուն մնում է իր տեղը կանգուն, եթե փոքրինչ վնասվածքներ կան, պատճառը երկարատև անտերությունն է»[11]։

---

[5] Անդ, էջ 252։

[6] Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, հ. Ա, 1903—1905, էջ 168—169։

[7] Թ. Թորամանեան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հ. I, Երևան, 1942, էջ 27—28։

[8] Թ. Թորամանեան, նշվ. աշխ. հ. II, Երևան, 1948, էջ 230—231։

[9] Երվանդ Տեր-Մինասյան, Անբերդաձորի հնությունները և արձանագրությունները, «Էջմիածին» ամսագիր, 1961, հ. Ե, էջ 45։

[10] Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. II, էջ 230—231։

[11] Անդ, էջ 114։



Անբերդի հուշարձանների, վիմագիր հիշատակարանների մասին հետաքրքիր դիտողություններ ենք գտնում Ե. Տեր-Մինասյանի 1961 թ. հրապարակած հաղորդման մեջ[12]։ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի հետ նրանք կարդում են եկեղեցու ներսի (հյուսիսային մուտքի վերևի) արձանագրությունը։ Ակադեմիկոս Հովսեփ Օրբելու կողմից 1936 թ. գլխավորած արշավախմբի մասնակիցներ Ս. Բարխուդարյանը և Կ. Ղաֆադարյանը լրիվ և ճիշտ կարդացել են այդ արձանագրությունը, որը սակայն մինչև օրս չի հրապարակվել։

1936 թ. սկսվեցին Անբերդի հնագիտական պեղումները, որոնք հիմք դրեցին նրա բազմակողմանի ուսումնասիրությանը։ Արշավախմբի ղեկավար Հ. Օրբելին հանդես եկավ «XII դարի բաղնիքը և ծաղրածուն» աշխատությամբ[13], որտեղ քննության է առնում բաղնիքի կառուցվածքը։ Համեմատելով Անիի պալատական բաղնիքի հետ, Հ. Օրբելին գտնում է, որ Անբերդինը գոյություն է ունեցել երկար դարերի ընթացքում, և նրա ներկա վիճակը արդյունք է XII դ. վերափոխության, որի ժամանակ բաղնիքի հատակը բարձրացվել է սալիկների վրա, ստեղծելով դատարկ տարածություն՝ շինությունը տաք օդով և ծխով տաքացնելու համար։ Խոսելով պատերի շինարարական տեխնիկայի մասին, նա նշում է, որ բաղնիքի ներսը նախապես նույնպես սրբատաշ է եղել և միայն հետագայում (հավանաբար XII դ.) է ծածկվել անջրաթափանց կրաշաղախով։ Համեմատելով Անիի և Անբերդի ջրատար խողովակները, Օրբելին գտնում է, որ վերջիններս ավելի կատարյալ են, քանի որ ժամանակակից գազատար խողովակների նման դրվել են կողք-կողքի և երկաթե կամրջակով միացվել։

Հայտնաբերված բրոնզե հավանգների մասին խոսելիս Օրբելին այն միտքն է հայտնում, որ այդ շրջանում (XII դ.) սահմանագծեր չկային արևելքի մահմեդական և քրիստոնեական արվեստների միջև։ Այս բանը հավասարապես վերաբերում է ինչպես ճարտարապետությանը, այնպես էլ կիրառական արվեստին։ Խոսելով պեղումներով հայտնաբերված հավանգներից մեկի արաբատառ արձանագրության մասին և նշելով, որ այն բաղկացած է վեց անգամ կրկնվող մեկուկես արաբական բառից, Օրբելին այն միտքն է հայտնում, որ հավանգ պատրաստողը արաբերեն չի իմացել և արաբական տառերն օգտագործել է իբրև զարդանախշ։ Նույնպիսի երևույթ նկատվում է նաև նյութական մշակույթի այլ հուշարձանների վրա։ Հովսեփ Օրբելին մանրամասն ուսումնասիրում է բաղնիքին կից սենյակից հայտնաբերված ծաղրածուի գերեզմանը։ Թաղումը կատարված է եղել շատ պարզ՝ նույնիսկ առանց դագաղի։ Հայտնաբերվել է նաև աքաղաղ՝ ծաղրածուի անբաժան ընկերը։ Քննության ենթարկելով ծաղրածուի կմախքը, Օրբելին այն կարծիքն է հայտնում, որ նրան դեռ մանուկ հասակում խեղել են. ծռել են նստելատեղի ոսկորները, հատկապես այլանդակել են դեմքը՝ ներքևի ծնոտից հեռացնելով մի բավականին խոշոր կտոր։ Դեռ երեխա ժամանակ հանել են բոլոր ատամները։ Հատուկ վիրահատությամբ այնպես են արել, որ բերանը միշտ բաց մնա, որի պատճառով նա միշտ ծիծաղել է։ Նշելով, որ Արևելքում ընդունված չէր ծաղրածուի խեղում, Օրբելին գտնում է, որ նրան բերել են արևմտյան երկրներից։ «Ահա թե ով էր զվարճացնում Անբերդի տերերին XII—XIII դդ. սահմանագլխին, այդ նույն բաղնի-

---

[12] Ե. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 45—46։

[13] *И. А. Орбели,* Баня и скоморох XII века (Избранные труды, Ереван, 1963, стр. 316—323).

քում, որի ջրամատակարարման սիստեմը (երկաթե ջրատար խողովակների կիրառումը) տվյալ ժամանակի համար համարվում էր տեխնիկայի բարձրագույն նվաճում, որ երկար դարերի ընթացքում մոռացված էր և համարվում էր անհասանելի»[14]։

Հ. Օրբելին Անբերդին անդրադարձել է նաև այլ առիթներով։ Այսպես՝ «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստի նախաբանում նա նշում է, որ հայ իշխանները ամրոցներ էին կառուցում ոչ միայն այնտեղ, ուր կարող էր ներխուժել օտարազգի զորքը, այլև այնտեղ, ուր բխում էր Հայաստանի կենարար ջուրը[15]։

Անբերդի ուսումնասիրման գործում մեծ վաստակ ունի ճարտարապետ Նիկոլայ Տոկարսկին։ Նա իր մենագրության մեջ առանձին տեղ է հատկացնում Անբերդին[16]։ Առաջին անգամ ուրվագծելով Անբերդի ամբողջական պատկերը, Ն. Տոկարսկին այն բնորոշում է որպես ֆեոդալական դղյակ, վերլուծում է հետագա դարերի ընթացքում կրած փոփոխությունները, նկարագրում ջրամատակարարման սիստեմը։ Նա Հ. Օրբելու նման այն կարծիքն է հայտնում, թե Անբերդն այն ամրոցներից է, որոնք Հայաստանում ջրի կարևորության պատճառով կառուցվում էին այնպիսի տեղերում, ուր հնարավոր լիներ հսկողության տակ պահել ջրամատակարարման սիստեմը։

Ն. Տոկարսկին գտնում է, որ Անբերդը կառուցվել է մոտավորապես VII դ. սկզբում և դղյակի հետ միասին զբաղեցրել է հրվանդանի հյուսիսային մասը։ Նա հնարավոր է համարում, որ այս մասում էլ հենց կառուցված է եղել եկեղեցի։ Ըստ Տոկարսկու, 1936 թ. պեղումների ընթացքում գտնված քարը այդ եկեղեցու խոյակներից է։

Ն. Տոկարսկու կարծիքով XI դ., երբ ամրոցատերերը զբաղեցրին հրվանդանի մնացած մասը, Պահլավունի իշխանները Արխաշան ձորի երկայնքով ու հրվանդանի մնացած անպաշտպան մասերում կառուցեցին նոր պարիսպներ։ Դղյակը նույնպես ամրացվեց, արտաքին կողմից հագեցվելով նոր պարսպով, որն ուներ երեք աշտարակ և դռնակ։ XIII դ., երբ Անբերդում իշխում էին Երկայնաբազուկ իշխանները, Անբերդաձորում կառուցվում են քարե նոր պարիսպներ, որոնց անկյունային աշտարակը պաշտպանում էր հին ճանապարհի նոր դարպասը[17]։

Նույն աշխատության մեջ Ն. Տոկարսկին տարբեր առիթներով անդրադառնում է Անբերդի բաղնիքի, եկեղեցու, գաղտնուղու և այլ հուշարձանների նկարագրմանը։ Առաջին անգամ նա է հրատարակել ամրոցի ընդհանուր հատակագիծը, պալատի հատակագիծն ու կտրվածքը, որոնք կատարվել էին 1936 թ. արշավախմբի աշխատանքների ընթացքում՝ իր իսկ մասնակցությամբ։

Անբերդի ճարտարապետական հուշարձաններին ու նրանց ժամանակագրությանն է նվիրված Ն. Տոկարսկու մեկ այլ աշխատությունը[18], որտեղ մանրամասն քննության է ենթարկվում 1936 թ. պեղումների ժամանակ

---

[14] Անդ, էջ 321։

[15] «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 32։

[16] *Н. М. Токарский*, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, стр. 40—52.

[17] Անդ, էջ 44։

[18] *Н. М. Токарский*, Капитель из Анберда, Труды отдела Востока Государственного Эрмитажа, т. III, 1940, стр. 217—223.



Անբերդաձորի դարպասից ներս հայտնաբերված 74×81 սմ չափեր ունեցող քարը։ Նկատի ունենալով քարի չափերը, ձևն ու մշակումը, Տոկարսկին ենթադրում է, որ այն եղել է քանդված շենքի խոյակներից մեկը։ Նա գտնում է, որ այդ շենքը քառանկյունի կամ քառակուսուն մոտ մի շինություն է, որի գմբեթը պահվել է չորս սյուների վրա։ Այդ սյուները տեղադրվել են շինության անկյուններին շատ մոտ, այդ պատճառով էլ տաշված են երեք խոյակների միայն երկու երեսները, իսկ մյուս երկուսը, որոնք նայել են շենքի կենտրոնական ընդարձակ կողմը, եղել են քանդակազարդ։ Խոյակի գտնված տեղում էլ Տոկարսկին առաջարկում է որոնել այդ շենքը։ Պալատում նման շենքի գոյությունը Տոկարսկին անհավանական է համարում, քանի որ գմբեթավոր շենքի կառուցումը հնարավոր էր միայն վերևի հարկում։ Սակայն մեր կարծիքով այդ մասսիվ սյուներով ծածկված շենքի ծանրությանը ներքևի հարկերի ծածկերը չէին դիմանա։ Բացի այդ, 1936 թ. պեղումների ընթացքում ներքևի հարկում նման շենքի մնացորդներ չհայտնաբերվեցին։ Պարզվեց նաև, որ ներքևի հարկերը տափակ ծածկ են ունեցել։

Այնուհետև, գտնելով, որ նախապես ամրոցը փոքր էր և զբաղեցնում էր պալատին հարող մասը, Տոկարսկին եզրակացնում է, որ գտնված խոյակը զարդարել է VII դ. 40-ական թվականներից առաջ Կամսարականների կառուցած եկեղեցու սյուներից մեկի գլուխը։ Տոկարսկին կենտրոնագմբեթ, հատակագծում քառակուսի, անկյուններում առանձին կանգնած չորս սյուներով շինության օրինակ է բերում Բագարանի 631 թ. կառուցված տաճարը, որի հետ համեմատելով, գտնում է, որ Անբերդի եկեղեցին ներսից ունեցել է 7 մ երկարություն և նույնքան լայնություն, իսկ գմբեթը՝ 3 մ տրամագիծ։ Խոսելով խոյակի վրայի զարդամոտիվների մասին, նա գրում է, որ չնայած զուգահեռներ չկան, սակայն չի բացառվում, որ դրանք VII դ. պատկանեն։ Ըստ Տոկարսկու, Անբերդի բնակեցումը VII դ. հնարավոր էր, քանի որ նշված շրջանում դրանից 8—9 կմ հեռու գտնվող Ինաքլու (այժմ Անտառուտ) և Աղց (այժմ Զորափ) գյուղերում բնակություն է եղել։

Սակայն պետք է նշել, որ ինչպես հնագիտական պեղումներն ու պատմական փաստերը, այնպես էլ Հայաստանի ամրոցաշինության մանրակրկիտ ուսումնասիրությունը մեզ բերել են այն վերջնական համոզման, որ X դ. առաջ Անբերդը բնակեցված չի եղել։

Անբերդից հայտնաբերված հնագիտական առարկաների՝ հատկապես խեցեղենի ուսումնասիրման գործում մեծ երախտիք ունի Տատյանա Իզմայլովան։ Նա առանձին ընդարձակ աշխատություն է նվիրել Անբերդի խեցեղենին[19], որը բաժանելով ջնարակած և ոչ ջնարակած խմբերի, քննության է ենթարկում յուրաքանչյուրն առանձին-առանձին։ Ջնարակած խեցեղենը նա բաժանում է մի քանի տիպերի՝ 1. կանաչ, թափանցիկ ջնարակով, մասամբ գծավոր զարդերով (դրանք համեմատելով Անիից ու Դվինից հայտնաբերվածների հետ, թվագրում է XII—XIII դդ.), 2. բազմագույն, որտեղ ենթաջնարակային նկարազարդումը արված է առանց հաշվի առնելու գծազարդերի սահմանները (նույնպես թվագրում է XII—XIII դդ.)։ Այս խմբի մեջ Իզմայլովան դնում է վառ թրծած, կանաչ անգոբով խեցեղենը[20]։ Միջնաբերդից հայտնա-

---

[19] *Т. А. Измаилова*, Керамика из раскопок в Анберде, Труды отдела Востока Государственного Эрмитажа, т. IV, 1947, стр. 181—204.

[20] Անդ, էջ 183—185։

բերված խեցեղենի մի մասը վերագրում է ուշ միջնադարին և այն բաժանում երկու խմբի։ Առաջին խմբի մեջ դասում է սև անգոբով սպիտակի վրա ներթաջնարակային զարդարանքով պատրաստված խեցեղենը, երկրորդ խմբի մեջ՝ կոբալտով անգոբի վրա զարդարանք ունեցող խեցեղենը։ Խեցու որակը, նկարազարդման վառ գույները, որոնք պայմանավորված են ցածր ջերմաստիճանի թրծմամբ, Իզմայլովային այն համոզման են բերում, որ այս խեցեղենը պատրաստված է Ամբերդում։ Նա քննություն է անում նաև ներմուծված խեցեղենը, որոշում դրանց արտադրման վայրերը, տարածման ոլորտները։

Տ. Իզմայլովան ուսումնասիրել է Անբերդի քանդակազարդ քարերի զարդամոտիվները։ Դրանց հետ կապված մի շարք հարցեր է առաջ քաշել։ Նա հանգել է այն հետևության, թե եկեղեցուց ոչ հեռու գտնված երկու համանման քանդակազարդ քարերը պատկանել են XII—XIII դդ. մի կառույցի, որը մեզ չի հասել։ Այս ենթադրությունը հաստատելու համար վկայակոչում է Հառիճի, Նոր-Գետիկի ու Անիի այն կառույցները, որտեղ շենքերը զարդարված են նման քարերով։

Վերլուծելով այդ զարդամոտիվներն ու նշելով, որ Անբերդի համեմատաբար պրիմիտիվ զարդամոտիվները լայնորեն հայտնի են Կովկասում, նա գրում է. «...սակայն նրա ամենամոտ զուգահեռները գտնում ենք Հյուսիսային Աղվանքում»։ Դրանք իրար հետ համեմատելով, Իզմայլովան գտնում է, որ Դաղստանինը ավելի կատարյալ են[21]։

Անբերդի ճարտարապետական կառույցների, հատկապես պալատի ու բաղնիքի մասին հետաքրքիր դիտողություններ ունի ճարտարապետ Հ. Խալփախչյանը։ Ընդունելով, որ ամրոցը կառուցվել է VII դ., նա գրում է, թե այն հանգամանքը, որ ստիպված լինելով իր գոյությունը պահպանել փոքրաթիվ ուժերով, պայմանավորել է ամրոցի պալատի հատակագծային լուծումները սահմանափակ տարածության մեջ։ Ըստ Խալփախչյանի, պաշտպանական նկատառումներով են պայմանավորված նաև պալատի բազմահարկությունը, արտաքին կողմից դռան և պատուհանի բացվածքների բացակայությունը և այլ հանգամանքներ։ Վերին հարկերում տեղադրվել են պալատի ընդունարաններն ու բնակարանները, որոնք ծածկված են եղել փայտով[22]։

Անբերդին անդրադարձել են նաև «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» ուսումնասիրության հեղինակները։ Նրանցից Ս. Մնացականյանը Անբերդը բնորոշում է որպես ֆեոդալական ամրոց, որի տեղը դեռևս հնագույն ժամանակներից ամրացված է եղել, իսկ X դ. մեզ են հասել պալատական կառուցվածքների որոշ մասեր։ Տալով ամրոցի ընդհանուր պատկերը, հեղինակը առանձնակի ուշադրություն է դարձնում դղյակի պարիսպների, եկեղեցու ու ջրամատակարարման սիստեմի վրա։ Կ. Հովհաննիսյանը խոսելով միջնադարյան աշխարհիկ կառուցվածքների մասին, Անբերդը համարում է «անսամբլային լուծում ունեցող դղյակ»։ Դրանք, ինչպես և քաղաքների միջնաբերդերը, կառուցվում էին անառիկ բարձրունքների գագաթին, ու հաճախ սահմանագծված լինելով ձորերով, ամրացվում էին աշտարակավոր հզոր պա-

21 Անդ, էջ 186։

22 О. Х. Халпахчьян, Гражданское зодчество Армении, М., 1971, стр. 99—101.



րիսպներով։ Հովհաննիսյանը գտնում է, որ Անբերդը հիմնադրվել է IX դարում[23]։

Անբերդի ճարտարապետական հուշարձանների, վիմական արձանագրությունների, հնագիտական առարկաների և այլ հարցերի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև Գ. Հովսեփյանը, Կ. Ղաֆադարյանը, Ս. Բարխուդարյանը, Բ. Առաքելյանը, Վ. Աբրահամյանը և ուրիշներ։

Անբերդի մասին երկու կարգի գրավոր աղբյուրներ կան՝ վիմական արձանագրությունները և միջնադարյան հայ պատմիչների երկերը։

Այս աղբյուրներում օգտագործված են Անբերդ և Ամբերդ, իսկ նոր ժամանակներում՝ Համբերդ ձևերը։ Այդ պատճառով ուսումնասիրողներից ոմանք օգտագործում են Անբերդ, մյուսները՝ Ամբերդ ձևը։ Մեր ուսումնասիրության նյութի համար ավելի կարևոր և հավաստի են վիմական արձանագրությունները, քանի որ դրանք մեկ անգամ գրվելով, անփոփոխ հասել են մինչև մեր օրերը, մինչդեռ պատմիչների գործերը հետագա դարերի արտագրությունների մեջ կարող էին ենթարկվել գրչագրական որոշ փոփոխությունների։

Ժամանակագրական տեսակետից առաջինը Վահրամ Պահլավունու՝ Անբերդում կառուցած եկեղեցու շինարարությանը վերաբերող 1026 թ. արձանագրությունն է[24], հաջորդը՝ Անբերդը սելջուկներից ազատագրելու առիթով Զաքարե Ամիրսպասալարի 1200 թ. արձանագրությունը։ Այս նույն իրադարձության մասին հաղորդում է նաև Հաղարծնի արձանագրությունը (XIII դ. երկրորդ տասնամյակներ)[25]։

Այս դեպքից շատ չանցած Անբերդը հանձնվում է Վաչուտյաններին, դառնում նրանց վարչական և ռազմական կենտրոնը։ Վաչուտյան իշխաններից մի քանիսը կոչվել են Անբերդցի։ Այդ մասին են հաղորդում Հովհաննավանքի, Սաղմոսավանքի, Մակարավանքի և այլ վայրերի արձանագրությունները։ Թված բոլոր արձանագրություններում օգտագործված է Անբերդ ձևը[26]։ Անբերդի եկեղեցու հարավային պատի արձանագրության մեջ գործածված է Ամբերդ ձևը։ 1350 թ. Հովհաննավանքի արձանագրության սկզբում գրված է Անբերդ, իսկ վերջում՝ Ամբերդ[27]։

Այսպիսով, վիմական արձանագրություններում գերազանցապես օգտագործվել է Անբերդ գրությունը, միայն մեկ անգամ հանդիպում է Ամբերդ ձևով և մեկ անգամ էլ՝ երկուսը միասին։

Միջնադարյան հայ հեղինակներից շատերը գործածում են Անբերդ ձևը[28], միայն Գրիգոր Պահլավունին է, որ ունի Ամբերդ[29]։ Ուշ շրջանի պատմիչներից

23 «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 189—190, 216—217։

24 Ն. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 50—51։

25 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 48։

26 Ալիշան, Այրարատ, էջ 169, 175։ Ջալալեան, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, հ. II, Տփխիս, 1858, էջ 228։ Շահխաթունեանց, Ստորագրութիւն էջմիածնի հինգ գաւառացն Արարատայ, էջմիածին, 1842, հ. II, էջ 70։ Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 92։

27 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 92։

28 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 163։ Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 391։ Հաւարումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 92, 138 և այլն։

29 Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 65։

Զաքարիա Սարկավագի մոտ հանդիպում է Անբերդ ձևը[30], իսկ Առաքել Դավրիժեցու մոտ՝ Ամբերդ[31]։

Կարծում ենք, Անբերդ ձևը սկզբնականն է, իսկ Ամբերդը առաջացել է ավելի ուշ շրջանում։

Հետաքրքիր է ակադեմիկոս Գր. Ղափանցյանի դիտողությունը։ «Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունները» գրքի հրատարակման առթիվ նա գրում է. «Ինչու է Ամբերդ և ոչ թե Անբերդ, ինչպես բոլոր յոթ դեպքերում կարդացվում է XIII—XIV դդ. արձանագրությունների մեջ (տե՛ս Կոստանյանի «Վիմական տարեգիրը», էջ 275), թողած դեռ an (ան) բառը, որ խուրիտերենում (an) և հայերենում (ծովի-ան «ծովինար) վերապրուկային ձևով մնացել է և նշանակել է «աստված»։ Անբերդ հին ձևը վեր է ածվել Ամբերդ նոր ձևի հետընթաց ասիմիլյացիայի շնորհիվ, ինչպես՝ անբիծ-ամբիծ և այլն»[32]։

Ընդունելով Անբերդ ձևը ճիշտ, փորձենք պարզել նրա առաջացումը։ Ինչպես տեսանք, Գր. Ղափանցյանը դա փորձում է բացատրել խուրիտերենի ան(աստված) և բերդ բառերի միացումով։ Սակայն հեթանոսության շրջանում (խուրիտների ժամանակ) ամրոցում կյանք գոյություն չուներ, հետևաբար, այդ ժամանակ Անբերդ անունը այդ տեղում առաջանալ չէր կարող։

Ան-ը հայերենում հիմնականում ժխտական մասնիկ է և առաջին հայացքից թվում է, թե Անբերդը հեշտությամբ կարելի է բացատրել, բերդ չունեցող։ Այսպես վարվում է Շահխաթունյանցը և դա բացատրում նրանով, որ Անբերդը բացի հյուսիսային պարիսպներից ուրիշ պարիսպներ չունի, այսինքն՝ նա բերդ է առանց պարիսպների և աշտարակների[33]։

Անբերդը ունի հզոր աշտարակներ ու պարիսպներ, և այդ պատճառով նման բացատրությունը ընդունելի չէ։

Այսպիսով, Անբերդ տեղանվան հավաստի ստուգաբանություն առայժմ դժվար է առաջարկել։

---

[30] Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն, հ. III, Վաղարշապատ, 1870, գլ. Թ, էջ 12։

[31] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 249։

[32] Գր. Ղափանցյան, Սովետական Հայաստանի նոր տեղանունների մասին, Տեղեկագիր, 1954, № 1, էջ 16։

[33] Շահխաթունեանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 70։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ԱՆԲԵՐԴԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անբերդի մասին առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է XI դ. սկզբներին։ Դա Վարդան Վարդապետի վկայությունն է՝ Գագիկ I-ի կողմից ժառանգությունը որդիներին կտակելու մասին։ Պատմիչը գրում է. «Ի չորեքհարիւր քառասուն և չորս թուին մեռավ Գագիկ, տուեալ զթագաւորութիւն երից որդւոց իւրոց՝ Յովհաննիսի, Աբասայ, և Աշոտոյ։ Զթագն տայ Յովհաննիսի, զԱնի և զՇիրակ, զուրբ Գրիգոր ձորովն Աշոտոյ, զԱնբերդ և զդաշտն Այրարատեան, զԿայեան և զԿայծոն և Տաւուշ գաւառն Սեւորդեաց և զայլ մնացեալսն Աշոտի և Աբասայ բաժանէ։ Եւ ի վինել նոցա զկնի այնորիկ զայ թագաւորն աբխազաց Գորգի, որդի Բագարատայ, որդւոյ Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածին, և առնէ իւրաւունս ի մեջ նոցա և գնայ»[1]։

Հաջորդ վկայությունը Անբերդի վահրամաշեն եկեղեցու 1026 թ. արձանագրությունն է[2], որտեղ ասված է, թե Վահրամ Պահլավունի իշխանը եկեղեցին կառուցել է որպես աթոռ հայրապետական, այսինքն՝ եպիսկոպոսական կենտրոն։ Այսպիսով, երկու վկայությունն էլ վերաբերում են XI դ. սկզբներին։

Անբերդի պատմության նախորդ ժամանակաշրջանի վերաբերյալ գրավոր աղբյուրների բացակայության պատճառով ստիպված ենք դիմելու Անբերդի ճարտարապետական հուշարձաններին, դրանց ժամանակագրական առանձնահատկությունների, ինչպես նաև ամրոցի աշխարհագրական դիրքի և այլ նյութերի ուսումնասիրման օգնությամբ լրացնելու գրավոր վկայությունների պակասը։

Անբերդի հնագիտական պեղումները արժեքավոր նյութ են ընձեռում պարզելու Անբերդի ժամանակագրության հարցը։

Դիմենք Անբերդի աշխարհագրական դիրքին ու ճարտարապետական հուշարձաններին։

Անբերդը գտնվում է Արագածի հարավային լանջին, ծովի մակերևույթից 2200 մ բարձր, երկու գետերի միախառնումից առաջացած հրվանդանի վրա։

III և II հազարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհի լեռնային ու նախալեռնային շրջանները ծածկվեցին կիկլոպյան կոչվող ամրոցների խիտ ցանցով։ Այս տեսակետից Անբերդի դիրքը միանգամայն նպաստավոր էր։ Հիրավի, նրա պարիսպների մեջ պահպանվել են շարքեր, որոնք հիշեցնում են

---

[1] Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 92։

[2] Արձանագրությունը հրատարակել է Ե. Տեր-Մինասյանը (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1960, հ. Է, էջ 50—51)։

վերահիշյալ կիկլոպյան կառույցները։ Անբերդից ընդամենը 4 կմ արևելք գտնվող կիկլոպյան ամրոցի դիրքն ավելի անմատչելի է, քան Անբերդինը, և վերջապես, Անբերդի շրջապատում գտնվող ուրիշ կիկլոպյան ամրոցների առկայությունը սոսկ կասկած չի թողնում, որ ամրոցը գոյություն է ունեցել կիկլոպյան ժամանակաշրջանից։ Ասենք, որ Անբերդում տարվող պեղումները կիկլոպյան ամրոցի գոյության մասին առայժմ կռվան չեն տալիս։ Միջնադարյանից ներքև ոչ մի կուլտուրական շերտ հնարավոր չի եղել հայտնաբերել։

Այս հարցը միշտ էլ զբաղեցրել է հնագետներին։ Այդ է պատճառը, որ ինչպես 1936, այնպես էլ 1964 թ. և հետագա տարիներին հատուկ պեղումներ են կատարվել ամրոցի այն մասերում, ուր ամենից հավանական էր կիկլոպյան կառույցներին վերաբերող շերտի առկայությունը։ Սակայն, պեղումներով նման շերտ հայտնաբերել առայժմ չի հաջողվել։ Ուսումնասիրողներից Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին և ուրիշներ հակված են կարծելու, որ նախաքրիստոնեական շրջանում Անբերդը կիկլոպյան ամրոց է եղել։

Անբերդի հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ վաղ միջնադարում նույնպես այստեղ բնակություն չի եղել։ Մատենագրական տեղեկությունները օգնում են հասկանալու հնագիտական պեղումների արդյունքները։

Անբերդի բարձր լեռնային դիրքը, նրա կտրվածությունը առևտրական ճանապարհներից, ինչպես նաև խստաշունչ կլիման մարդու մշտական բնակության համար հարմար չէին։ Այդ է պատճառը, որ այն անցյալում միշտ չէ, որ բնակեցված է եղել։ Անմարդաբնակ է նաև այժմ։ Երկրի զարգացման նորմալ պայմաններում բնակեցվել չէր կարող։ Նրա բնակեցումը հնարավոր էր միայն կիկլոպյան ամրոցների դարաշրջանում։ Դրանից հետո եկող ամբողջ երկու հազարամյակների ընթացքում, մինչև Բագրատունյաց թագավորությունը, Անբերդը անմարդաբնակ էր։ Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանի կիկլոպյան ամրոցներից շատերը ուրարտական կամ նախաուրարտական ժամանակաշրջանից սկսած ամայացել են երկար ժամանակով։ Միայն X դ. սկսվում է նրանց մասսայական բնակեցումը[3]։

Ընդհանրապես պետք է նկատել, որ ամրոցաշինությունը Հայաստանում լայն ծավալ է ստանում սկսած X դարից։ Դա բխում էր երկրի քաղաքական, ռազմական ու տնտեսական կացությունից։ Բանն այն է, որ Արշակունյաց, ինչպես նաև դրանից հետո եկող մարզպանական շրջանում, Հայաստանը կարողանում էր 70—80 հազարանոց բանակ հանել և ի վիճակի էր թշնամուն բաց դաշտում, երկրի սահմանների մոտ ճակատամարտեր տալու և շատ անգամ ստիպելու նրան չմտնելու երկրի խորքը։ Այլ էր վիճակը Բագրատունյաց շրջանում։ Ճակատամարտերն այդ ժամանակ տեղի էին ունենում ամրոցների օգնությամբ, նրանց շուրջը։ Այստեղ մենք նկատի ունենք նաև Անի մայրաքաղաքի և մյուս քաղաքների հզոր պարիսպները և աշտարակները ու պաշտպանական այլ կառույցները՝ որպես ամրոցներ։

Բագրատունի թագավորները, սկսած Աշոտ Երկաթից, երբ հնարավոր եղավ վտարել արաբներին, ամեն կերպ ամրացնում էին երկիրը։ Հսկայական չափերի հասավ ամրոցաշինությունը. ամրացվում էին հները, կառուցվում՝ նորերը։ Երկրի վրա կախված արաբական արշավանքների վտանգը ստիպում էր վերաշինել նաև կիկլոպյան ամրոցները։ Ամրոցներ կառուցվում էին նաև բարձր լեռնային շրջաններում։

[3] Պեղվող հուշարձաններից Լճաշենում, Արգիշտիխինիլիում, Մարմաշենում և Տիրաշենում հետևյալ պատկերն է. ուրարտական կամ նախաուրարտական շերտի վրա անմիջապես նստած է միջնադարյան շերտը, որը բոլոր տեղերում էլ թվագրվում է ոչ շուտ քան X դարը։



Այդպիսի ամրոցներից էր Անբերդը, որի կառուցումը պայմանավորված էր նաև Շիրակի թագավորության աշխարհագրական դիրքով։ Արագածոտնը գտնվելով Բագրատունիների թագավորության արևելյան սահմաններում, դառնում էր Ատրպատականից Արարատյան դաշտով Շիրակ արշավող արաբական զորքերի առաջխաղացման գլխավոր խոչընդոտներից մեկը։ Այդ է պատճառը, որ Բագրատունիները ստեղծում են Անբերդ-Կոշ-Աշնակ-Թալին պաշտպանական գիծը։ Այդ պաշտպանական համակարգում Անբերդին վերապահված էր ամենապատասխանատու դերը։ Դեպի Շիրակ արշավող թշնամին իր թիկունքում չէր կարող թողնել Անբերդի նման հզոր ամրոցը, որի գրավման համար, սակայն, նա պետք է հաղթահարեր ոչ միայն ամրոցի անառիկությունը, այլև լեռնային վերելքի հսկայական դժվարությունները։ Անբերդի պաշտպանները հիանալի կերպով կարող էին հաշիվ մաքրել հոգնած թշնամու հետ։ Մեկ այլ դժվարություն ևս ուներ Անբերդ ամրոցը։ Թշնամին չէր կարող, կամ մեծագույն դժվարությունների և զոհողությունների գնով միայն կարող էր պաշարողական մեքենաներ ու այլ ռազմական տեխնիկա հասցնել Անբերդի մատույցները։

Սրանք են այն հանգամանքները, որոնց պատճառով, մեզ թվում է, Անբերդը կառուցվել կարող էր միայն Բագրատունիների ժամանակ։ Նշված հանգամանքները միաժամանակ օգնում են հասկանալու նաև այն հատուկ հոգատարությունը, որ ցուցաբերում էին նրա նկատմամբ Բագրատունի թագավորները։ Այս տեսակետից միանգամայն օրինաչափ է դառնում Գագիկի մահից հետո Անբերդը թագաժառանգ Հովհաննես-Սմբատին անցնելը և քիչ ժամանակ անց այն Վահրամ Պահլավունուն վստահելը։ Ամրոցի ապահով դիրքն էր նաև եպիսկոպոսարանը այնտեղ տեղափոխելու պատճառը։

Ինչպես նշեցինք, մեր գրավոր աղբյուրները Անբերդի մասին վկայություններ պահպանել են սկսած XI դ. սկզբներից։ Բնական է, որ պատմիչները պետք է անպայման խոսեին Անբերդի մասին, եթե այն գոյություն ունենար։ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին պատմում է, թե ինչպես արաբներից հալածվելով, ապաստանում է նախ Այրիվանքում, ապա Սևանում և հետո գալիս է իր «ձեռակերտ ամրոցիկն Բյուրական»։ Այնուհետև, իմանալով, որ արաբները Բյուրականում էլ իրեն հանգիստ չեն տալու, հեռանում է և գնում, պատսպարվում է Բագարանում։ Արաբները հարձակվում են Բյուրական ամրոցի վրա։ Յոթ օր ամրոցականները համառ դիմադրություն են ցույց տալիս, սակայն արաբները կարողանում են գրավել այն, կոտորել բնակիչներին և հիմնահատակ կործանել ամրոցը։ Բյուրականի ավարը առած նրանք գնում են Դվին[4]։

Բյուրականի ամրոցից այժմ ոչ մի հետք չի մնացել, սակայն Դրասխանակերտցու կառուցած «հաստահեղոյս կոփածոյ քարամբք, պերճապաճոյճ պըճնողութեամբ և նկարակերտ յօրինուածով» եկեղեցին մինչև այժմ կանգուն է և գտնվում է Բյուրական գյուղում։ Սրա շրջապատում էլ եղել է ամրոցը։ Այս ամրոցը Անբերդից հեռու է մոտ 6—7 կմ։ Այս հանգամանքը ստիպում է կար-

[4] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 336—341։

ծելու, որ Բյուրական ամրոցի առման ու կործանման ժամանակ Անբերդ ամրոցը գոյություն չուներ։ Նախ, եթե այն գոյություն ունենար, դժվար թե կաթողիկոսը իր գանձերը տաներ Բյուրական և պատսպարեր այնտեղ։ Այնուհետև, Անբերդը չէր կարող անտարբեր ականատես լինել Բյուրականի ճակատագրին։ Հարկ է նշել, որ Բյուրականի շրջապատի գորականները լսելով արաբների մտադրության Բյուրականը գրավելու մասին, «...գիմեալք ուստեք-ուստեք մտանէին յամրոց անդր՝ թիկունս տալ հավատացելոցն մինչ ի կէս մրդման հանդիսի մահու»[5]։ Այստեղ նույնպես չի նշվում Անբերդի անունը։ Վերջապես, Բյուրականը գրավելուց հետո արաբները չէին կարող չգրավել Անբերդը, եթե այն գոյություն ունենար։

Բյուրական ամրոցի ավերումը վերաբերում է X դ. սկզբներին։ Դրանից հետո այն չի վերականգնվում։ Սրանից հետո է միայն, որ հանդես է գալիս Անբերդ ամրոցը։ Հայերը հաշվի առնելով նախորդ փորձը, այս անգամ ամրոցը կառուցում են ավելի անառիկ վայրում, Բյուրականից հյուսիս, երկու գետերի միախառնման վայրում։ Դրանից հետո Բյուրական ամրոցը այլևս չի հիշատակվում։ Հավանաբար, Անբերդի առկայությունը արդեն ավելորդ էր դարձնում Բյուրականում ամրոց ունենալը։ Այդ է պատճառը նաև, որ XI դ. եպիսկոպոսական աթոռը Բյուրականից տեղափոխվում է Անբերդ։

Այժմ հետաքրքիր է պարզել, թե Բյուրականի կործանումից ինչքան ժամանակ հետո կառուցվեց Անբերդը։

Ինչպես հայտնի է, Հայաստանի միջնադարյան ամրոցներից շատերը ժողովուրդը կապում է Աշոտ Երկաթի հետ։ Անբերդը նույնպես կոչվում է Աշոտ Երկաթի բերդ։ Ժողովուրդը Արխաշանի ձորի մեջ ցույց է տալիս ժայռի վրա փոս ընկած մի տեղ, որն ըստ ավանդության Աշոտ Երկաթի ոտքի հետքն է։ Աշոտ երկաթի անվան հետ կապված բերդերը Հայաստանում շատ կան, և բոլորն էլ համարյա միջնադարյան են։

Ամրոցների դերը երկրի պաշտպանության գործում ուժեղանում է Բագրատունյաց շրջանից սկսած։ Բագրատունի թագավորները մինչև Աշոտ Երկաթը չէին կարող բերդաշինության լայն գործունեություն ծավալել, քանի որ արաբները դեռ երկրում էին և արգելք էին հանդիսանում Հայաստանում բերդերի կառուցմանը[6]։ Միայն Աշոտ Երկաթը հնարավորություն ունեցավ արաբներին դուրս վռնդելու և զբաղվելու երկրի ամրացմամբ։ Աշոտ Երկաթի ամրոցաշինությունը անդրադառնում է նաև Դրասխանակերտցին. «...Գրեթէ իբրև զարծուի սաւառնաթև սլացեալ ընդ օդս այնպէս սրավարեալ խոյանայր զկնի գիշատեալ այլազգեացն, որք աւպատակ սփռեալ տարածեալ էին ընդ երեսս երկրի մերում. և նախքան զամենայն ինչ ի փոքր մի վայրկեան ժամանակի յինքն առհասարակ գրաւեալ նուաճէր զբոլոր իսկ ամրոցս աէրութեան հօր իւրոյ, զոր առեալ կալեալ էր ոստիկանին։ Եւ զորս միանգամ պահնակս անդ ի Սառակինոսացն գտանէր ի սուր սուսերի մաշէր. և պատուարօք և պահնակօք և բազում ռոճկօք զամուրսն ամրացուցեալ և ինքն զհետ թշնամեացն կրթէր...»[7]։ Ինչպես տեսնում ենք, Աշոտ Երկաթը նվաճած ամրոցների արաբական զորքը կոտորում էր և կայազորով (պահնակօք), պարիսպներով (պատուարօք) ու



[5] Անդ, էջ 341։

[6] Շատ փաստեր են հայտնի, թե ինչպես արաբները Հայաստանը գրավելու, այնպես էլ իրենց տիրապետության շրջանում ավերել են բազում ամրոցներ։

[7] Դրասխանակերտցի, նշվ. աշխ., էջ 243։

մթերքով (ռոճկօք) ամրացնում էր և հետապնդում թշնամիներին։ Բնական է, որ հարկ կլիներ որոշ վայրերում էլ կառուցել նոր ամրոցներ։ Դրասխանակերտցու մոտ Աշոտ Երկաթի կողմից նոր ամրոցներ կառուցելու մասին խոսք չկա։ Սակայն պետք է հաշվի առնել, որ վերոհիշյալ հատվածը վերաբերում է Աշոտ Երկաթի իշխանության այն շրջանին, երբ նա դեռ ազատագրում էր Հայաստանը արաբներից։ Մենք հնարավոր ենք համարում, որ Աշոտ Երկաթը իր կյանքի վերջին տարիներին կառուցած լիներ Անբերդ ամրոցը։ Այդ բանը մեզ ավելի հավանական է թվում այն պատճառով, որ Արագածոտնը, գտնվելով Շիրակի թագավորության արևելյան կողմում, պետք է ավելի խիստ ամրացվեր ու առանձին հոգածության առարկա լիներ Աշոտ Երկաթի համար, քանի որ դեպի թե Շիրակ՝ Բագրատունիների մայրաքաղաքները (Բագարան, Երազգավորս, այնուհետև նաև Անի) և թե դեպի հարավային ու արևելյան կողմերը թշնամին անցնելու էր Արագածոտնով։ Այսպիսով, Անբերդի կառուցման ամենահավանական ժամանակը, մեր կարծիքով, X դ. սկիզբն է։

Ուսումնասիրողներից շատերը կամ չեն խոսել Անբերդը X դ. առաջ կառուցված լինելու մասին, կամ այն համարել են X դ. հետո կառուցված։ Թ. Թորամանյանը գրում է, որ դղյակը և պարիսպները հազիվ X դ. գործ են երևում[8]։ Միայն Ն. Տոկարսկին է, որ ենթադրում է, թե Անբերդը սկզբնապես կառուցվել է VII դ.։ Նա Անբերդը տեղադրելով V—VII դդ. ճարտարապետության բաժնի մեջ, գրում է. «Անբերդ և Արխաշան լեռնային գետերի միացումից առաջացած հրվանդանի վրա VII դ. կառուցվել է Անբերդի բազմահարկ դղյակ պալատը, որից այն կողմը հրվանդանի վրա տեղավորված է եղել ոչ մեծ բնակավայրը։ Պալատը հետագա վեց-յոթ դարերի ընթացքում մի քանի անգամ վերակառուցվել և ամրացվել է, իսկ հրվանդանի վրա աճող բնակավայրը պաշտպանելու համար կառուցել են նոր պարիսպներ»։ Այնուհետև, «....բնակավայրը սկզբում զբաղեցնում էր հրվանդանի մի մասը, որը հետագայում հարում էր պալատին, նա սահմանազատված էր քարե պատվարով, որը ուներ կիսակլոր աշտարակներ և մուտք՝ պալատի ներքևից, Անբերդաձորի կողմից։ Կարելի է ենթադրել, որ դղյակի տերերը այստեղ ունեին եկեղեցի, որն այժմ գտնվում է գետնի տակ»[9]։

Նախ հնարավո՞ր էր, արդյոք, ամրոցը կառուցել հրվանդանի հիմքին մոտ և պարիսպներով անջատել հրվանդանի այդ մասը։ Ըստ Տոկարսկու, դուրս է գալիս, որ ամրոցը սկզբնապես կառուցված է եղել այժմյան ամրոցի հյուսիսային մասում և պարիսպները այն շրջափակել են հարավից՝ բաց թողնելով հրվանդանի ծայրը եկեղեցու շրջանով հանդերձ։ Մի խոսքով, ըստ Տոկարսկու, ամրոցը զբաղեցրել է հրվանդանի ավելի դյուրամատչելի հատվածը։ Ամրոցաշինարարները պետք է հաշվի առնեին տեղանքը և ամրոցը սկզբնապես կառուցեին հրվանդանի հարավային ծայրին, որն ավելի անառիկ էր։ Բացի դրանից, եթե Տոկարսկու ենթադրածի նման կառուցած լինեին, նրանք բաց թողած կլինեին հրվանդանի հարթավայրային մասը։ Թշնամին ներս թափանցելով, հարթ տեղից հիանալի կարող էր գրոհել ամրոցը։

Այսպիսի ամրոցաշինության օրինակ մեզ չի հանդիպել։ Հակառակ պատկերը մենք ունենք Անիի օրինակով։ Անին Կամսարականների օրոք զբաղեցնում

[8] Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության, հ. 2, էջ 174։

[9] *Н. М. Токарский*, Архитектура Армении IV—XIV вв. стр. 42.

էր Հրվանդանի ծայրը, և միջնաբերդը կամ պալատը ընկած էր Հրվանդանի եռանկյունու հիմքի կողմը։ Այնուհետև, երբ այն դարձավ Բագրատունիների մայրաքաղաք, Աշոտ III թագավորը կառուցեց նոր պարիսպներ, և ամրոցի հին մասը դարձավ միջնաբերդ։ Սմբատի օրոք, երբ քաղաքն ավելի աճեց, ստիպված եղան կառուցել նոր պարիսպներ։ Մի խոսքով, ամրոց-քաղաքը սկզբում զբաղեցնում էր Հրվանդանի եռանկյունու սուր մասը միայն, իսկ հետո կամաց-կամաց աճեց դեպի Հրվանդանի հիմքը։ Այսպես պետք է եղած լիներ Անբերդի համար։ Սակայն սա Անիի նման չաճեց։ Ն. Տոկարսկու ենթադրության համար հիմք են ծառայել Անբերդի այն պարիսպները, որոնք սկսվելով Արխաշանի նոր դարբասից, շարունակվում են դեպի արեմուտք և միանում ժայռին՝ իրենց մեջ ներառնելով դղյակը և ամրոցի հյուսիսային մասը։ 1963 թ. Տոկարսկու հետ ձեռնամուխ եղանք այդ մասի պեղման աշխատանքներին։ Պարզվեց, որ այդ պարիսպները ավելի նոր են, քան մյուսները և ամենայն հավանականությամբ կառուցվել են XIV դ., մոնղոլական արշավանքներից հետո, երբ վերջապես Քուրդ Անբերդցին հնարավորություն ունեցավ իր բնակության վայրը՝ իշխանական կենտրոնը նորից դարձնել Անբերդը։ Բանն այն է, որ գրավելով Անբերդը, մոնղոլները լրիվ ավերեցին այն, և բնակչությունն ստիպված եղավ հեռանալ։ Անբերդի տեր Քուրդ Վաչուտյանը Անբերդի փոխարեն իր համար բնակության վայր ընտրեց Արայի լեռան դիմաց գտնվող Վարդենիս գյուղը։ Հետագայում, երբ Քուրդ Ամբերդցին հնարավորություն ունեցավ բնակվելու Անբերդում, պատկերը բոլորովին այլ էր. Հավանաբար, նոր բնակիչները այնքան շատ չէին, որ կարողանային զբաղեցնել ամբողջ ամրոցը, իսկ պալատը, որը կանգուն էր, ամենահարմար վայրն էր Քուրդ Անբերդցու բնակության համար։ Պաշտպանական տեսակետից այն ավելի ապահով էր և բնակության համար հարմար։ Բնակվելով պալատում և հնարավորություն չունենալով պաշտպանել ամբողջ ամրոցը, Քուրդը պաշտպանությունը ավելի ուժեղացնելու նպատակով այդ նոր պարսպի օգնությամբ իր բնակեցրած տարածությունը անջատեց ամրոցի մնացած մասից՝ դուրս թողնելով նաև Արխաշանի դարբասը։

Ն. Տոկարսկին գտնում է նաև, որ 1936 թ. Անբերդում հայտնաբերված սյան խոյակը նույնպես վերաբերում է VII դ., և ինչպես ինքն է ենթադրում, պատկանում է ամրոցի այդ մասում կառուցված եկեղեցուն։ Սակայն 1963 թ. պեղումների ընթացքում մեր բոլոր աշխատանքները՝ եկեղեցի գտնելու ակընկալությամբ, չտվին որևէ նյութ, որի օգնությամբ հնարավոր լիներ հաստատել նման ենթադրությունը։

Ն. Տոկարսկին գտնում է, որ խոյակի վրայի զարդերը բնորոշ են VII դ.։ Սակայն պետք է նշել, որ VII դ. նման զարդեր մեզ հայտնի չեն, այն դեպքում, երբ X դ. նրանք լայն տարածում ունեին։ Կարծում ենք, որ այդ սյան խոյակը նույնպես X դ. եկեղեցու կամ այլ շինության է պատկանում։

Գրավոր աղբյուրների, հնագիտական պեղումների տվյալների, ինչպես նաև ամրոցի աշխարհագրական դիրքի և հուշարձանների ժամանակագրական առանձնահատկությունների վրա հենվելով, գտնում ենք, որ Անբերդը կառուցվել է Բագրատունիների թագավորության շրջանում՝ X դ. ոչ շուտ։

Անբերդի համար մյուս կարևոր և ամենից ավելի հավաստի աղբյուրը եկեղեցու ներսից հյուսիսային ճակատակալ քարի վրա փորագրված Վահրամ Պահլավունու արձանագրությունն է։ Արձանագրության մեջ ասվում է, որ



1026 թ. Վահրամ իշխանը կաթողիկե եկեղեցի է կառուցում որպես աթոռ Հայրապետական և սահմանում է այն հարկերը, որոնք գանձվելու էին եպիսկոպոսարանի օգտին (նկ. 1)։

Արձանագրությունը կարևոր է նաև իր թվականով։ Պարզվում է, որ 1026 թ. եկեղեցու կառուցումն ավարտվել է։ Եկեղեցին տեղադրված է Անբերդի գրեթե կենտրոնում և հասկանալի է, որ ամրոցից առաջ կառուցված լինել չէր կարող։ Ինչպես արձանագրությունից էլ պարզ երևում է, Անբերդ բնակավայրը դրանից առաջ գոյություն ուներ, այլապես չէին սահմանվի նաև Անբերդից գանձվող հարկերը «...յԱնբերդի պտուղ ի տանէն. Գ. կապիճ ցորեն. Ա. կտաւհատ...»[10]։

Ինչպես տեսանք Վարդան պատմիչի վկայությունից, Անբերդը գոյություն ուներ Գագիկ I թագավորի ժամանակ, որը և Արարատյան դաշտի հետ միասին կտակում է այն իր որդի Հովհաննես-Սմբատին։ Այսպիսով միանգամայն պարզ է, որ Անբերդը որպես բնակավայր գոյություն ուներ Վահրամ Պահլավունու կողմից վերոհիշյալ եկեղեցին կառուցելուց առաջ։ Այժմ հարկավոր է պարզել, թե ամրոցը իր պարիսպներով և աշտարակներով, ինչպես և դղյակով, կարելի՞ է համարել Վահրամ Պահլավունու գործը, թե ոչ։ Ելնելով այն բանից, որ Անբերդը կառուցվել է VII դ., Ն. Տոկարսկին գրում է, որ XI դ. սկզբներին Անբերդին տիրող Պահլավունիները Արխաշան գետի երկայնքով և մյուս անպաշտպան մասերում կառուցում են նոր պարիսպներ, ինչպես և դղյակի հյուսիսային կողմը ամրացնում նոր պարիսպներով։

Նախ, եթե ամրոցը և դղյակը կառուցած լիներ Վահրամ Պահլավունի իշխանը, իր վերոհիշյալ շինարարական արձանագրության մեջ այդ մասին անպայման կնշեր։ Բացի այդ, այն հանգամանքը, որ Վարդան պատմիչը Անբերդը հատկապես նշում է Հովհաննես-Սմբատի ժառանգած շրջանների մեջ, ապացույց է, թե Անբերդը մի սովորական բնակավայր չէր և նույնիսկ մեր կարծիքով, ոչ էլ սովորական ամրոց, այլ իր նշանակությամբ առանձնահատուկ ու ռազմագիտական տեսակետից մի շատ կարևոր բերդ։ Ուրեմն, Անբերդն իր պալատով և պարսպապատերով եկեղեցու շինարարությունից առաջ գոյություն ուներ։ Այնուհետև, պետք է նկատի ունենալ, որ Պահլավունիները ինչքան էլ ազդեցիկ իշխաններ էին, այնուամենայնիվ, ամրոցների կառուցումը վերապահված էր միայն թագավորներին։ Ահա թե ինչ է գրում այս կապակցությամբ «Դատաստանագրքի» հեղինակ Մխիթար Գոշը. «...Նոյնպէս շինել քաղաք եւ բերդ եւ կամուրջս շինել մեծամեծ գետոց թագաւորաց լիցի, եւ հողետուն եւ իջեւանաց տունս եւ այնոցիկ, որ ընդ հրամանաւ նոցա լիցի»[11]։

Անբերդ ամրոցը կառուցել են Բագրատունի թագավորները երկրի պաշտպանության ընդհանուր ծրագրին համապատասխան։

Պահլավունիները առանձնակի դեր ունեին Բագրատունյաց թագավորության մեջ։ Նրանք միշտ հավատարիմ լինելով Բագրատունյաց գահին, իրենց ուժն ու եռանդը ամբողջովին նվիրաբերում էին թագավորության ընդհանուր շահերը պաշտպանելու գործին։ Այդ է պատճառը, որ Բագրատունիները ամենից ավելի վստահում էին նրանց, և պատահական չէ, որ Անբերդի նման

[10] Արձանագրությունը 1936 թ. գիտարշավի ժամանակ լրիվ արտագրել ու վերծանել են Սեդրակ Բարխուդարյանը և Կարո Ղաֆադարյանը։

[11] Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 304։

*կարևոր նշանակություն ունեցող ամրոցը, ինչպես և երկրի պաշտպանության գործը ընդհանրապես վստահված էր Պահլավունի իշխաններին։*

*Պահլավունիների դերն առանձնապես մեծացավ XI դ. սկսած և ավելի ուժեղացավ հատկապես Հովհաննես-Սմբատ և նրա հաջորդ Գագիկ II թագավորների ժամանակ։ Դա իր պատճառներն ուներ։ Մինչև Հովհաննես Սմբատ թագավորը Շիրակի Բագրատունիները իրենց քաղաքական վերելքն էին ապրում, և նրա թագավորները՝ Սմբատ I-ը, Աշոտ II-ը, Սմբատ Տիեզերակալը, Աշոտ Ողորմածը և վերջապես Գագիկ I-ը հզոր ու ռազմունակ կառավարողներ էին։ Հովհաննես Սմբատի ժամանակ, նրա թուլության և ոչ ռազմունակ լինելու պատճառով, երկրի ռազմական գործի կառավարումը, ինչպես և իշխանության հետ կապված շատ հարցերի հոգսը, հիմնականում ընկավ Պահլավունի իշխանների վրա։ Նրանցից հատկապես Վահրամ Պահլավունուն, իր կյանքի երկար տարիների ընթացքում, վիճակ ընկավ ծանր ու պատասխանատու խնդիր։ Նա վարում էր երկրի բոլոր իշխաններին Բագրատունի թագավորների դրոշի տակ համախմբելու, ռազմական ուժերը մեկ ընդհանուր հրամանատարության տակ կենտրոնացնելու քաղաքականություն։*

*Երկրի պաշտպանության համար խիստ կարևոր նշանակություն ունեին բերդերը։ Վահրամ Պահլավունին ձեռնամուխ եղավ դրանց ամրացման աշխատանքներին։ Ուժեղացվեց Անի մայրաքաղաքը պաշտպանող օղակը (Վահրամաբերդ, Տիգնիս, Մաղասբերդ, Թալին և այլն)։ Այդ օղակում խիստ կարևոր դեր ուներ Անբերդը, որը և դարձավ Վահրամ Պահլավունու հատուկ հոգածության առարկան։ Եկեղեցու շինարարության հետ մեկտեղ նա ձեռնամուխ եղավ միջնաբերդի, պարիսպների ու աշտարակների ամրացման աշխատանքներին։*

*Պահլավունի իշխանները հայտնի էին նաև եկեղեցական շինարարությամբ։ Թե Անիում և թե Շիրակում ու Արագածոտնում ճարտարապետական շատ առաջնակարգ կառույցներ կապվում են Պահլավունի իշխանների անվան հետ։ Թ. Թորամանյանը բազմիցս առիթ է ունեցել նշելու Շիրակի ճարտարապետության մեծ հմայքը և Պահլավունի իշխանների դերը այդ ճարտարապետական հուշարձանների կերտման գործում։*

*Կարծիք է հայտնվել, թե Անբերդը եղել է Պահլավունիների ամառանոցը։ Հնարավոր է, որ խաղաղ պայմաններում Պահլավունի իշխանները ամառվա որոշ ժամանակը անցկացնեին այնտեղ։ Սակայն Անբերդի հիմնական ֆունկցիան Շիրակի թագավորությունը հարավից և արևելքից պաշտպանելն էր։ Այս պատճառով է, որ Պահլավունիները հաստատվում են Անբերդում։ Այլապես դժվար թե Պահլավունի իշխանները Անբերդում ամառանոց կառուցելու հնարավորություն և ժամանակ ունենային։ Մեզ թվում է թե այն ամառանոց չէր նաև Բագրատունի թագավորների համար, քանի որ Բագրատունիներն ու Պահլավունիները հիմնականում բնակվում էին Անիում, որը ամռանը համեմատաբար զով էր և, բացի այդ, Անբերդից էլ բավականին հեռու։ (Անիից մի քանի կմ հեռավորության վրա ավելի զովաշունչ ու առողջարար տեղեր կային)։*

*Նույն ժամանակներում Անբերդում տեսնում ենք նաև Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն։ Անբերդում նրան տեսակցության է գալիս Սարգիս վարդապետը՝ «...առաքեալ ի մանկամիտ արքայէ...»[12]։ Մանկամիտ արքան Գագիկ II-ն էր, որի հետ այդ ժամանակ գժտված էր Գր. Մագիստրոսը։ Հավանաբար,*

[12] Գր. Մագիստրոսի թղթերը, *Ալեքսանդրապոլ, 1910, էջ 65։*



*Սարգիս վարդապետին արքան ուղարկել էր նրա սիրտը շահելու համար։ Նամակից երևում է, որ Մագիստրոսը մշտապես չէր բնակվում Անբերդում։*

*Այս դեպքից շատ չանցած, Գագիկ II Բագրատունուն 1045 թ. Կոստանդին Մոնոմախ կայսրը խաբեությամբ հրավիրում է Կոստանդնուպոլիս հաշտություն կնքելու պատրվակով։ Կայսրը նրան ընդունելության էլ չարժանացրեց և ստիպեց հրաժարվել գահից և Անիից։ Այս կապակցությամբ Հ. Մանանդյանը նշում է. «Հույները չկարողացան Անին առնել զենքի ուժով։ Սակայն այն, ինչ չկարողացավ անել բյուզանդական զորքը, հեշտությամբ գլուխ բերեց Բյուզանդիայի փորձված դիվանագիտությունը»[13]։*

*Սակայն հայերը պայքարը շարունակեցին նաև դրանից հետո։ Նրանք փորձեցին Անին տալ Վրաց Բագրատ Դ թագավորի մորը՝ Մարիամ թագուհուն։ Այս մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում XI դ. վրաց ժամանակագիրը. «Ապա կրկին ուժեղացավ և հզորացավ իր «հայրենիքում» Բագրատ թագավորը։ Եվ Բագրատի բախտը բանեց թե ոչ՝ Վեստը (նրան) միացավ Անվա իսն բերդերով, բացի Անբերդից։ Եվ անեցիք տվին Անին Բագրատի մորը, բանի որ այն հայերի (սոմեխների) «հայրենիքն» էր, Բագրատի մայրը՝ Մարիամ թագուհին, հայոց (սոմեխների) Սենեքերիմ թագավորի դուստրն էր»[14]։*

*Այստեղից երևում է, որ Անբերդը Անին պաշտպանող ինը կամ տասը բերդերից մեկն էր։ Հետաքրքիր է, թե ինչու հատկապես Անբերդը չի հանձնվում վրացիներին։ Անբերդն այդ ժամանակ գտնվում էր Վահրամ Պահլավունու ձեռքում, և գուցե նա համաձայն չէր Անին ու Շիրակը տալ վրացիներին, այդ պատճառով էլ հավանաբար քաշվել էր Անբերդ և չէր ուզում այն որևէ մեկին հանձնել։*

*Դրանից հետո Անբերդի, ինչպես նաև Հայաստանի շատ բերդերի ու քաղաքների բախտը մնում էր անորոշ։ Բյուզանդացիք արդեն տիրել էին Անիին։ 1046 թ. Գրիգոր Մագիստրոս Պահլավունին Բջնի ամրոցը իր շրջակայքով հանձնեց բյուզանդացիներին։ Վահրամ Պահլավունին 1048 թ. իր որդի Գրիգորի հետ զոհվեց Դվինի պարիսպների տակ։ Մեզ հայտնի չէ, թե Վահրամ Պահլավունու մահից հետո մեկ ուրիշ Պահլավունի իշխել է Անբերդում, թե ոչ։*

* * *

*Բյուզանդիայի վարած կործանարար քաղաքականության հետևանքով Հայաստանը զրկվեց իր զինվորական ու դիմադրողական ուժից։ Արևելքում հաղթականորեն առաջ շարժվող թուրք-սելջուկյան զորքերը մեկը մյուսի հետևից սկսեցին գրավել Հայաստանի նախ հարավարևելյան և ապա կենտրոնական շրջանները։ Բյուզանդական զորքերը անզոր գտնվեցին կասեցնելու նրանց առաջխաղացումը։*

*1064 թ. սկզբներին թուրքական զորքերը Ալփասլանի գլխավորությամբ նոր, մեծ արշավանք սկսեցին Հայաստանի կենտրոնական և հյուսիսային շրջանների դեմ։*

*Թուրքական զորքերի մի մասը Նախիջևանի վրայով մտավ Արարատյան*

[13] Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 22։*

[14] *Վրաց անանուն ժամանակագիր (XI դ.),* Լ. Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 205—206։*

դաշտ և գրավեց Սուրմառին, այնուհետև շարժվելով հյուսիս՝ Մարմաշենն ու Ախալքալաքը: Այս արշավանքի մեջ կարևոր տեղ էր հատկացվում Անիի գրավմանը: Այդ է պատճառը, որ նախքան նրա պաշարումն ու առումը Ալփասլանը գրավեց նրա շրջապատի բերդերն ու ամրությունները: Այս ժամանակաշրջանին պետք է վերագրել Անբերդի գրավումը Ալփասլանի կողմից: Մենք կարծում ենք, որ Անբերդը գրավվել է 1064 թ. սկզբներին՝ Սուրմառից հետո, Մարմաշենի ու Ախալքալաքի գրավումից առաջ: Բոլոր դեպքերում, Անբերդի գրավումը նախորդել է Անիի պաշարմանը: Մեր ենթադրությունը ելնում է Անբերդի դիրքից և Անիի պաշտպանության գործում նրա կատարած դերից: Ալփասլանը չէր կարող պաշարել Անին՝ իր թիկունքում թողնելով այնպիսի մի խոշոր ամրոց, ինչպիսին Անբերդն էր: Մեր այս ենթադրությունը, ինչպես հետո կտեսնենք, հաստատվում է նաև Անբերդը սելջուկներից ազատագրելու իրողությամբ:

Սելջուկները գրաված բերդերի մի մասը քանդում էին: Պահպանում էին միայն այն բերդերը, որոնք սահմանային էին կամ իրենց համար ռազմական այլ նշանակություն ունեին: Այս տեսակետից շատ հետաքրքիր է Իբն-ալ-Ասիրի հաղորդումը Սուրմառիի և նրա մոտակա բերդերի գրավման մասին: Մելիքշահը գրավում է մի բերդ և ուզում է քանդել, սակայն Նիզամ-ալ-Մուլքը չի թողնում, պատճառաբանելով, որ դա իրենց համար սահմանային նշանակություն ունի: Մելիքշահը բերդն ամրացնում է կայազորով և ապահովում զենքով ու մթերքով[15]:

Անբերդը ռազմագիտական կարևոր դեր ուներ: Այդ է պատճառը, հավանաբար, որ սելջուկները այն գրավելուց հետո չավերեցին, այլ ամրացրին: Մեր այս ենթադրությունը հաստատվում է նաև պեղումների արդյունքներով: Եթե մոնղոլական արշավանքներից հետո Անբերդն ամբողջովին ավերվում է, և պեղումներով բացված այդ շերտը հրդեհված է ու մոխրով ծածկված, ապա նման երևույթ չի նկատվում բագրատունյան և հետբագրատունյան շրջանի հնագիտական շերտերում:

Անբերդը սելջուկները դարձրին մի կարևոր հենակետ՝ ասպատակելու և ավարի տանելու շրջակա գյուղերն ու ավանները: Եվ, ինչպես ստորև կտեսնենք, Զաքարե Ամիրսպասալարը մեծ ճակատամարտ տալով միայն կարողացավ այն ազատագրել սելջուկներից:

* * *

Վրաստանը իր հզորության գագաթնակետին հասավ Թամար թագուհու օրոք (1184—1213 թթ.), որի ժամանակ տերության ամենանշանավոր պետական ու ռազմական գործիչները դարձան Զաքարյան Զաքարե և Իվանե եղբայրները: Հայ-վրացական միացյալ զորքերը հաղթական արշավանքներ սկսեցին:

Ազատագրելով Հայաստանի հյուսիսային շրջանները, ինչպես նաև Գեղարքունիքը, հայոց զորքը Զաքարյան իշխանների գլխավորությամբ ձեռնամուխ եղավ Արագածոտնի և Շիրակի ազատագրման գործին: Հետաքրքիր է, որ փաստորեն Շիրակի և Անիի ազատագրումը հնարավոր եղավ միայն Անբերդի առումից հետո: Ինչպես պատմիչների տեղեկություններից և վիմական արձանագրություններից է պարզվում, Անբերդը սելջուկ-թուրքերի ձեռ-

[15] Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 55:



քին դարձել էր մի շատ կարևոր ու ամրացված բերդ: Ամրանալով Անբերդում, Դվինում և Բջնիում, սելջուկները հաճախ ասպատակում էին շրջակա վայրերը, ավերում բնակավայրերը և կողոպտում առևտրական քարավանները:

Այս մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում XII դ. վրաց պատմիչը. «Եվ նորից գնացին Լոռեցի Սարգսի որդիները՝ երկու եղբայրները՝ Զաքարիա Ամիրսպասալարն ու Հովհան (Իվանե) գործակալն (մսախուրթուխուցեսն), ավերելու Արաքսի (Ռախսի) եզերքը և այնտեղ էր, որ քարավանները հսկելու և կողոպտելու համար եկել էին դվինեցիք, բջնեցիք և ամբերդցիք, որոնց հետ նրանք կես ճանապարհին հանդիպեցին և կռվի կպան իրար հետ. և մեծ պատերազմն ու քաջարի պայքարը գովելի էր (և վրաց զորքն) ամէն ինչով լի և անվանի վերադարձավ...»[16]: Մեջբերումից երևում է, որ Զաքարյան եղբայրները հաղթել են այդ ճակատամարտում: Կարելի է եզրակացնել, որ ճակատամարտը տեղի է ունեցել Դվինից Անի տանող ճանապարհի մոտերքում: Այնուհետև պարզվում է որ հայ-վրացական զորքերը հնարավորություն չեն ունեցել այդ ճակատամարտից հետո հիշյալ վայրում ամրանալու: Այդ պատճառով էլ նրանք վերադարձել են:

Փարպեցի ծիրանավոր եկեղեցու արձանագրության մեջ կարդում ենք.

«Ի թուիս ՈԽ (640 551—1191) ես Զաքարիա Ամիրսպասալար
հայոց եւ վրաց աւգնութեամբ Քրիստոսի առի զաշխարհս
ի տաճկաց եւ ազատ արարի... յամենայն հարկէ, ով
խափանէ... նզովեալ եղիցի»[17]:

Ինչպես տեսնում ենք, պարզ ասվում է, որ Զաքարե Ամիրսպասալարը այդ աշխարհը (խոսքը, հավանաբար, Արագածոտնի մասին է) ազատագրում է տաճիկներից, այսինքն՝ սելջուկներից:

Արձանագրության մեջ կարևոր է ՈԽ-640 551—1191 թվականը: Ընդունված կարծիք է, որ Արագածոտնի ազատագրումը սկսվել է 1196 թ. Անբերդի գրավումով, որից հետո ազատագրվում են Անին, Բջնին, Դվինը և մյուսները: Այս մասին են վկայում ոչ միայն միջնադարյան պատմիչները, այլև վիմական արձանագրությունները: Այլ խոսքով, միակ տեղեկությունը Արագածոտնը այդ թվականին ազատագրելու մասին, վերոհիշյալ արձանագրությունն է[18]:

Ինչպես տեսանք XII դ. վրաց ժամանակագրի տված տեղեկություններից, հայ-վրացական զորքերը արշավանքներ էին սկսել դեպի Արարատյան դաշտը: Այդ արշավանքներից մեկի ժամանակ, դեռևս 1191 թ., ազատագրվում է Արագածոտնը: Սակայն Զաքարյան իշխանները չեն կարողանում տիրանալ Արագածոտնին և Արարատյան դաշտին, հավանաբար, կարևոր ռազմական հենակետերը սելջուկների ձեռքում մնալու պատճառով:

Անցյալի փորձը նկատի ունենալով, Զաքարյան իշխանները վճռում են Արարատյան դաշտի ու Շիրակի ազատագրումը սկսել Անբերդ ամրոցից: Այդ մասին Վարդան պատմիչը գրում է. «Եւ յաւուրս Թամարին առաւել փառաւորեցան (Իվանեն ու Զաքարեն—Ս. Հ.) և ետ նոցա զԼոռէ. և ինքեանք

[16] Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 14:

[17] Ե. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., «Էջմիածին» ամսագիր, 1961, հ. Ե, էջ 50:

[18] Աշտարակից Կոշ տանող ճանապարհի աջ եզրին գտնվող խաչքարի պատվանդանի արձանագրությունը նույնպես խոսում է երկիրը սելջուկներից ազատագրելու մասին, որի ժամանակը, հավանաբար, 1196 թ. առաջ է:

վերականգնում է «զԱնբերդ» և եթե, ինչպես ինքն է նշում, այդ վերականգնումը աներկրա է, ապա այն մեկ անգամ ևս ընդգծում է Անբերդի գրավման կարևորությունը Զաքարյանների գործունեության մեջ։

Դեռ ավելին, եթե Հաղարծնի վերոհիշյալ արձանագրությունը հիշատակում է նաև այլ տեղեր ու ամրոցներ, ապա այստեղ անունով նշվում է միայն Անբերդը, իսկ մնացածների մասին «եւ զայլ բազում ամրոցս» է ասվում։

Անբերդի ազատագրման մասին խոսում են նաև ուրիշ վիմական արձանագրություններ ու պատմական այլ հիշատակարաններ։

Այսքանն էլ բավական պերճախոս վկայում է այն մասին, որ Անբերդը գրավվել է մեծ ճակատամարտից հետո և դժվարությամբ, որ Անբերդի գրավումը Զաքարյան իշխանների կողմից դիտվում էր ամենաանհրաժեշտ նախապայմանը ինչպես Անիի, այնպես էլ Դվինի, Բջնիի և ամբողջ Արարատյան դաշտավայրի ազատագրման համար։ Անբերդը այն բանալին էր, որը վերցնելով միայն հնարավոր էր մոտենալ Անիի պարիսպներին։ Անիի մատույցները հյուսիսից պաշտպանում էր Տիգնիսը, իսկ հարավից՝ Մաղասբերդը։ Պետք էր սպասել, որ Զաքարե Ամիրսպասալարը կբավականանար վերջիններիս առումով և ձեռնամուխ կլիներ Անիի ազատագրմանը։ Բանն այն է, որ արշավող զորամասը չի կարող իր թիկունքում թողնել քիչ թե շատ հզոր ամրոց, քանի որ այն միշտ սպառնալիքի տակ կպահի նրան և վճռական մարտերի ժամանակ կարող է հարվածել թիկունքից։ Այդ է պատճառը, որ արշավանքների ընթացքում ճանապարհի վրա գտնվող բոլոր ամրոցները թշնամին աշխատում է գրավել, իսկ եթե դա հնարավոր չէ, գոնե պաշարված պահել (իհարկե, եթե դրա համար բավականացնում է նրա զինվորների քանակը և հզորությունը)։ Ահա թե ինչու Զաքարե Ամիրսպասալարը հյուսիսից գալով ոչ թե մտնում է Շիրակ, այլ մեր կարծիքով, այժմյան Սպիտակի ու Ապարանի շրջաններով իջնում է Արագածոտն, շրջանցելով Արագածը արևելյան կողմից, և Փարպիի վրայով մտնում է Բյուրական ու շարժվում դեպի Անբերդ։ Ճակատամարտը մեր կարծիքով, տեղի է ունեցել Բյուրական և այժմյան Անտառուտ գյուղերի միջև։ Հայտնի է, որ միջնադարյան հեծյալ զորամասերի համար անհրաժեշտ էր բավական հարթ և ընդարձակ տարածություն, որպիսին Անբերդի շրջանում միայն վերոհիշյալ տեղն է (նկատի է առնվում Անբերդի մատույցները)։ Սրանից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվում է Անտառուտի եկեղեցին, որի մեջ դրված է հաղթանակի առթիվ կանգնեցված խաչքարը։ Վերջինս, մեր կարծիքով, ճակատամարտի տեղից շատ հեռու դրվել չէր կարող։

Ազատագրելով Անբերդը և ամբողջ Արագածոտնը՝ Զաքարե և Իվանե Զաքարյանները այն տալիս են իրենց հավատարիմ իշխաններից մեկին՝ Վաչուտյան Վաչեին։ Այս մասին Զաքարիա Սարկավագը գրում է.

«Բայց զի՝ որպես ասացաք գալուստ առաջնոյն Զաքարիայի ամենայն ծառայիւք, ունէր և ծառայ մի ևս Սարգիս անուն՝ յազգէ Աժդահակայ՝ որ Վաչուտանց կոչէին։ Այս Սարգիս տևեաց մինչև ցվերջին Զաքարիա և ծնաւ նա որդի մի, և անուանեցաւ Վաչէ, որ սիրեցաւ Զաքարէէ և եղև հաւատարիմ տան նորա։ Եւ վասն միամիտ ծառայութեան իւրոյ կարգեաց զնա իշխանաց իշխան եւ ետ նմա մեծութիւն և իշխանութիւն ամենայն Արագածոտանն, Շիրակայ, Նգայ, Անբերդու՝ և ամենայն եզերաց նորա՝ մինչև ցԾրասախաձոր։ Եւ հրամայեաց շինել եկեղեցիս և վանորայս...»[25]։ Ինչպես տեսնում ենք մեջբերված

---

[25] Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն, հ. 3, Վաղարշապատ, 1870, գլ. Թ. էջ 12։

հատվածից, Վաչեն եղել է Զաքարյանների հավատարիմ վասալներից, Զաքարեի կողմից իշխանաց իշխան է կարգվել, և նրա իշխանությունը տարածվել է Երասխաձորից մինչև Շիրակ՝ ընդգրկելով իր մեջ Արագածոտնը՝ Անբերդով։

Փորձենք պարզել, թե Անբերդը և ամբողջ գավառը երբ են հանձնվել Վաչեին։ Ալիշանը Վաչեի իշխանության սկիզբը համարում է 1213 թ.[26], որը ճիշտ լինել չի կարող, քանի որ Զաքարե Ամիրսպասալարը 1212 թ. արդեն մահացել էր, հետևապես, 1213-ին չէր կարող Վաչեին Արագածոտնի տեր դարձնել։

Նույն բանի մասին է խոսում նաև Հովհաննավանքի կաթողիկե եկեղեցու 1217 թ. իր իսկ՝ Վաչեի արձանագրությունը.

«ՈԿԶ (666 551—1217)

Ի ծագմանէ շնորհացն Աստուծոյ ի հիմնանալ եւ լուսաւորիլ եկեղեցեացս գաւառիս Արայրատու ի ձեռն երկուց եղբարց հարազատաց Զաքարիայի եւ Իւանէի եւ արդարածնունդ զաւակաց սոցա Շահանշահի եւ Աւագի ես Վաչէ իշխանաց իշխան որդի Սարգսի Վաչուտանց սիրեցիալ ի սոցանէ մեծաւ պատուով վասն հաւատարիմ ծառայութեան իմո կոչեցա ի գործ վերակացութեան գաւառիս...»[27]։

Մակարավանքի մի արձանագրության մեջ ասվում է, որ Վաչե Անբերդցի իշխանաց իշխանը որոշակի չափով դահեկան է տվել գավթի նորոգման համար[28]։ Կոստանյանը այս արձանագրությունը վերագրել է 1207 թ., հավանաբար, նկատի ունենալով նրա տակ գտնվող թվակիր արձանագրությունը։ Եթե ներքևի թվակիր արձանագրությունը գրվել է վերևինից հետո, կամ առնվազն միաժամանակ, այդ դեպքում ճիշտ կլինի 1207-ով թվագրելը։ Այս երկու արձանագրությունների մեջ էլ հիշվում է վանքի առաջնորդ հայր Դավիթը, որը վանքի առաջնորդ է եղել նաև ՈՂԲ—1243-ին։ Վերջին հանգամանքը դժվարացնում է անվերապահորեն ընդունել 1207 թվականը։

Այս արձանագրությունը առանձնապես կարևոր է նրանով, որ Վաչեն իրեն անվանում է Անբերդցի։ Ուրեմն արձանագրությունը գրելուց առաջ էլ Վաչեն ապրելիս է եղել Անբերդում և այն դարձրել էր իր վարչական կենտրոնը։ Պետք է նկատել, որ Անբերդի կառույցների զգալի մասը վերաբերում են այս շրջանին։ Մեր կարծիքով, այս շրջանին պետք է վերագրել միջնաբերդ-պալատի արևելյան կողմում նոր սենյակի կառուցումը, նույն շինության հյուսիսային մասի դռնակի ու դրան կից բուրգերի շինարարությունը, նոր կրկնակի դարպասի (Անբերդաձորի կողմում՝ ուղղանկյուն աշտարակով), դղյակի մեջ նոր ջրամբարի կառուցումը, բաղնիքի վերանորոգումը, մատուռի կառուցումը, ինչպես նաև Արխաշանի ձորի կողմից նոր դարպասի բացումը։ Հարց է, թե վերը թվարկված կառույցներից որո՞նք են կատարել Զաքարյանները Անբերդը մինչև Վաչուտյաններին հանձնելը և որոնք՝ վերջիններս։ Այստեղ, անշուշտ, շատ կարևոր է իմանալ, թե ամրոցը ազատագրվելուց ինչքան ժամանակ հետո հանձնվեց Վաչուտյաններին։

Անհրաժեշտ է նշել, որ այս նոր շինարարության մեջ նույնպես նկատվում է երկու էտապ։ 1963 թ. պեղումների ժամանակ բացվեց Արխաշանի դարպասից արևմուտք գտնվող բուրգը։ Այս հատվածը շատ հետաքրքիր է նրանով, որ հին

[26] Ալիշան, Այրարատ, էջ 53։

[27] Կ. Ղաֆադարյան, *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները*, Երևան, 1948, էջ 82։

[28] Կ. Կոստանեան, *Վիմական տարեգիր*, Պետերբուրգ, 1913, էջ 48։



բագրատունյաց շրջանի բուրգին (Արխաշանի դարպասը բացելու կապակցությամբ) միացրել էին դարպասի պատը թե՛ ներսից, թե՛ դրսից։ Հնարավոր եղավ պարզել, որ նախքան դարպասը բացելը այս բուրգը ամրացվել է։ Պարզ է, որ ամրացման աշխատանքները կատարվել են ամրոցը սելջուկներից ազատագրելուց անմիջապես հետո, քանի որ գրավման ընթացքում այն վնասվածքներ ստացած կլիներ, որոնք անմիջապես պետք էր նորոգել, իսկ նոր դարպաս բացելու անհրաժեշտությունը կառաջանար համեմատաբար ավելի ուշ։

Ինչպես տեսանք, Վաչուտյան Վաչեն մեծ մասամբ հայտնի է վիմական արձանագրություններից։ Այդ արձանագրություններից էլ հայտնի է, որ նրա կինն է Մամախաթունը, որը նույնպես շատ շինությունների կառուցման մասնակից է։ Հովհաննավանքի վերոհիշյալ ՈԿԶ-1217 թ. արձանագրության մեջ նշվում է, որ Վաչեն և իր կին Մամախաթունը օժանդակել են Հովհաննավանքի կաթողիկե եկեղեցու շինարարությանը։ Զաքարիա Սարկավագը այս արձանագրության հիման վրա կաթողիկեի կառուցումը վերագրում է Վաչեին և ավարտը դնում 1217-ին։ Կ. Ղաֆադարյանը այս բանին առարկելով գտնում է, որ եկեղեցու շինարարությունը ավարտվել է 1221 թ., որի ժամանակ Վաչե Վաչուտյանը կենդանի չէր։ Այս ենթադրությունը նա անում է 1221 թ. արձանագրության հիման վրա, որի մեջ ասված է.

«Կամաւ բարերարին Աստուծոյ եւ իշխանութեան Շահանշահի, որդո Զաքարիայի եւ կողմնակալութեան մերո նահանգի Ամիր Քրդին, որդո Վաչէի, ՈՀ թւ ես Ածատուր վարդապետս կամակցութեամբ միաբան եղբարցս եւ որդիացելովն իմ Յակոբոս վարդապետի աշխատեցաք ի շինուած հրաշազարդ կաթողիկէիս...»[29]։

Սակայն Հոռոմոսի մի արձանագրության մեջ ասված է.

«ՈՀԸ (1229) շնորհիւն Քրիստոսի ես Վաչէ Որդի Սարգսի եւ ամուսին իմ Մամախաթուն դուստր Ապուսեհին շինեցաք ղնշխարատունս ի վանքս Հոռոմոսի յառաջնորդութեան տեառն Բարսղի որդոյ Ամիր Երկաթայ եւ տվաք ընծա գրատանս...»[30]։

Կասկած չկա, որ սա նույն Վաչե Վաչուտյանն է, որը սակայն 1229 թ. տակավին կենդանի էր։

Անհրաժեշտ է բերել Սանահնի 1211 թ. արձանագրությունը, ըստ որի Վաչե Վաչուտյանը շինում է խորաններից մեկը և նվիրում վանքին.

«ՈԿ Թուական

Ես Վաչէ ծառայ Զաքարիայի, որդի Սարգսի շինեցի զխորանս եւ զիմ ոսկետուփ զաւետարանս զսուրբ նշանս եւ զգործքս մեծ ծախիւք ի սուրբ Աստուածինս առաջնորդ սուրբ ուխտիս հայր Վարդան եւ Վարդապետս Գրիգոր Միաբանիւքս հաստատեցաք ի տարւոջն զսուրբ Գերգին պշաբաթն եւ զկիրակէն զամէն եկեղեցիս պատարագ ի կենդանութեան մեր ծնողացն եւ յետ մահուն մեր մին աւրն ինձ Վաչէի եւ մինն ամուսնոյ իմ Մամախաթունին...»[31]։

Կեչառիսի 1223 թ. արձանագրության մեջ ասվում է.

«Յիշեսջիք յաղաւթս զաստուածասէր պարոն զՎաչէ, որ նորոգեաց վերստին զեկեղեցիս. թւին ՈՀԲ էր (1223)»[32]։

[29] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 94 (արձ. 34)։

[30] *Վիմական տարեգիր*, Պետերբուրգ, 1913, էջ 72։

[31] Կ. Ղաֆադարյան, *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները*, Երևան, 1967, էջ 35 (արձ. 59)։

[32] Ալիշան, նշվ. աշխ., էջ 262։

Այսպիսով, 1223 թ. Վաչե Վաչուտյանը արդեն կենդանի չէր։

Հետաքրքիր է նաև Տեղերի ՈՁԱ.-1232 թ. արձանագրությունը.

«ՈՁԱ. շնորհաւքն Աստուծոյ ես Մամախաթուն շինեցի զեկեղեցիս զմեծ եւ զփոքր եւ ժամատունս, յիշատակ ինձ եւ առն իմոյ Վաչէի, իսկ բնակիչք սուրբ ուխտիս հաստատեցին»[33]։

Այսպիսով, Վաչուտյան Վաչեն Անբերդին տիրել է 1210—1212 թթ. մինչև 1221 թ., ըստ Ալիշանի 1213—1232 թվերին։

Քուրդ Բ-ին Ալիշանը դնում է 1235—1267 թթ. միջև, բայց, ինչպես տեսանք, Հովհաննավանքի 1221 թ. արձանագրությունից, այդ ժամանակ նա արդեն նահանգի կողմնակալն էր։ Սրա մասին Զաքարիա Սարկավագը գրում է, որ Վաչեից հետո Շահնշահի հրամանով սա «կարգեալ էր իշխան ի տեղի հօրն»։

Սրա օրոք են տեղի ունենում մոնղոլների աշխարհավեր արշավանքները։ Մոնղոլները հրի ու սրի են մատնում երկիրը։ Անբերդը համառ դիմադրություն է ցույց տալիս, սակայն մոնղոլներին հաջողվում է գրավել այն և ամրացնել։ Անբերդը երկար ժամանակ մնում է անմարդաբնակ։ Կենդանի մնացած Քուրդ Վաչուտյանը, որ կարողացավ հետագայում մոնղոլներից ետ ստանալ իր իշխանությունը և վերահաստատել իր իրավունքները, ստիպված էր հեռանալ Անբերդից։

Հետաքրքիր է Հովհաննավանքի 1250 թ. արձանագրությունը։ Ի միջի այլոց, այս 1250-ն էլ մենք համարում ենք մոնղոլների կողմից Քուրդ Վաչուտյանին իշխանության վրա հաստատելու տարեթիվ։ Արձանագրության մեջ ասված է.

«Յամի ՈՂԹ (699 551—1250) ի տէրութեան Շահնշահի որդոյ մեծին Զաքարիայի, ես Քուրդ՝ որդի Վաչէի եւ ամուսին իմ Խորիշահ դուստր մարզպանա եւ Մամքանա, խնամաւքն աստուծոյ հաճոյ եղեալ այլազգի զաւրացն նետողաց, զանձն իմ եդի ի վերա էկեղէցեաց հաւց եւ վասն առ Աստուած սիրոյն կրկին հաստատեցաք զմիաբանութիւն մեր...»[34]։

Վաչեի որդի Քուրդ Վաչուտյանը թողնելով Անբերդը, իշխանական նստոց է դարձնում Արայի լեռան դիմաց գտնվող Վարդենիս գյուղը, որտեղ հյուրընկալվում է Կիլիկիայի հայոց Հեթում Ա թագավորը՝ Մանգու խանին այցելության գնալիս։ Այս մասին պատմում է Կիրակոս Գանձակեցին. «Եւ տեսեալ զԲաչու-Նուինն, որ զօրապետ էր թաթար զօրուն, որ յԱրեւելս և զայլ մեծամեծսն, և պատուեալ ի նոցանց գնեալ առ յոտն Արագածու՝ հանդեպ լերինն Արայի, ի գիւղն, որ կոչի Վարդենիս ի տանն իշխանին, զոր Քուրդ անուանէին, հայ ազգաւ, կրօնիւք քրիստոնեայ և որդիք իւր Վաչէ և Հասան և կին նորա Խորիշահ՝ յազգէ Մամիկոնենից, դուստր Մարզպանայ, քոյր Ասլան բեկին և Գրիգորոյ, մինչև բերաւ նմա ինչք ի տանէ իւրմէ ի պէտս ընծայից և պատարագաց, զոր տաքեաց հայր նորա իշխանաց իշխանն Կոստանդին...»[35]։ Վերադառնալիս Հեթում թագավորը նորից է այցելում Քուրդ իշխանին. «Իսկ թագաւորն բարեպաշտ Հեթում՝ եկեալ ի տուն իշխանին Քրդին ի գիւղն Վարդենիս, ուր թողեալ էր զախդ իւր և զկարասի և մնայր գալստեան Բարսղի քահանայի, զոր յուղարկեալ էր առ Բաթոյն վերստին...»[36]։ Այս հատվածներից պարզ

33 Անդ, էջ 147։

34 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 103 (արձ. 50)։

35 Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 365։

36 Անդ, էջ 370։



երևում է, որ Քուրդ իշխանի նստոցը, որտեղ գտնվում էր նրա իշխանական տունը, Վարդենիսն էր, որի մասին Ալիշանը գրում է, թե Քիլիջե (Կիլիճե) գյուղն է[37]։

Այս դեպքերը տեղի են ունենում 1254 թ., որից հետո Վաչեի որդի Քուրդը. երկար ժամանակ խաղաղ ապրելով Վարդենիս գյուղում, իրեն նվիրում է հոգևոր գործունեության և, ինչպես պատմում է Զաքարիա Սարկավագը, «Թողեալ ղմարմնավոր փառսն, հետևեցաք անանց փառացն»։ Նա գնում է Սևանա կղզին և մենակյացի կյանք վարում, ուր և վախճանվում է 1267 թ.:

Գանձակեցու հաղորդումներից երևում է, որ Քուրդ իշխանը ունեցել է երկու որդի՝ Վաչե և Հասան, որոնցից ավագը Վաչեն էր։ Սակայն Վաչեն երիտասարդ հասակում մահանում է, և իշխանությունն ստանձնում է Հասանը։ Հովհաննավանքի մի արձանագրությունից երևում է, որ սրանք ունեցել են նաև մեկ ուրիշ եղբայր՝ Դավիթ անունով։ Սակայն այս Տայիր-Հասանն էլ երկար չի իշխում։ Ալիշանը որպես նրա մահվան թվական նշել է 1283-ը։ Հետաքրքիր է նրա իշխանության սկիզբը։ Պետք է նկատի ունենալ, որ իշխել է հոր մահից անմիջապես հետո։ Բացի այդ, նրա հայրը՝ Քուրդ Վաչուտյանը, իր կյանքի վերջին տարիներին թողել էր աշխարհիկ կյանքը և քաշվել Սևանա կղզին, իսկ երկիրը չէր կարող մնալ առանց իշխանի։ Հենց այս նկատի ունենալով, կարելի է ասել, թե Հասանը իշխել է նաև այդ տարիներին, այսինքն՝ 1260-ական թվականների սկզբին։

Հովհաննավանքի 1279 թ. արձանագրության մեջ Վարդանը և Մխիթարը պատմում են, որ վանքին տվել են կանթեղ, շինել հնձան. այս բոլորը կատարվել է Հասանի իշխանության տարիներին։

Քուրդ Գ-ն հաջորդել է Տայիր-Հասանին։ Սրա մասին բավական ընդարձակ տեղեկություն է պահպանել XIV դ. մի հիշատակարան, որտեղ ասված է.

«...Յայսմ ժամանակի երեւեալ քաջ և արի յաղթող և բարձրաբազուկ իշխանաց իշխանն յազգէ Վաչէի, որդի Տայիրին, որդւոյ բարեպաշտ և աստուածասէր Քրդին, որ և անուն նորա Քուրդ կոչի, որոյ անուամբն և քաջութեամբն մնաց գաւառս մեր և վանորայքս անշարժ և անվնաս յայսմ մեղսաշարժ և դառն ցասմանէս, զի զայսմ նուազեալ և դառնացեալ աւուրս, որ վասն մեղաց մերոց, երեւեալ մեծափառ և աստուածահաճոյ մեծ զօրավարն և երևելի նախամարտիկ պարծանաց և զարդու զաւակն Հայաստանեայց ամենաօրհնեալ Քուրդն. զի ոսեստանաձայնք երիվարացն նորա և ճօճիւն նիզակացն և փայլատակումն րացն, ճայթմունք աղեղացն և կուռ զրահքն... զարհուրացուցանէին զթշնամիսն...»[38]։

Ալիշանը հիմնվելով հիշատակարանի գրության թվականի վրա Քրդի իշխանության սկիզբը համարում է 1317 թիվը։ Սակայն նույն հիշատակարանի մեջ ասվում է, որ Քուրդ իշխանը մեծարգո և փառավոր էր երևում «...առաջի այլասեռ թագավորացն Ղազանին, Ղարպանդին և Պուսաիդին»։ Ղազան խանը իշխել է 1295—1304 թթ., սրան հաջորդել է Ղարպանդին (Խուդաբանդա) խանը՝ 1304—1316 թթ. սրան էլ հաջորդեց փոքրահասակ որդին՝ Աբու-Սայիդը (հայկական աղբյուրներում՝ Պուսայիդ)՝ 1316—1335 թթ.։ Ուրեմն այս հիշա-

37 Ալիշան, նշվ. աշխ., էջ 253։

38 Ալիշան, Այրարատ, էջ 253—254, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 527, ինչպես նաև՝ Լ. Խաչիկյան, ԺԴ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 270—271։

տակարանի համաձայն Քուրդը սկսել է իշխել դեռ Ղազան խանի ժամանակներից, այսինքն՝ 1295—1304 թթ. միջև։ Սակայն մեզ հայտնի է, որ 1283 թ. վախճանվել էին իշխան Հասանն ու իր կինը, որոնց որդին էր Քուրդը։ Եվ քանի որ Հասանի ու Քրդի միջև ուրիշ որևէ մեկը չի իշխել, ապա մնում է ենթադրել, որ Քուրդը իշխել է նաև 80—90-ական թվականներին՝ բոլոր դեպքերում Ղազան խանի գահակալության տարիներին՝ այն է 1295—1304 թթ.։

1310 թ. գրված մի հիշատակարանում նույնպես հիշատակվում է Քուրդը. «Ի թուականիս Հայոց ՉԾԹ (759+551=1310) յաշխարհակալութեան ազգին նետողաց Ղարպանտա խանին և հայոց թագաւ(որութեան) Ալինախին և ի դատապետութեան մեծ և իմաստնոյ Եսայոյն։ Ի գաւառս Այրարատու Անբերդ կոչեցելոյ, ի սուրբ և յԱստուածաբնակ հանգիստարանիս Յովանավանք, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս... և յիշխանութեան մերոյ գաւառիս Քրդին, որդոյ Տայիրին, թոռն մեծին և բարեպաշտ Քրդին»39։

Մոնղոլական արշավանքներից հետո եկող շրջանում առաջինը այս Քուրդն է, որ իրեն Անբերդցի է կոչում։ Ակներևաբար, սրա օրոք է հնարավոր դառնում Վաչուտյանների վերահաստատվելը իրենց Անբերդ ամրոցում։ Դա բացատրվում է, հավանաբար, Հայաստանում մոնղոլական իշխանության թուլացմամբ։ Պեղումներն էլ ցույց են տալիս, որ, իսկապես, XIII դ. վերջերից Անբերդում կյանքը նորից է վերսկսվում։

Քուրդ Անբերդցին հայտնի է նաև 1329 թ. երկու արձանագրությունից, որոնք գտնվում են Ուշիում. «Թվին ՉՀԸ կամաւ ամենահին Աստուծոյ եւ ողորմութեամբ պարոն Քուրդին...»։

Թե մինչև երբ է իշխել Քուրդ Անբերդցին, դժվար է ասել։ Միայն հայտնի է, որ 1343 թ. նա արդեն կենդանի չէր։ Այդ բանը երևում է Կարբիի ղանդակատան հարավային պատի արձանագրությունից. «Շնորհիւն Աստուծոյ ես Չրքինս, որդի Քրդին տէր Անբերդոյ գաւառի անիրաւունք տեսա, որ ճանապարհորդի ձիալախ տաին, մեք ղայս արրան գրեցաք, որ այլ ի Կարբի ճանպորդի ձիալախ չտան։ Կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ եւ հակառակողք պատուհասին եւ նալաթ լինին։ Թվական ՉՂԲ (1343)»40։

Արձանագրությունից պարզ է դառնում, որ 1343 թ. Քուրդ Անբերդցի իշխանը մահացել էր, քանի որ որդին՝ Չրքինը, իրեն Անբերդ գավառի տեր է հայտարարում։ Հայտնի է նաև, որ 1329 թ. Քուրդ իշխանը դեռ կենդանի էր։ Թե երբ է վախճանվել Քուրդ իշխանը, դժվար է ասել։ Արձանագրությունից երևում է նաև, որ Քուրդ Անբերդցուն հաջորդել է որդին՝ Չրքինը։ Վերջինս հայտնի է նաև Հովհաննավանքի մի արձանագրությունից, որտեղ նա իրեն անվանում է Թեոդորոս մականուն Չրքին իշխանաց իշխան։ Դժվար է ասել նաև, թե մինչև երբ է իշխել այս Չրքինը։ Սա մեզ հայտնի վերջին Վաչուտյան իշխանն է, որ իշխել է Անբերդում։ Պետք է ենթադրել, որ Չրքինը իշխել է մինչև Լենկթեմուրի աշխարհավեր արշավանքները, երբ Անբերդը Հայաստանի բազում այլ ամրոցների ու քաղաքների հետ հիմնահատակ կործանվեց և այլևս դադարեց որպես ամրոց գոյություն ունենալուց։ Դրանից հետո սպառվեց նաև Վաչուտյան իշխանական տոհմը։

39 Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 65։

40 Ս. Ավագյան, Նոր ստուգաբանություններ և վերծանություններ վիմական արձանագրություններում, «Լրաբեր», 1969, № 6, էջ 45—46։



Մի քանի արձանագրություններում Վաչուտյանների ներկայացուցիչները՝ Վաչեն, Քուրդը, Չրքինը և մյուսները, իրենց անվանում են իշխանաց իշխաններ։ Այլ արձանագրություններում ուրիշներն են այդ տիտղոսով մեծարում նրանց։ Հատկանշական է, որ իշխանաց իշխան կոչվում են Վաչուտյան տոհմի ավագները, այսինքն՝ առաջին իշխանները՝ սկսած Վաչե Վաչուտյանից, որից հետո այդ տիտղոսը շարունակում են կրել նրա հաջորդները միայն ուղիղ գծով։ Վաչուտյանները ունեցել են նաև իրենց ենթարկյալները՝ հրամանակատարները։ Դրանցից երկուսը հիշատակվում են Հովհաննավանքի կաթողիկե եկեղեցու արձանագրության մեջ. «Աւրնութեամբն Քրիստոսի մեք եղբարքս եւ Գուրգէն, հրամանակատարք Վաչէի, միաբանեցաք սուրբ ուխտիս...»։

Այստեղ հետաքրքիր է, որ հրամանակատարքը օգտագործված է որպես առանձին տերմին, որը կարող է որոշակի պաշտոն նշանակել։ Բոլոր դեպքերում սրանք Վաչեի ծառայողներն են, և պետք է ենթադրել, որ նրանց թիվը քիչ չի եղել։ Նույն կաթողիկե եկեղեցու ներսում կա մի արձանագրություն Վաչեի ծառայական Սարգսի կողմից փորագրված. «Ի յողորմութեանն Քրիստոսի ապաւինեալ, ես, Սարգիս՝ ծառայական Վաչէի, միաբանեցա սուրբ ուխտիս եւ ետու ինչս...»41։

Արագածոտնը Անբերդով Վաչուտյաններին հանձնելը խոսում է այն մասին, որ վերջիններս Զաքարյաններից վասալական կախման մեջ գտնվողներից ամենաազդեցիկն ու հավատարիմն էին։ Անբերդ ամրոցը և, առհասարակ Արագածոտնը, խիստ կարևոր էին Զաքարյանների իշխանության պահպանման գործում։ Ինչպես Բագրատունյաց շրջանում, այնպես էլ այժմ, Արագածոտնը կարևոր ռազմական հենակետ էր երկիրը արևելյան և հարավային կողմերից պաշտպանելու համար։

Զաքարյանների ժամանակ Անբերդի դերը ավելի աճեց։

Պահլավունիների օրոք այն վարչական կենտրոնի դեր չէր կատարում, այլ շատ կարևոր ամրոց էր երկիրը պաշտպանելու գործում, այդ պատճառով էլ հանձնվել էր Պահլավունի իշխանների հսկողությանը։

Վաչուտյանների ժամանակ Անբերդը դարձավ նրանց վարչական կենտրոնը։ Դա մի կողմից բացատրվում էր ֆեոդալական մասնատվածության ավելի ուժեղացմամբ, մյուս կողմից՝ երկրի քաղաքական կյանքի ավելի անհաստատ վիճակով, արտաքին վտանգի անընդհատ աճող սպառնալիքով։ Որքան էլ Զաքարյան իշխանների զենքը հասու էր, այնուամենայնիվ, արտաքին վտանգի սպառնալիքը ստիպում էր նոր ձևավորվող և իրենց գոյությունը դեռ պահպանած իշխանական տներին բնակության մշտական վայր ընտրել լեռնային դժվարագնաց վայրերը։ Սյունիքը, Արագածոտնը, Արցախը, Լոռին դառնում էին իշխանական տների ապահով կենտրոններ։ Արարատյան դաշտավայրը կամաց-կամաց կորցնում էր երկրի կենտրոնի իր դերը։

Անբերդ ամրոցը դարձնելով իրենց վարչական կենտրոնը, Վաչուտյանները ավելի են ամրացնում այն։ Աճող ամրոց-բնակավայրը շրջափակվում է նոր, ավելի ընդարձակ պարիսպներով, որոնք այս անգամ իրենց մեջ են ներառնում ամբողջ հրվանդանը։ Բացի այդ Վաչուտյան տան ներկայացուցիչները լայն շինարարական գործունեություն են ծավալում Տեղերում, Հովհաննավանքում, Կեչառիսում, Սևանում, Հառիճում և այլուր։

41 Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 89։

Վաչուտյան իշխանաց իշխան Վաչեն և Քուրդը ապրում են Անբերդում: Մոնղոլական արշավանքները հրի ու սրի են մատնում ամբողջ Հայաստանը: Անբերդը խիստ դիմադրություն է ցույց տալիս, սակայն մոնղոլները ի վերջո գրավում են այն և ավերում: Այս ժամանակվանից մինչև XIII դ. վերջը Վաչուտյանները ստիպված էին թողնել Անբերդը և իրենց վարչական կենտրոնը հաստատել Արայի լեռան դիմաց գտնվող Վարդենիս գյուղում:

Սելջուկյան տիրապետությունից ազատագրվելուց մինչև մոնղոլական արշավանքների սկիզբը Վաչուտյանների և Անբերդ բնակավայրի ծաղկման շրջանն է:

Բնական է, որ մոնղոլները ամեն կերպ աշխատում էին ոչնչացնել երկրի՝ ռազմական տեսակետից կարևոր կետերը: Նրանք թույլ չէին տալիս, որ հայ իշխանները հաստատվեն անառիկ վայրերում: Այդ էր պատճառը, որ չնայած 1250 թ. Վաչուտյան իշխանները մոնղոլներից արդեն ետ էին ստացել երկրի իշխանությունը, սակայն առայժմ Անբերդում բնակվել չէին կարող: 1280-ական թվականներից Վաչուտյան Քուրդ իշխանին վերջապես հաջողվում է հաստատվել Անբերդում և այս ժամանակվանից սկսած այն նորից դառնում է Վաչուտյանների վարչական կենտրոնը: Անբերդը Վաչուտյանների մշտական նստոց ու վարչական կենտրոն մնաց մինչև Լենկթեմուրի արշավանքները և Վաչուտյանների անհետանալը պատմությունից:

Վիմական արձանագրությունների համաձայն, Վաչուտյանները հանդես են գալիս որպես Արագածոտնի վերակացուներ կամ կողմնակալներ: Մեզ թվում է, որ այս երկու տերմիններն էլ միևնույն նշանակությունն ունեն: Վաչուտյանները գավառի վերակացությունն ստացել են Զաքարյաններից, որոնցից էլ նրանք վասալական կախման մեջ էին: Վերակացությունը, մեր կարծիքով, վարչական ու զինվորական պաշտոն էր, որ Զաքարյանները շնորհում էին առանձին գավառները կառավարելու համար: Գավառի վերակացուն պատասխանատու էր կարգավորելու տվյալ գավառի հարկերի կանոնավոր հավաքումը, բերդերը կարգին վիճակում պահելը և կարիքի դեպքում ռազմական ուժեր հավաքելն ու Զաքարյանների տրամադրության տակ դնելը: Բնական է, որ պատերազմի դեպքում տվյալ գավառի ռազմական ուժերը առաջնորդելու էր գավառի վերակացուն, որը կոչվում էր նաև իշխանաց իշխան: Գավառի (կոնկրետ՝ Անբերդ գավառի) վերակացուն կամ կողմնակալը նշանակվում էր Զաքարյան իշխանների կողմից, որոնց առաջ նա պատասխանատու էր:

Սաղմոսավանքի մի արձանագրությունից երևում է, որ Վաչուտյանները իրենց տիրապետության տակ գտնվող գյուղերը վանքերին նվիրելու համար պետք է ունենային Զաքարյանների թույլտվությունը[42]:

Սաղմոսավանքի մի այլ արձանագրությունից իմանում ենք, որ Վաչուտյաններն ամբողջ Անբերդ գավառի նկատմամբ սեփականատիրական իրավունքներ չունեին, որ գավառը, որպես սեփականություն, պատկանում էր Զաքարյան իշխաններին, որոնցից էլ մեծ գումարով Վաչուտյանները գնում են Աղկունց գյուղը և նվիրում Սաղմոսավանքին: «Շնորհաւք բարերարին Աստուծոյ ես Վաչէ որդի Քրդին որդո Վաչէի եւ Տաւրխուշահի դստեր Մարզպանա Մամիկոնէից գնեցի զԾրերունս ի մեծ պարոնէն Շահնշահէ եւ ետու ի վանս Սաղմոսի, եւ զկէսն իմ եղբաւրն Հասանա որ չէն պահէ վանիցս համար, և յորժամ եհաս ինձ փոխիլ ի կենցաղոյս տարաժամ և կէս աւուրց յանձնեցի

42 Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 58:



զհոգիս իմ և զզոյս հաւր և մաւր իմո և գնեցին յինչից իմոց ԺԹ սպիտակի ղաղկունց յԻւանէէ յորդո Շահնշահի որ է սեհպական տէր գաւառիս Անբերդո զոր առաջ պապն իմ Վաչէ գնել էր ի մեծ ապարապետէն Զաքարէէ և գրել ի դուռն եկեղեցւոյս զոր խափանել էր ի չար պատահմանց եկեղ ի վերա աշխարհիս դարձեալ վերստին գնեցաք և գրեցաք զի որ զանձայգին յԱւշական և զտունն տորոզոնոնց ի Կարբի իւր հայրենիքն ետուն յիմքն արնասեւ գրեցաւ...»[43]:

Նման տեղեկություններ վիմական արձանագրությունների մեջ շատ կան: Նույնիսկ Զաքարյան իշխանները իրենց տիրապետության տակ գտնվող ոչ բոլոր կալվածքների նկատմամբ է, որ ունեին սեփականատիրական իրավունք: Այսպես, Հաղպատի մի արձանագրության մեջ Զաքարե Ամիրսպասալարը հաղորդում է, որ Շոթոռկա որդի Դավթին տալիս է Աղկունցի երկու գյուղերը՝ որպես հայրենիք և փոխարենը Հաղպատին ավելի մոտ գյուղեր է վերցնում վանքին նվիրելու համար[44]: Այստեղ միայն փոխանակություն է կատարվում, բայց միանգամայն պարզ է, որ նույնիսկ Զաքարյան իշխանների հայրենիքը (կալվածքը) նույնպես սահմանափակ էր և նրանք հայոց մյուս իշխանների հայրենիքը վերցնելու իրավունք չունեին:

Այսպիսով, Վաչուտյանները Արագածոտնի նկատմամբ ունեին միայն տիրակալական իրավունք, իսկ ամբողջ գավառի նկատմամբ սեփականատիրական իրավունքը պատկանում էր Զաքարյան իշխաններին: Վաչուտյան իշխանները, սկսած Վաչե Վաչուտյանից մինչև պատմական ասպարեզից իրենց դուրս գալը, մնացին Անբերդ գավառի տերեր:

Անբերդում, ինչպես նաև դրանից դուրս, Վաչուտյաններն ունեին իրենց հայրենի կալվածքները: Անբերդը նրանց վարչական կենտրոնն էր, ինչպես նաև ամբողջ գավառի կենտրոնը, որի անունով էլ միջին դարերում կոչվում էր գավառը: Երբեմն էլ, մանավանդ XIV դ., Անբերդի գավառ ասելով հասկանում էին ամբողջ Արարատյան գավառը:

Վաչուտյանների մշակութային կենտրոններն էին Սաղմոսավանքը, Հովհաննավանքը, Տեղերի վանքը և այլն:

43 Շահխաթունեանց, նշվ. աշխ., հ. II, էջ 123:

44 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ (արձ. № 37):

### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԱՆԲԵՐԴԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

*Անբերդ ամրոցը պաշտպանական հզոր ու ամբողջական միավոր է (գծ. 1)։ Կառուցված է անդնդախոր ձորերի միախառնումից առաջացած՝ բնականորեն լավ պաշտպանված հրվանդանի վրա, որի մի մասը, հատկապես հարավ-արևմտյան կողմում, եզերված է անմատչելի ժայռերով։ Բնականորեն քիչ պաշտպանված մասերում կառուցված են պարիսպներ, իսկ առավել խոցելի և պատասխանատու հատվածներում պարիսպները հագեցված են աշտարակներով կամ բուրգերով (նկ. 2, 3, 4)։ Հրվանդանի հիմքի վրա կառուցված է միջնաբերդը կամ պալատը, որը անջատում է ամրոցը հրվանդանի մնացած տարածությունից (նկ. 5, 6)։*

*Ամրոցն ունի կառուցողական երեք շրջան։ Առաջին շրջանը, որ մենք վերագրում ենք Բագրատունիների ժամանակներին, հարատևել է մինչև Զաքարյանների տիրապետությունը և իր մեջ ընդգրկում է հրվանդանի մեծ մասը (ունի երկու մուտք՝ մեկը Անբերդաձորի, մյուսը՝ Արխաշանի ձորի կողմից)։*

*Երկրորդ շրջանը՝ Զաքարյանների կողմից Անբերդը ազատագրելուց մինչև մոնղոլական արշավանքները, իր մեջ ընդգրկում է հրվանդանի ամբողջ տարածությունը։ Արխաշանի ձորի կողմից բացվում է նոր դարբաս, իսկ Անբերդաձորի դարբասը ավելի հզորացնելու նպատակով կրկնակի է դարձվում։ Միջնաբերդի արտաքին կողմից կառուցվում են նոր բուրգեր, Անբերդաձորի պարիսպը իջնում է ներքև՝ ամրոցի պաշտպանությունը ավելի հուսալի դարձնելու համար։*

*Երրորդ շրջանը ամփոփում է XIII դ. վերջերից մինչև Անբերդի՝ որպես ամրոցի վերջնական կործանումը։ Արխաշանի նոր պարսպից սկսած ամրոցի լայնքով կառուցվում է նոր պարիսպ, և այս անգամ ամրոցը ամփոփվում է միջնաբերդի և նրան հարող փոքր տարածության սահմաններում[1]։*

*Նպատակահարմար ենք համարում տալ ամրոցի կառուցողական առաջին շրջանի նկարագրությունը և վերլուծությունը, իսկ հետագա ժամանակաշրջան-*

---

[1] *Թերևս մի առանձին շրջան է այն ժամանակը, երբ Լենկթեմուրի արշավանքների հետևանքով Անբերդը լրիվ կործանվում է և դադարում որպես ամրոց գոյություն ունենալուց։ Նրա համեմատաբար ապահով դիրքը XVI—XVII դդ. իժնդակ ժամանակներում դեպի իրեն է ձգում թալանված ու անպաշտպան ժողովրդին։ Դա այնպիսի մի ժամանակաշրջան էր, երբ ամրոցը ոչ թե կառուցվում, այլ քանդվում էր, որտեղ բնակություն հաստատած ահաբեկված ժողովուրդն այլևս ի վիճակի չէր գիտակցելու ամրոցի ամբողջության ու միասնության գաղափարը։ Սեփական բնակարաններ կառուցելու համար քանդվում և տարվում էին ամրոցապատերի քարերը, ճանապարհները բացվում էին պարիսպների վրայով, ուր ինչպես հարմար էր։ Պարիսպների մեջ տեղադրվում էին բնակիչների օժանդակ կառույցները։*






Գծ. 1. Ամրոցի ընդհանուր հատակագիծը։

*ների համար՝ կրած փոփոխությունները ու դրանց հետևանքով առաջացած պաշտպանական նոր սկզբունքների գնահատականը։*

*Ինչպես նշել ենք, հրվանդանի հիմքի վրա տեղադրված է միջնաբերդը, որից արևմուտք Անբերդաձորի մուտքն է։ Այստեղից պարիսպն իջնում է ներքև և մոտ 40 մ ձգվելուց հետո ուղիղ անկյան տակ թեքվում է հարավ և շարունակվելով, միանում է ժայռերին։ Սրանց անանցանելիության պատճառով այս մասում արհեստական պարիսպներ կառուցելու կարիք չի զգացվել։ Պարիսպները նորից շարունակվում են հրվանդանի հարավ-արևելյան ծայրից, ուր տեղանքը, ճիշտ է, ժայռոտ է, սակայն ոչ բավարար չափով անառիկ։ Այդ է պատճառը, որ այստեղ պարիսպներ են կառուցվել, սակայն բուրգերով չեն հագեցվել։ Փոքր-ինչ շարունակվելով, պարիսպը սուր անկյան տակ թեքվում է դեպի հյուսիս, և ձգվելով, հասնում միջնաբերդին՝ վերջինիս հետ կազմելով հատակագծային ամբողջություն։*

*Պարսպի հյուսիսարևելյան մասը ամրոցի ամենախոցելի տեղերից է։ Այդ է պատճառը, որ այստեղ այն հագեցված է խիտ առ խիտ տեղադրված բուրգերով։ Այս մասում պարիսպը բաժանված է երեք հատվածի, որոնցից յուրաքանչյուրը պաշտպանական մի ամբողջություն է։ Ամեն մի հատվածում տեղադրված են պաշտպանական կիսակլոր բուրգեր, որոնք դասավորված են այն հաշվով, որ պաշտպանության ժամանակ հնարավոր լինի առավել արդյունավետ փոխգործողության մեջ մտնել։ Օրինակ, առաջին հատվածի (ամենահարավային ծայրի բուրգը պայմանականորեն դիտենք իբրև I) I և IV բուրգերը դուրս են շեշտված, իսկ II-ն ու III-ը ներս են քաշված, այնպես որ չորս բուրգերն էլ իրար նկատմամբ տեսողական կապի մեջ են։ Այս հանգամանքը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում ոչ միայն երկու, այլև երեք և չորս բուրգերի համատեղ հարվածը կենտրոնացնել բուրգերից ամեն մեկի վրա առանձին-առանձին։*

*Հայտնի է, որ աշտարակները կամ բուրգերը կառուցվում էին ակտիվ պաշտպանություն և, որ կարևորն է, կողային կամ անկյունային հարվածի հնարավորություն ստեղծելու համար։ Բուրգերի դասավորության վերոհիշյալ համակարգը հնարավորություն է տալիս հարվածելու թշնամուն ոչ միայն կողքից կամ թևից, այլև թիկունքից։ Այդ բանը իրացվում էր մեջտեղի բուրգերը եզրայինների նկատմամբ բավական ներս դասավորելու շնորհիվ։ Օրինակ, II բուրգի վրա հարձակվող թշնամին իր վրա կրելու էր ոչ միայն մյուս երեք բուրգերի հարվածները, այլև այդ բուրգին մոտենալու դեպքում հարվածներ էր ընդունելու նաև թիկունքից։ Այստեղ շատ կարևոր է, անշուշտ, հեռվից հարվածելու հնարավորությունը։ Այս հատվածում երկու բուրգերի միջև ընկած տարածության առավելագույնը մոտ 30 մ է, ամենաքիչը՝ 22, I և II բուրգերի միջև՝ 65 մ, իսկ I և IV-ի միջև՝ 90 մ։ Իհարկե, ինչքան տարածությունը փոքր է, այնքան նետերի հարվածները դիպուկ են ու նպատակային։ Այս տեսակետից ավելի հարմար տարածություն ունեն հարևան բուրգերը, իսկ I և IV բուրգերի համար, որոնք իրարից հեռու են 90 մ, հարվածի դիպուկությունը փոքր-ինչ նվազում է։ Սակայն այստեղ պետք է հաշվի առնել այն, որ բարձր բուրգերի և աշտարակների վրա կանգնած զինվորների դիրքն ավելի հարմար էր, քան ներքևից շարժվող թշնամունը։ Այնպես որ, եթե թշնամին ոչ ավելի, քան 50 մետրից կարող էր հարվածել բուրգի պաշտպաններին, ապա վերջիններս նույն բանը հաջողությամբ կարող էին անել 80—90 մ հեռավորությունից։ Այս*



*հանգամանքը նույնպես խոշոր դեր է կատարել ամրոցաշինական սկզբունքները մշակելու գործում։ Այդ է պատճառը, որ Անբերդի շինարարները փոխգործողություն են մշակել մոտ 100 մ տարածության համար։*

*Հետաքրքիր է նշել, որ II հատվածը, որ մենք անվանում ենք II քառյակ, իր սկզբունքներով խիստ նման է առաջինին։ Այստեղ նույնպես եզրային բուրգերը առաջ են մղված, և փոխգործողությունը լրիվ ապահովված է բոլոր բուրգերի միջև։ Սակայն, եթե առաջին հատվածի բուրգերի փոխգործողությունը հնարավոր էր ստանալ պարիսպը առաջ կամ ետ մղելու շնորհիվ, ապա այստեղ դա իրագործելի չի եղել։ Խանգարել է տեղանքը։ Այդ պատճառով ստիպված են եղել բուրգերի չափերի մեջ փոփոխություն մտցնելով ստանալ համարյա նույն արդյունքը։ Այսպես, եթե այս հատվածի I բուրգի (գծ. 1) երկարությունը կամ շառավիղը 4 մ է, իսկ IV-ինը, այսինքն մյուս ծայրինը՝ 5 մ, ապա մեջտեղի II բուրգինը 3 մ է, իսկ III-ինը՝ 2,5։ Ինչպես պարզ երևում է գծագրից, այս չափերը կամայական չեն և ելնում են յուրաքանչյուր բուրգի տեղադրությունից, նրան հատկացված դերից։ Նույն կերպ է բացատրվում նաև բուրգերի տարբեր լայնությունը կամ մեծությունը, նրանց աղեղնաձևությունը, ձվաձևությունը։*

*Երրորդ հատվածը, որի առաջին բուրգը II հատվածի վերջինն է, նույն սկզբունքով է կառուցված, այն տարբերությամբ միայն, որ սրա IV բուրգի դերը կատարում է միջնաբերդի արևելյան մասը, որի վերևի հարթակում պետք է տեղադրված լիներ պաշտպանական հզոր համակարգ։ Հետագայում, Վաչուտյանների շրջանում, այս մասը վերակառուցվել է և դժվար է նախկին ձևը վերականգնել։ Այստեղ կառուցված նոր սենյակը և քիչ ներքև ավելացված նոր դարբասը խախտել են այդ սկզբունքը։ Հյուսիսային մասում պահպանվել են պալատի հզոր աշտարակները։ Այս հատվածում յուրաքանչյուր հաջորդ բուրգը նախորդի նկատմամբ ավելի բարձր դիրք ունի, որը առավել արդյունավետ է դարձնում հաջորդ կամ նրանից ավելի բարձր դիրք ունեցող բուրգերի օգնությունը իրենցից ցածր դիրք ունեցողների նկատմամբ։ Այս հանգամանքը պետք է բացատրել բուրգերի ներքև թեքվածությամբ։*

*Այս առանձին հատվածները կամ քառյակները նույնպես իրար նկատմամբ ունեն տեսողական կապ, որն իրագործված է յուրաքանչյուր հատվածի IV բուրգի միջոցով, այնպես որ, եթե ուղիղ գիծ անցկացնենք ամբողջ հյուսիս-արևելյան հատվածով, ապա բոլոր երեք հատվածների IV բուրգերը կգտնվեն մի գծի վրա։*

*Հայ բերդաշինության այս սկզբունքը միայն Անբերդում չէ, որ կիրառված է։ Այն առկա է կիլիկյան ամրոցներում, Գառնիում, Անիում և այլուր։ Մի բան միանգամայն պարզ է, որ ամրոցաշինության այս սկզբունքը առաջացել և զարգացել է Հայկական լեռնաշխարհում։*

*Հռոմեացիները ուղղաձիգ պարիսպների կողմնակից էին։ Նրանք ձգտում էին ամրոցներին տալ քառանկյունու տեսք, և ինչպես հռոմեացի մասնագետներն էլ նշում են, ամրոցի իդեալական ձևը համարվում էր կանոնավոր քառանկյունին, որի անկյուններում տեղադրվում էին բուրգերը։ Հայաստանը, որը ավելի շատ էր ստիպված դիմելու ամրոցների պաշտպանությանը, մշակել ու զարգացրել էր բերդաշինության ուրույն սկզբունքները, որոնցից մեկն էլ պարսպապատի և բուրգերի վերոհիշյալ դասավորությունն է։*

*Հետաքրքիր է նշել, որ Անիում, որը միջնադարյան ամրոցաշինության գլուխգործոցներից է, ուղիղ պատկերը տարված են ոչ թե ուղիղ և հարթ մասերում, ինչպես սպասելի էր, այլ այն տեղերում, ուր տեղանքը թեք է և կոտ-*

գծեր է առաջացնում։ Օրինակ, ուղիղ պատկեր են տարված քաղաքի պարսպի հարավարևելյան և հարավարևմտյան մասերում, իսկ հյուսիսային հատվածում, որտեղ տեղանքը անհամեմատ ավելի հարթ է և ուղիղ պատ կառուցելու ամենանպաստավոր պայմաններն ունի, պարիսպը շատ տեղերում, այսպես ասած, կոտրված կամ բեկված է, որի պատճառով մեկ, երկու կամ ավելի բուրգեր ներս են քաշված, իսկ առանձին բուրգեր մղված են դեպի դուրս։ Սա նույնպես արված է վերոհիշյալ սկզբունքին համապատասխան, քանի որ ավելի թեք տեղերում պաշտպանություն իրագործելը ավելի հեշտ էր, իսկ հարթ տեղերում անհրաժեշտ էր ապահովել մի քանի բուրգերի սերտ համագործակցություն։

Կասկածից վեր է, որ Անբերդի կայազորը ուներ թե՛ իր գլխավոր հրամանատարը և թե՛ առանձին մասերի հրամանատարներ և բաղկացած էր ստորաբաժանումներից, որոնք առանձին կարգով և քանակով միանալով, տալիս էին կուռ ռազմական կազմակերպություն։ Նման ստորաբաժանումը, որ ելնում էր ամրոցի պաշտպանության նպատակահարմարությունից, անպայման կապված պետք է լիներ հայոց զորքի ստորաբաժանման սկզբունքների հետ։ Մեր մատենագիրների մոտ պահպանված տասնյակ, հիսնյակ, հարյուրակ և, համապատասխանաբար, տասնապետ, հիսնապետ և հարյուրապետ արտահայտությունների մեջ պետք է փնտրել այս հարցի հետագա ճշգրտումը։

Կառուցողական II շրջանում ամրոցը իր մեջ է առել ամրողջ հրվանդանը, որի համար հարկ է եղել նոր պարիսպներ կառուցել։ Ամրոցի հարավային և արևմտյան մասերում ստացվել են կրկնակի պարիսպներ, որոնք ավելի են դժվարացրել թշնամու մուտքը, իսկ Անբերդածորի դարբասը ստացել է կրկնակի մուտք։

Առանձնապես հետաքրքիր է ամրոցի արևմտյան մասի՝ դեպի Անբերդաձոր իջնող պատը։ Բագրատունյաց շրջանում այս մասում ամբողջ Անբերդաձորի երկարությամբ կառուցված էին պարիսպներ, սակայն սրանցից ընդամենը 50—60 մ հեռու, դեպի գետը, անանցանելի ժայռեր են։ Ինչպես վերը նշել ենք, կառուցողական առաջին շրջանում միջնաբերդից դեպի ձորը 40 մ իջնելուց հետո պարիսպը ուղիղ անկյան տակ թեքվում է հարավ։ XII—XIII դդ. Անբերդի պաշտպանները դեպի ձորը իջնող պատը շարունակում են և հասցնում վերոհիշյալ ժայռերին, որոնք միայն մի տեղ ունեն խոցելի, ուր և կառուցվում են 20 մ երկարությամբ պարիսպներ՝ պաշտպանական ամբողջություն ստեղծելով դեպի Անբերդաձորը իջնող պարիսպների և անմատչելի ժայռերի միջև։ Պարիսպը հագեցված է բոլորաձև մեծ բուրգերով։ Նման մի բուրգով էլ պարսպի այս հատվածը վերջանում է արևմտյան ծայրում՝ ժայռի գլխին։ Եթե արևելյան պարիսպների համար Անբերդի պաշտպանները հարթության մեջ բուրգերից երկուսը ներս, իսկ ծայրերի երկուսը դուրս մղելով ստացել են 4 աշտարակների փոխգործողություն, ապա այս մասում տեղանքի խիստ թեքության պատճառով աշտարակների միջև փոխգործողությունը իրականացրել են դրանք տարբեր բարձրությունների վրա տեղադրելով։ Հասկանալի է, որ այս դեպքում վերևի աշտարակները ավելի լավ կարող էին կատարել այդ դերը ներքևինների նկատմամբ, քան հակառակը, որ ավելի դժվար էր։ Այդ պատճառով աշտարակների կիսաշրջանները իրենց հիմքով պարսպի ուղղությամբ ուղիղ չեն ընկած, այլ թեքված են դեպի ներքև։ Սա արված է այն պատճառով, որ թշնամին վերև էր բարձրանում ներքևից և ոչ թե դիմացից։



Արդեն նշել ենք, որ արևելյան պարսպի մեջ այս շրջանում բացվել է նոր մուտք՝ Արխաշանի նոր դարբասը (նկ. 7, 8)։ Դարբասն ամրոցի ամենախոցելի տեղն է։ Այդ է պատճառը, որ ամրոցներն աշխատում են դարբասների քանակը նվազագույնի հասցնել։ Արխաշանի դարբասի բացումը մենք համարում ենք այդ շրջանում Անբերդի հզորության լավագույն ապացույցներից մեկը։

Դարբասը բացելու կապակցությամբ պարսպի մասում պատը կտրել են։ 1964 թ. պեղումներով հնարավոր եղավ այստեղ բացել մուտքի արևելյան կողմը։ Դարբասը ավելի ամուր դարձնելու նպատակով՝ այս մուտքից մոտ 15 մ դեպի դուրս կառուցել են կրկնակի դարբասի II մուտքը։ Հետաքրքիր կառուցվածք ունի սրա արտաքին կողմը։ Երկու կողմից դարբասի մուտքը պաշտպանված է 3 մետրանոց առաջ մղված պատերով, որոնք քառանկյունի աշտարակների դեր են կատարում (գծ. 2)։ Սրանք երկու կողմից մուտքը այնպես են պաշտպանում, որ դարբասին հարվածելու համար թշնամին պետք է գտնվեր նրա ուղիղ դիմացը։ Այստեղ ուշագրավ է այն, որ աջ կողմի պատը ավելի է առաջ քաշված, քան ձախը։ Սա նույնպես հետապնդել է պաշտպանական նպատակներ։



Գծ. 2. Արխաշանի դարբասը։

Հետաքրքիր է նաև ճանապարհի դիրքը դարպասի և պարսպի նկատմամբ։ Հայտնի է, որ զինվորը աջ ձեռքով բռնում էր զենքը, իսկ ձախով վահանը, այսպիսով անպաշտպան թողնելով աջ ուսը։ Ամրոցաշինարարները ճանապարհները կառուցում էին նկատի ունենալով այս հանգամանքը և[2]։ Անբերդի այս

[2] Այս տեսակետից խիստ ուշագրավ է Անիի երկշարք պարիսպների մուտքերի դասավորությունը։ Առաջին պարսպից ներս թափանցելով, թշնամին ուղիղ իր դիմացը չէր գտնում երկրորդ պարսպի մուտքը, այլ ձախ կողմում, ուր հասնելու համար նա պետք է շարժվեր աջ՝ անպաշտպան ուսը մշտապես երկրորդ պարսպի հարվածի տակ ունենալով։

ճանապարհը դեռ ներքևում ունի մի երկար հատված, որտեղով բարձրանալիս թշնամին անպաշտպան աջ ուսով գտնվելու էր միջնաբերդի և պարսպի այս մասի հարվածի տակ։ Հենց այս պատճառով էլ ճանապարհի դարձման համար, որտեղ թշնամին գտնվելու էր պաշտպանված ձախ ուսով, արված է ամենակարճ ճանապարհահատվածը։ Իսկ դրանից հետո, երբ թշնամին ընդհուպ մոտենալու դարբասին, նրա անպաշտպան աջ ուսը ընկնելու էր թե՛ միջնաբերդի ու բուրգերի և թե՛ դարբասի պաշտպանների նետերի տարափի տակ։ Այդ բանին Անբերդի կառուցողները հասել են դարբասը ուղղելով դեպի հյուսիս-արևմուտք, գրեթե արևելյան պարսպի ուղղությամբ։ Նման արդյունք չէր ստացվի, եթե դարբասը բացված լիներ պարսպի ուղիղ դիմացը։

Նույն նկատառումներով է, որ դարբասի արտաքին կողմից աջ պատը ավելի է առաջ մղված։



Գծ. 3. Անբերդաձորի նոր մուտքը։

Մուտքն ունի 2 մ բացվածք, երկկենտրոն աղեղներով կառուցված կամար։ Սրանից ներքև արված է ուրիշ կամար, որի մասին Թորամանյանը գրում է. «Բերդի մտից դրան կամարը հիշեցնում է Անիի Սմբատաշեն պարսպի վրա ավագ դրան և Տեկորի եկեղեցիի ներքին կողմի նորոգության ժամանակ



վերաշինված կամարները, որոնք ատամնավոր տաշված են և շարվելիս միմյանց մեջ կանցվին ու մեկս մեկ կպահեն»[3]։

Սակայն II շրջանի ամենանշանակալից կառույցը Անբերդաձորի դարբասի կրկնակի II մուտքն է՝ ուղղանկյուն աշտարակով (գծ. 3)։ Սա նախկին դարբասից (նկ. 9) մոտ 30 մ դեպի հյուսիս է գտնվում և արևմտյան կողմից պարսպով ու բոլորաձև բուրգերով միանում է հին դարբասին՝ պաշտպանության տակ առնելով այն (նկ. 19)։ Մյուս՝ արևելյան կողմից, պարիսպը շարունակվում է դեպի միջնաբերդի հյուսիսային մասը և վերջինիս հետ միանում է նրա դոնակից հյուսիս՝ իր մեջ ամփոփելով նաև այս դոնակը։

Սա մի ամուր պաշտպանական միջոցառում էր, որտեղից մտնելով միայն թշնամին կարող էր անցնել դոնակով ու հին դարբասով։ Իր կառուցվածքով նման է Արխաշանի դարբասին։ Վերջինիս նման սա էլ երկկենտրոն կամար ունի, պաշտպանված է մի կողմից քառանկյունի աշտարակով (նկ. 11), մյուս կողմից պարսպով, որոնք երկուսն էլ առաջ են մղված այն հաշվով, որ մուտքին հարվածելիս թշնամին գտնվեր դարբասի ուղիղ դիմացը։ Այս աշտարակի մուտքի վրա կա աշտարակաձև մի շինություն, որն այժմ հիմնականում քանդված է, սակայն պահպանված մասն էլ թույլ է տալիս եզրակացնելու, որ այն կառուցված է եղել դարբասը պաշտպանելու համար։ Այս շինության արտաքին պատի վրա բացված է երկու ակնատ, որոնք դեպի դուրս նեղ են (50 սմ լայնություն և 15 սմ բարձրություն), իսկ դեպի ներս լայնանում են այնպես, որ այդ ակնատներից յուրաքանչյուրի մոտ կարող էր կանգնել մեկական զինվոր և նետերով հարվածել դարբասի առջևի հրապարակին՝ հուսալի պատսպարված լինելով շինության պատերի հետևում։

Դարբասը արևմտյան կողմից պաշտպանված է ուղղանկյուն աշտարակով։ Ինչպես երևում է գծագրից (գծ. 3), աշտարակի դիրքը մուտքի նկատմամբ թեք է, և այդ պատճառով աշտարակի մուտքին հարող անկյունը կտրված է։ Սա նույնպես պատահական չէ։ Նախ՝ դա արված է աշտարակի լայն մասին ճանապարհի նկատմամբ հարմար դիրք տալու և ապա՝ մուտքը ավելի լավ պաշտպանելու համար։ Նման դիրքը մի կողմից նեղացնում էր դարբասի վրա հարվածելու տարածությունը, մյուս կողմից թողնում այնքան տարածություն, որքան հնարավորություն ունեին պաշտպանելու դարբասի վրա բացված ակնատների մոտ գտնվող զինվորները։ Հատկանշական է, որ մուտքի ձախակողմյան պատը, որը փաստորեն երկրորդ աշտարակի դեր է կատարում, դրված է ճիշտ նույն անկյան տակ, ինչ աշտարակի այս պատը։

Մուտքի աջ կողմի աշտարակին պատկանող պատը առաջ է մղված մոտ կես մետրով։ Նման բան մենք տեսանք նաև Արխաշանի դարբասի օրինակով, այն տարբերությամբ, որ այստեղ դա ավելի շեշտված է։ Բացի այդ, ուշադրության է արժանի այն փաստը, որ միակ աշտարակը այստեղ դրված է աջ կողմից։ Սա նույնպես կապված է ճանապարհի պաշտպանության հետ։ Թշնամին բարձրանալով դեպի մուտքը, իր աջ ուսով գտնվելու էր այս հզոր աշտարակի հարվածի տակ։

Աշտարակն ունի երեք հարկ, եթե հաշվելու լինենք նաև լիքը՝ առաջին հարկը, որը միայն պասիվ պաշտպանության համար է։ Սրա վրա բարձրանում է II հարկը, որն արդեն իսկական աշտարակ է։ Սրա մուտքը բացվում է ներսի

[3] Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 114։

մից ամրացվել է նոր, ավելի հզոր պարսպով։ Վերջինս ունի բոլորաձև բուրգեր։ Սրանք լիքն են, և միայն վերևի հարթակներն են հարմարեցված եղել ակտիվ պաշտպանության։ Դրա փոխարեն այս բուրգերն ավելի զանգվածային և քիչ խոցելի են։ Պարիսպը դրված է ժայռի վրա։ Պարսպից դուրս ժայռը մոտ 10 մ լայնությամբ կտրված է։ Հավանաբար, ժայռը կտրելով՝ քարերն օգտագործել են պարսպի շինարարության համար։ Միաժամանակ, այստեղ ստացվել է արհեստական խոր և երկար փոս, որի առկայությունը անհնար էր դարձնում բաբանների կամ այլ պաշարողական մեքենաների օգտագործումը թշնամու կողմից։ Թշնամին հանդիպակաց ժայռից միայն նետ ու աղեղով կարող էր հարվածել Անբերդի միջնաբերդի պաշտպաններին։ Արհեստական այդ փոսը խիստ դժվարացնում էր նաև թշնամու ընդհուպ մոտեցումը միջնաբերդին։

Առաջին փուլում միջնաբերդը կառուցված է եղել բազալտե մշակված քարերից՝ ամուր կրաշաղախով, քարերը մեկը մյուսին կից չեն մոտենում և անկյուններում մեծ մասամբ կլոր են. քարերի միացման տեղերը կրաշաղախով սվաղված են։ Այս շրջանում միջնաբերդի միակ մուտքը եղել է հարավային կողմից՝ ամրոցի միջից, որտեղ մտնելու համար հարկավոր էր Ամբերդաձորի դարպասով անցնել ամրոց և ապա այս դռնով՝ միջնաբերդ։ Մուտքը փոքր է, որը հուսալի կերպով պաշտպանվում է իր առանցքի շուրջը պտտվող բազալտե դռնով (նկ. 18)։ Վերջինս ներսից ամրացված է հաստ գերաններով, որոնք մտնում են պատի վրա արված հատուկ փոսերի մեջ։ Նման քարե դռներ կան պահպանված Փարպիում, Փաթրինջում, Սյունիքի հուշարձաններում և այլուր։ Մուտքի քարե աստիճանները տանում են դեպի երկար միջանցքը, որը գտնվում է միջնաբերդի հյուսիսային մասում։ Այս միջանցքից կարելի է մտնել բոլոր հինգ սենյակները։ Հավանաբար, այստեղից մուտք է եղել նաև վերին հարկերը։

Կառուցողական երկրորդ փուլում բացվում է նաև երկրորդ մուտքը՝ հյուսիս-արևմտյան անկյունից (նկ. 19)։ Սա նույնպես փոքր է՝ 1,7 մ բարձրությամբ և 0,9 մ լայնությամբ։ Այն, հավանաբար, փակվել է երկաթապատ դռնով և հետևից ամրացվել գերաններով, ինչպես մյուս մուտքինն էր։ Այս մուտքը շատ նեղ ու երկար միջանցքով տանում է նոր և հին պատերի միջև ընկած տարածությունը։ Այստեղից քարե աստիճանները (նկ. 20) նորակառույց պատի ներսի երեսից տանում են այդ պատի կատարը, որտեղ, ինչպես արդեն նշել ենք, գտնվում էր ակտիվ պաշտպանության համար կառուցված հարթակը։ Մուտքից ներս՝ հին և նոր պատերի միջև, ստացվել է բավական ընդարձակ մի տարածություն (նկ. 21)։ Սրա առկայությունը պատահական չէ. հակառակ դեպքում նոր պատը կկցվեր հնին։ Մեր կարծիքով այդ մակերեսի ներքևի հարկերը օգտագործվել են որպես մթերքի և զենքի պահեստներ, իսկ վերևինները՝ որպես զորանոց։ Վերոհիշյալ մուտքը պաշտպանված է XIII դ. կառուցված պարսպով։ Նման միջոցառումը խիստ դժվարացնում էր նոր մուտքի գրավումը թշնամու կողմից։ Մեր կարծիքով, այս մուտքը և XIII դ. այս մասի պարիսպը կառուցված են միաժամանակ։ Այս մուտքը հնարավորություն էր տալիս ամրոցի պաշտպաններին ուղղակի կապ ստեղծելու միջնաբերդի և ամրոցի մյուս պաշտպանական սիստեմների միջև։ Ամրոցականները անհրաժեշտության դեպքում այս մուտքով շատ արագ կարող էին լրացուցիչ ուժեր տեղափոխել միջնաբերդ կամ հակառակը։

Միջնաբերդը պատուհաններ ունի միայն հարավային՝ դեպի ամրոցը նայող կողմից (նկ. 22)։ Սա երկու առավելություն ուներ։ Նախ՝ պատուհանները



պաշտպանված էին ամրոցով և բացված լինելով դեպի հարավարևելք, այսինքն՝ արևահայաց լինելով, ավելի շատ լույս ու ջերմություն կարող էին ստանալ։ Ձմռանը, որ Անբերդի նման բարձրադիր վայրի համար ջերմությունը խիստ անհրաժեշտ էր։ Պատուհանի բացվածքները ներքևի հարկում նեղ են, իսկ վերևի հարկերում՝ ավելի լայն։ Սա նույնպես կապված էր միջնաբերդի պաշտպանության ապահովման հետ։ Բացվածքներն ունեն նեղ ու երկար ակոսներ, որոնց լայնությունը 2—3 սմ է։ Բացի այդ, բացվածքի ներքևից ու վերևից կան կլոր խորը փոսիկներ։ Այս ակոսները փայտե շրջանակների համար շատ նեղ են (նկ. 24)։ Ուստի, ինչպես ենթադրում է Ն. Տոկարսկին, բացվածքները փակվել են երկաթե ցանցերի միջոցով, որոնք և ամրացվել են երկաթե ձողերով[8]։

Վաչուտյանները Անբերդը ստանալով Զաքարյաններից, դարձրին իրենց վարչական կենտրոնը՝ միջնաբերդը վերածելով պալատի։ Քանի որ միջնաբերդը Վաչուտյանների համար մշտական բնակության վայր էր, ապա, ինչպես ամբողջ ամրոցը, այնպես էլ միջնաբերդը, խիստ ամրացվեց և ընդլայնվեց (նկ. 25)։ Եթե միջնաբերդի շինարարության երկրորդ շրջանում կատարված հավելումները կառուցված են ավելի խոշոր ու տաշած քարերով, որոնք իրար ընդհուպ միանում են և անցքեր չեն մնում, ապա, ամրոցի մնացած հավելումներն ու նորոգումները ավելի մանր ու կիսատաշ քարերով են և շարքերի միջև սվաղված է։ Նույն Զաքարյան շրջանում, եթե եկեղեցիները կառուցում էին մաքուր սրբատաշ քարերով և մեծ ուշադրություն էին դարձնում արտաքին գեղեցկությանը, ապա հասարակ ամրոցապատերը աշխատում էին կառուցել հնարավորին չափ ամուր, քիչ ուշադրություն դարձնելով նրանց գեղեցկությանը, որովհետև դա կապված էր մեծ ծախսերի հետ։ Մինչդեռ միջնաբերդը, որ միևնույն ժամանակ Վաչուտյանների պալատն էր, կառուցված է ավելի խնամքով և հնարավորին չափ ուշադրություն էր դարձված նրա գեղեցկությանը։

Միջնաբերդի երկրորդ մուտքի շրջանաձև կամարը նույնպես խորթ չէ Զաքարյան շրջանի ճարտարապետությանը[9]։ Նման կամարներ շատ կան XIII դ. ճարտարապետական կոթողների վրա։ Սակայն, հետաքրքիր է նշել Անիի Պարոնի պալատի մուտքերը։ Կրկնահարկ այդ շինության նույն ճակատի ներքևի ճակտոնի կամարը շրջանաձև է, իսկ վերևինը՝ սլաքաձև։

Անբերդի միջնաբերդի կամ պալատի հետ համեմատելու քիչ նյութ ունենք։ Նման մի կառույց պահպանվել է ՀՍՍՀ Անիի շրջանի Գուսանագյուղում, սակայն տարբերությունը Անբերդից՝ սրա բոլոր կողմերում աշտարակների առկայությունն է։ Վերջինս, հավանաբար բացատրվում է նրանով, որ Գուսանագյուղի իշխանական ապարանքը առանձին կանգնած շինություն է, իսկ Անբերդի միջնաբերդը մտնում է ամրոցի ընդհանուր կոմպլեքսի մեջ և կառուցված է ամրոցի հետ միաժամանակ։

Ջուրը Անբերդի և ընդհանրապես ամրոցների կյանքում ունի առաջնակարգ նշանակություն։ Առանց ջրամատակարարման հարցը լուծելու չէր կառուցվում որևէ ամրոց։ Ջուրը Անբերդ է բերվել մի քանի կիլոմետր հեռավորությունից՝ կավե խողովակներով (նկ. 26)։ Սակայն պաշարման ժամանակ թշնամին

[8] Н. М. Токарский, նշվ. աշխ., էջ 42։

[9] Այս մասին Ն. Տոկարսկին գրում է. «...Դռնակի հարդարանքը նույնպես չի համապատասխանում XIII դ. գեղագիտական ճաշակին, քանի որ այն ունի շրջանաձև և ոչ թե սլաքաձև կամար» Н. М. Токарский, նշվ. աշխ., էջ 48։

կարող էր դրանք խափանել։ Այդ է պատճառը, որ միջնադարյան բոլոր ամրոցներում ջրամբարի կառուցման հարցը դառնում է հատուկ հոգածության առարկա։

Անբերդում եղել են երկու ջրամբար՝ փոքր և մեծ։ Փոքր ջրամբարը գտնըվում էր միջնաբերդի ներսում՝ սենյակներից մեկի հատակի տակ (գծ. 4)։ Քառանկյունի շինություն է՝ մոտ 45 խորանարդ մետր տարողությամբ։ Ջրամբարի ներսը պատած է անջրաթափանց կրաշաղախի ամուր շերտով։




Գծ. 4. Միջնաբերդի ջրամբարը. հատակագիծ և կտրվածք։

Ծածկը թաղակապ է (նկ. 27)։ Ջուրը լցվել է վերևից, որի համար հատուկ հարմարանքներ են կառուցվել թե տանիքի և թե հատակի մասերում։ Ջուրը բերվել է կավե խողովակներով, որոնցով ջրի մի մասը տարվել է միջնաբերդից դուրս՝ սրանից հարավ գտնվող մեծ ջրամբարը (գծ. 5)։ Վերջինս երկարավուն շինություն է (9 մ×3 մ)՝ ավելի քան 100 խորանարդ մետր տարողությամբ և կառուցման տեխնիկայով նման է առաջինին։ Պաշարման ժամանակ ջրամբարի դեր կարող էր կատարել բաղնիքը, հատկապես նրա կաթսայատունը, իսկ խաղաղ պայմաններում ջրամբարները, հավանաբար, օգտագործվել են տնտեսական կարիքները հոգալու համար։

Եկեղեցուց արևմուտք՝ հարթ տարածության վրա կա բավական մեծ մի կլոր շինություն՝ 17 մ տրամագծով։ Լավ պահպանված մասում բարձրությունը հասնում է 2,5 մետրի։ Ինչպես մյուս ջրամբարները, սա նույնպես ներսից ծեփված է անջրաթափանց կրաշաղախով։ Կրաշաղախի թույլ շերտ կա նաև






Գծ. 5. Անբերդի ջրամբարը, հատակագիծ և կտրվածք։

հատակին։ Նման մեծ շինությունը դժվար էր ծածկել, իսկ բաց ավազանի ջուրը խմելու համար պիտանի լինել չէր կարող։ Հավանաբար, դա պաշարման ժամանակ անասուններին ջուր մատակարարելու համար էր։ Անասնապահությունը միջնադարյան Հայաստանում, մանավանդ Անբերդի նման բարձրադիր և արոտներով հարուստ բնակավայրի համար, ուներ առաջնակարգ նշանակություն։




Գծ. 6. Ամրոցի հարավային գաղտնուղին։

Բագրատունի թագավորները Անիում խոտի ու հարդի մեծ պաշարներ էին կուտակում[10]։ Բնական է, որ նման պաշարներ ուներ նաև Անբերդը։ Հաշվի առնելով արտաքին վտանգը, Անբերդում պետք է որ կուտակվեր մի քանի տարվա պաշար։

Պաշարման ընթացքում և ձմռանը անասուններին ամրոցից դուրս հանել չէին կարող։ Ուստի, այս ջրամբարը ծառայում էր անասուններին ձմռանը ջրով ապահովելու միջոց։ Անբերդցիք հոգացել են տարբեր ճանապարհներով ջուրը ստանալու մասին։ Եթե կավե խողովակներով եկող ջուրը խաղաղ պայմանների համար էր և ջրամբարների պաշարը կբավականացներ մի քանի շաբաթ, ապա պետք էր նաև մտածել թշնամու կողմից կավե խողովակների հայտնաբերման և խափանման դեպքում նույնպես ջրի աղբյուր ունենալու մասին։ Այդ նպատակով կառուցվում են գաղտնուղիներ՝ Անբերդաձորից ջուր ստանալու համար։ Դրանցից մեկը սկսվում է ամրոցի ներսից՝ նրա հարավա-

[10] Ասողիկը վկայում է, որ Սմբատ թագավորի դարմանի մեծ պաշարը հրդեհվել էր։ Թագավորը հանցագործին բռնում ու պատժում է (Ասողիկ, Պատմություն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 253—254)։



յին մասից և հասնում մինչև գետը (գծ. 6)։ Գաղտնուղու կառուցման համար օգտագործվել են մի կողմից բնական ժայռերը, որոնք կարիքի դեպքում տաշվել ու հարմարեցվել են, իսկ հանդիպակաց կողմից շարվել են մեծ-մեծ սալաքարեր, որոնց վրա էլ միակտուր սալաքարեր դնելով ստացել են մի բավականին կանոնավոր և ընդարձակ ճանապարհ (նկ. 29), որտեղով մարդը կամ ջրով բարձած անասունը ազատ կարող էր անցնել։ Կառուցվածքի ներսի տարածության բարձրությունը 170—180 սմ է, իսկ լայնությունը՝ մոտ 150 սմ։

Առանձնապես հետաքրքիր է գաղտնուղու մուտքը։ Այն սկսվում է պարսպի հետևից՝ ներսի կողմից, ապա իջնելով ներքև՝ պարսպապատի տակից անցնելով, թեքվում է արևմուտք և շարունակվում դեպի գետը։ Գաղտնուղու մուտքը ապահով դարձնելու և պաշտպանելու համար երկու կողմերում գտնվող հանդիպակաց ժայռերի գլխին կառուցված են հաստ պատեր, որոնք հսկում են գաղտնուղին։ Գաղտնուղին այժմ տեղ-տեղ քանդված է (մեծամեծ ժայռերը փլվել են և փակել ջրին հասնելու հատվածը), և դժվար է այժմ նրա ճիշտ պատկերը վերականգնել։

Անբերդում հայտնի է նաև մեկ այլ գաղտնուղի, որն սկսվում է արևմտյան պարսպի մոտից և նույնպես իջնում Անբերդաձոր։ Կառուցվածքով նման է առաջինին, սակայն չափերով ավելի փոքր է։ Սրա վերջավորությունը դեպի գետը առայժմ նույնպես հայտնի չէ։

Այս գաղտնուղիները ամրոցի պաշարման ժամանակ ծառայել են որպես արտաքին աշխարհի հետ հաղորդակցման միջոցներ։

Նման գաղտնուղիներ Հայկական լեռնաշխարհում գոյություն են ունեցել շատ վաղուց՝ դեռ կիկլոպյան ամրոցների ժամանակներից։ Հետաքրքիր է, որ Մ. Խորենացին Երվանդաշատ քաղաքի կառուցման մասին խոսելիս գրում է. «Պարսպէ զբլուրն և ի ներքսագոյն քան զպարիսպն, ընդ բազում տեղիս կարեալ զքարիւն, մինչև ի յատակ գետոյն, մինչև դիմել ջուր գետոյն ի փորուածն, յըմպելեաց պատրաստութիւն»[11]։

Մի շարք միջնադարյան ամրոցներում նույնպես պահպանվել են գաղտնուղիներ, որոնցից մասամբ ուսումնասիրվել է Բջնիի ամրոցինը։ Վերջինս սկսվում է ստորին ամրոցից և գետնի տակով իջնում դեպի գետը, որտեղ ոչ թե դուրս է գալիս, այլ փորված է մի խորը փոս, գետի մակարդակից մի քիչ ցածր, որտեղ բնական հոսքով հավաքվում էին գետի ջրերը և ապահով կարելի էր ջուր վերցնել։ Մ. Խորենացու վերոհիշյալ վկայությունը նույնպես նման կառուցվածքի մասին է ակնարկում։ Կարելի է կարծել, որ Անբերդի գաղտնուղիները նույնպես նման վերջավորություններ են ունեցել։

Մեր պատմիչները բազմաթիվ վկայություններ են պահպանել պատերազմների ու պաշարումների ժամանակ մթերքներ ամբարելու մասին։

Անբերդում մթերանոցներ՝ ցորենի, գարու, և պահեստներ չեն հայտնաբերվել։

Ուշ շրջանում, XIV—XVII դդ. Անբերդում կառուցվել են մեկ մետր տրամագծով և մեկից մինչև մեկուկես մետր խորությամբ հորեր՝ ծեփված անջրաթափանց կրաշաղախով, որոնք, հավանաբար հեղուկ նյութեր պահելու համար են։ Դրանք հիմնականում տեղադրված են պարիսպների մեջ։

Դեպի Անբերդ ճանապարհ կա երկու կողմից (թե՛ Անբերդաձորից և թե՛ Արխաշանի ձորից)։ Այժմ այդ ճանապարհները մեծ մասամբ քանդված են։

[11] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, գիրք երկրորդ, ԼԹ, էջ 165։



4—945

Սակայն հատկապես Արխաշանի ձորի մեջ պահպանված հատվածները վկայում են, որ անբերդցիք չափազանց հոգատար են եղել ճանապարհների նկատմամբ։ Պահպանված հատվածներում պարզ կարող են շարժվել հանդիպակաց սայլեր կամ փոխադրական այլ միջոցներ։



Գծ. 7. Եկեղեցու հատակագիծը։

Այսպիսով, Անբերդը իր բերդաշինական սկզբունքներով, հատակագծային լուծումներով, ճանապարհների ու դարբասների, բուրգերի փոխգործողության և այլ միջոցներով, շարունակելով հայ բերդաշինության ուրույն ու վաղեմի ավանդները, այն ավելի զարգացնում և առաջ է մղում։

Անբերդի եկեղեցին կառուցել է Վահրամ Պահլավունի իշխանը 1026 թ., որի մասին հաղորդում է հյուսիսային դռան բարավորի արձանագրությունը (նկ. 1)։ Եկեղեցին գտնվում է ամրոցի գրեթե կենտրոնում և նրա ճարտարապետական կարևոր էլեմենտներից մեկն է (նկ. 30)։ Ամրոցում ճարտարապետական տեսակետից իշխողը միջնաբերդն է՝ իր բուրգերով և բարձր դիրքով, եկեղեցին նույնպես դրված է աչքի ընկնող տեղում։ Կառուցված է տեղական բազալտ քարից, ամուր կրաշաղախով։ Թե՛ դրսից և թե՛ ներսից սրբատաշ է։ Դրսից ուղղանկյուն քառանկյունի է (գծ. 7), ունի երեք շարք ստիլոբատ՝ յուրաքանչյուր շարքը 30-ական սմ բարձրությամբ։ Արևելյան կողմից ունի երկու եռանկյունաձև խորշ, որոնց վերևը մշակված է ճառագայթաձև։ Ունի երկու մուտք՝ մեկը հյուսիսից (գծ. 8), մյուսը հարավից (գծ. 9)։ Հարավային մուտքը, որը մյուսից մի քիչ մեծ է, երկու կողմերից զարդարում են կիսասյուների գեղեցիկ



փնջերը, որոնց վրա տարված է կամարը։ Այս եկեղեցին հարդարանքի տեսակետից, առհասարակ, զուսպ է։ Ներսից խաչաձև հատակագիծ ունի, որն առաջացել է չորս անկյուններում կրկնահարկ խորանների կառուցումից։ Ունի արևելյան կիսակլոր աբսիդ՝ բարձր բեմով (մոտ մեկ մետր բարձրությամբ)։



Գծ. 8. Եկեղեցու ընդերկայնական կտրվածքը։

Եկեղեցին կենտրոնագմբեթ է, գմբեթի թմբուկը սովորականից մի քիչ լայն է (գծ. 10), ձևով նման է Մարմաշենի եկեղեցուն։ Կլոր գմբեթը քառանկյունի պատերի վրա փոխանցվում է առագաստների ու կամարների միջոցով։ Թորոս Թորամանյանը անդրադառնալով այս եկեղեցու չորս անկյունների կրկնահարկ խորանների գոյության հարցին, գրում է. «Իսկ ներքին հատակագիծը բացի

ավագ խորանից, չորս անկյունների վրա, ութ փոքր կրկնահարկ մատուռներով կամ խորաններով կազմված է, որուն այդ ձևը X—XI դդ. շինված լինելը անսպասելի էր ինձ համար: Թեև նույն դարերին, արևելյան խորանին երկու քովերը



Գծ. 9. Եկեղեցու հարավային ճակատը:

միահարկ կամ կրկնահարկ մատուռներով շինված եկեղեցիներ շատ կան, սակայն արևմտյան կողմի երկու անկյունների վրա մատուռներ շինված լինելը X—XI դդ. միանգամայն անսովոր էր ինձ համար, ես առաջին անգամ էր, որ կտեսնեի: Պահ մը կասկածեցի, որ հետնագույն հավելվածներ լինեին արևմտակողմի մատուռները, այս ուղղությամբ երկար քննեցի, սակայն ոչ մի ապացույց չգտա հետնագույն հավելվածի: Տարակույս փարատող մի հանգամանք կար, այն է շինության արձանագրության գոյությունը եկեղեցիի մեջ... ընդհանրապես



իմ համոզումս եղած է, թե եկեղեցիների հատակագծային այդ ձևը սկիզբ առած էր XIII դարում»: Այս կապակցությամբ Թորամանյանը վկայակոչում է Ներսես Լամբրոնացու բողոքը եկեղեցին հոգու փրկության համար շահավետ դարձնելու կապակցությամբ (բազմաթիվ պատարագներ տալու



Գծ. 10. Եկեղեցու լայնական կտրվածքը:

համար) մանր-մունր ծակեր շինելու առթիվ, և այն կարծիքն է հայտնում, թե վերոհիշյալ երևույթը պետք է տարածված լիներ XII դ. առաջ, որ նման բողոքի տեղիք տար: Նա եզրակացնում է, որ այժմ մեր կարծիքը այդ խորանների կառուցման ժամանակի մասին փոխելու ենք[12]:

Անիբերդի եկեղեցու շինարարական արվեստը չափազանց բարձր է: Այդ բանի ապացույցն է նաև այն հանգամանքը, որ եկեղեցու թե՛ արտաքին և թե՛ ներքին ոչ միայն պատերի, այլև անկյունագծերի միջև ոչ մի սանտիմետրի

[12] Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 230—231:

տարբերություն չկա։ Անդրադառնալով քարագործ վարպետների աշխատանքին, Թորամանյանը գրում է. «Հիացման արժանի են շենքի վրա աշխատող քարտաշների և որմնադիրների հմտությունն ու բարեխղճությունը, թե ուղղահայաց և թե հորիզոնական ոչ մի գիծ չի երևում գրեթե քարերի միացման տեղի վրա, չափազանց խնամքով են շարված քարերը միմյանց մոտ»[13]։

Ծածկը թեթևացնելու, նաև ձայնային ակուստիկայի համար, եկեղեցու կտուրի կրաշաղախի մեջ օգտագործել են մեծ ու փոքր կավե ամաններ, դրանցից մի քանիսը այժմ երևում են ծածկի սալաքարերի տակից։ Շինարարության մեջ կիրառվել են նաև երկաթե ձողեր, որոնք օգտագործվել են հատկապես քիվի քարերը ամուր պահելու համար։ Քիվի քարերից մի քանիսը հայտնաբերվեցին 1965 թ., եկեղեցու մաքրման աշխատանքների ժամանակ։ Դրանք բոլորն էլ կլոր, բարակ անցքեր ունեն, որտեղ մտնում էր երկաթը և կրաշաղախի մեջ ամրանալով, այն ավելի հաստատուն էր դարձնում։

Անբերդի եկեղեցու քարերը կարծր են և շատ ծանր։ Դրանք բարձրացվել են ճախարակների միջոցով։ Այժմ եկեղեցու քարերի մի մասը, որ ընկած են գետնին, մեջքի կամ հետևի կողմից, ուղիղ մեջտեղից ունեն փոսորակներ։ Կասկած չկա, որ դրանք արված են պարանով քարը կապելու և բարձրացնելու համար։ Պատուհանի բացվածքներ եկեղեցին քիչ ունի. չորս նեղ բացվածքներ կան նրա ներքևի մասում, չորսն էլ՝ համեմատաբար լայն, գմբեթի թմբուկի վրա։ Խորաններից յուրաքանչյուրն ունի մեկական նեղ ու երկար ճեղք։ Հարկ է նշել, որ եթե, ասենք, հայ վաղ միջնադարյան ճարտարապետության կոթողների համար բնորոշ են լայն պատուհանները (Թալին, Արուճ, Աբթիկ և այլն), ապա սկսած X դ. պատուհանների բացվածքները խիստ նեղանում են, իսկ բացվածքների քանակն էլ զգալիորեն նվազում է։

Անբերդի եկեղեցու ճարտարապետը առայժմ մեզ անհայտ է։ Շինարարական արձանագրության մեջ հիշատակվում է, որ այն կառուցել է Վահրամ Պահլավունին։ Անբերդի եկեղեցին նման է Մարմաշենի կաթողիկեին։ Վերջինիս կառուցումը, համաձայն արձանագրության, սկսվել է 988 թ. և ավարտվել 1029-ին։ Անբերդի եկեղեցու 1026-ը պետք է ընդունել որպես ավարտման թվական։ Այս հանգամանքը, ինչպես նաև ոճական ընդհանրությունները և հատակագծերի նմանությունը մասնագետներին բերել են այն եզրակացության, որ սրանք երկուսն էլ նույն ճարտարապետի գործերն են։

Ներկայումս Անբերդի եկեղեցին կանգուն է։ 1970—1975 թթ. ՀՍՍՀ Պետշինի հուշարձանների վերականգնման վարչությունը կատարեց նրա վերանորոգումը։ Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ գրեթե հազար տարիների ընթացքում այն լուրջ նորոգման չի ենթարկվել, ապա կարելի է ասել, որ այն նախնական ձևով հասել էր մինչև մեր օրերը։ Մինչև 1970 թ. վերանորոգումը թափված էին նրա ծածկի և քիվի քարերից շատերը, թմբուկի կիսասյուներից մի քանիսը։ Հատկապես քայքայվել էր եկեղեցու հարավային ճակատը (նկ. 33)։ Թափված էին նաև երեսապատ քարերից շատերը։ Այստեղ քայքայումն այնքան արագ է կատարվել, որ նույնիսկ 1936 թ. և վերանորոգումից առաջվա միջև բավական տարբերություն կա։ Այն ժամանակվա լուսանկարներում երեսապատ քարերից շատերը, այդ թվում նաև XIII դ. արձանագրված քարերը, իրենց տեղումն էին։ Անվնաս պահպանվել էին

[13] Անդ, էջ 231։



մուտքերը։ Ծածկի խարխլման պատճառով անձրևաջրերը ներս էին թափվում և քայքայում այդտեղի քիվի քարերը։ Վերանորոգման հետևանքով այդ բոլորը վերացվեցին և եկեղեցու գոյությանը այժմ վտանգ չի սպառնում։

Եկեղեցու վրա կան վիմական արձանագրություններ, որոնցից կարևորը հյուսիսային մուտքի (ներսից) բարավորի վրա գրվածն է (նկ. 1).

1 ԱՄԻՆ ՆՀԵ
2 ԵՍ ԻՇԽԱՆՍ ՎԱՐՀԱՄ ՇԻ
3 ՆԵՅԻ ՋԿԱԹՈՂԻԿԷՍ ԱԹՈՌ
4 ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԵԻ ՍԱՀՄԱՆ
5 ԵՅԻ ՊՏՈՒՂ ՆԻԳԻ ՏՈՒՆՆ։ Բ։ ԿԱՊԻՃ
6 ՅՐ ՅԱՐԱԳԱԾՈՏՆԷ ՅԵԳԻՆ։ Բ։ ՓԱՍ ԳԻ(ՆԻ)
7 Ի ՔԱՂԱՔՈԴԱՇՏԻ ԲԱԲԱԿՆ։ Յ։ ԼԻՏՐ ԵՐԵՑ
8 ՆԱ ԴՀ ՅԻԻ.......։ Գ։ ԴՀՆ ՀՈՂԱԴՐ ՁԵՌ
9 ՆԱԴՐԵԼԷ։ Դ։ ՅԱՆԲԵՐԴԻ ՊՏՈՒՂՆ ՏԱՆՆ
10։ Ո։ ԿԱՊԻՃ ՅՐ։ Ա։ ԿՏԱԻԱՀԱՏ ՅԱ.. ԻՍԳ Ջ
11 ՋԱՂԱՑՆ ՎԵՐԱ ԿՐՄՆՃԻՆ Ի ՊՍԱԿԻ։ Գ։
12 ԴՀ ՀՈՂԱԴՐ ԿՆՔԱԴՐ ՏՆԱԻՐՀՆԵՔ։ ԺՈՂՈՎ
13 ՈՒՐԴ ՈՐ ՈՋ ԿԱՏԱՐԷ ՊԱՏԺԵՑԻ ՅԱՅ
14 ԻՇԽԱՆ ՈՐ ՏԻՐԷՆ ՀԱԿԱՌԿԱ ԴԱՏԻ ՅԱՅ

Արձանագրությունը կարևոր է նրանով, որ պարզում է Անբերդի եպիսկոպոսարանին ենթակա գավառները՝ Նիգ, Արագածոտն և Քաղաքոդաշտ (Վաղարշապատ)։ Անբերդի եպիսկոպոսարանը Բագրատունյաց թագավորության արևելյան և հարավային սահմանային եպիսկոպոսարանն էր։

Արձանագրությունը պարզում է նաև նշված շրջանների գյուղատնտեսության հետ կապված հարցեր։ Ավելին, այն պարզում է, թե յուրաքանչյուր գավառում գյուղատնտեսության որ ճյուղն էր զարգացած։ Այսպես, Նիգ գավառի համար սահմանվում է որպես հարկ ցորենը, Արագածոտնից՝ գինի, իսկ Վաղարշապատից՝ բամբակ։ Անբերդում մշակվել են հիմնականում ցորեն և կտավհատ։ Հետաքրքիր են նաև բնատուրքով գանձվող հարկերի չափն ու ըստ այդմ յուրաքանչյուր գավառում հարկերի տարբերությունը՝ ըստ նրանց եկամուտների և այլ հարցեր։

Հաջորդ արձանագրությունը փորագրված է եկեղեցու հարավային մուտքի կամարի ներքևում՝ դրսից.

1. ԿԱՄԱԻ ԱՅ ԵՍ ՏՐ
2. ՈՒՍԵՓ ՄԻԱԲԱՆՑ ՍՈՒՐԲ
3. ՈՒԽՏՍ ԵՏՈՒ։ Ռ։ ՍՊԻՏԱԿ
4. ԵԻ ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ԽՈ
5. ՍՏԱՑԱՆ Ի ՏԱՐԻՆ։ Ե։ ԱԻՐ ԺԱՄ
6. ։Ք։ ԻՆՋ ։Ա։ ԳԱ.. ԲԱԻՐԱ
7. Ն։ Ա։ ՄԽԻԹԱՐԱՅ

Մի արձանագրություն էլ կա եկեղեցու հարավային մուտքի բարավորին՝ դրսից, որի խիստ հողմնահարվածության պատճառով կարդացվում է միայն առաջին տողից մի քանի բառ՝ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՅ ԵՍ ՄԻ... ՁԵՌՆԱԻ...

Մյուս արձանագրությունը եկեղեցու հարավային պատի վրա է՝ մուտքից արևելք.

1. Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ ՏԷՐ
2. ՈՒԹԵԱՆ ԻՒԱՆԷԻ ՍԻ ՇԱ

3. ՀԻՆՇԱՀԻ, ՎՆՐԱԿԱՅՈՒ
4. ՈՒԹՆ ԳԱԻԱՌԻՍ ՎԱ
5. ՉԷԻ ՄՆՔ ԱՄԷՆ ԱՄԲՆՐ
6. Դ ՏՈՒԱՔ ՋԲՈՂԻՈՅ՝
7. Ն ԱՌԻԻՆ ԿԷՄՆ ՏՆՂՆ
8. ՐՈ ՆԻՍՈՐՔԱ ՀԱՍՏԱ
9. ՏՆՅԻՆ ՁԽԱՁԻՆ ՇԱԲ
10. ԱԹՆ ՆԻ ԿԻՐԱԿԷՆ ՊԱՏ
11. ԱՐԱԳ ՍՆՐ ՆՆՋՆՑՆԼ
12. ՈՅՍ. ՈՎ ՉԱՌՆԻ ՆՋՈՎԻ ՅԱՅ ՆԻ ԺՈՂՈՎՈՅՆ ԱՄՆՆ

Արձանագրության ժամանակը որոշվում է Իվանեի և Զաքարեի որդի Շահնշահի իշխանության տարեթվերով։ Զաքարեն մահացել է 1212 թ., իսկ Իվանեն՝ 1231-ին։ Քանի որ արձանագրության մեջ Զաքարեն նշված չէ, բայց հիշատակվում են Իվանեն ու Շահնշահը, հետևաբար այն պետք է դնել 1212—1231 թթ. միջև։ Թվականը ճշտելու մեկ այլ հանգամանք կա։ Սկզբում հիշատակվում է Իվանեն, ապա՝ Շահնշահը։ Սա խոսում է այն մասին, որ Զաքարեի մահից շատ ժամանակ չի անցել, և նրա Շահնշահ որդին իշխա-նության առաջին մարդը չէր անչափահասության պատճառով։

Անբերդի բաղնիքը գտնվում է արևելյան պարսպին կից՝ պալատից մոտ 70 մ հեռավորության վրա և կարևոր տեղ է գրավում ամրոցի ճարտարապե-տական հուշարձանների խմբում։

Ինչպես ամբողջ Արևելքի, այնպես էլ Հայաստանի միջնադարյան կենցա-ղում բաղնիքը կարևոր նշանակություն է ունեցել։ Անբերդի բաղնիքը կառուց-ված է սրբատաշ քարերով և կրաշաղախով։ Հիշենք, որ բնակելի կացարան-ները, նույնիսկ իշխանական ապարանքների մեծ մասը, կառուցվում էին առանց կրաշաղախի։

Ակադեմիկոս Հ. Օրբելին նշում է, որ ամբողջ Արևելքում դժվար է գտնել գրական որևէ ստեղծագործություն, որի մեջ գոնե մեկ անգամ հիշատակված չլինի բաղնիքը, կամ չխոսվի դրա մասին[14]։

Խոշոր բնակավայրերը, հատկապես քաղաքները, ունեցել են մի քանի բաղնիք։ Օրինակ, Անի մայրաքաղաքում, բացի պալատական բաղնիքից, պեղումներով հայտնաբերվել են ևս հինգ բաղնիք։ Դվինի միջնաբերդում նույնպես հայտնաբերվել է բաղնիք։

Անբերդի բաղնիքը միջնադարյան Հայաստանի կենցաղային շինարարու-թյան նշանավոր հուշարձաններից է։ Այն կառուցված է համեմատաբար փոքր չափի տեղական սրբատաշ բազալտ քարով։ Շարքերի բարձրությունը չի անցնում 40 սմ-ից։ Հատակագծում բաղնիքը ուղղանկյուն քառանկյունի է (գծ. 11)։ Ունի երեք բաժանմունք՝ հնոց, լողարան, հանդերձարան։ Վերջինս մոտ 25 քառ. մետր, քառանկյունի հատակագծով շինություն է։ Հանդերձարա-նից մտնում են լողարան, որը նույն տարածությամբ սենյակ է, սրա կողքին ջեռուցման սենյակն է, որն իր չափով ավելի փոքր է։ Ջեռուցման սենյակը կամարակապ ծածկ ունի, իսկ լողարանն ու հանդերձարանը գմբեթակիր են (նկ. 48)։ Գմբեթները փոքր տրամագծի են՝ վերևում բաց երդիկով, որտեղից թափանցում է լույսը։ Գմբեթը թմբուկ չունի։ Քառանկյունի տարածությունը

[14] И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 316։



դեպի գմբեթն է փոխանցվում միակտուր քարե տրոմպների միջոցով, որոնք տեղադրված են յուրաքանչյուր սենյակի չորս անկյուններում (նկ. 36)։ Պատուհաններ և ուրիշ բացվածքներ չկան։ Բաղնիքը դրսից՝ հյուսիսային ճակատում ներքևից կամարակապ բացվածք ունի՝ հնոցի մեջ վառելանյութ



Գծ. 11. Բաղնիքի հատակագիծը, երկու ճակատը և կտրվածքները։

դնելու համար (նկ. 37)։ 1936 թ. պեղումներով այստեղ բացվել է մի շինու-թյուն, որը Հ. Օրբելու ենթադրությամբ, հնոցապանի սենյակն է։ Եղել է երկու հարկանի, նկուղային հարկում պահվել է վառելափայտը։ Առհասարակ, հնոցները կառուցվել են հրակայուն քարով։ Անբերդի բաղնիքի հնոցի համար օգտագործված է բազալտ, համեմատաբար խոշոր քարեր, իսկ կամարի համար՝ միակտուր քար։ Այնուամենայնիվ, հնոցի քարերը կրակից խիստ վնասվել են։ Կամարակապ մեծ քարը, որն ամբողջովին սևացած է մրից, ճաքել է։ Հնոցի վրա կրաշաղախի հասա շերտ կա։

Տաք օդն ու ծուխը հնոցից մտել են լողարան և հանդերձարանի հատակի տակով (հնոցը ավելի ցածր է դրված) կավե խողովակների և պատերի միջով դուրս են եկել դեպի կտուր։ Դրանք մոտ 10 սմ տրամագիծ ունեցող չորս խողովակներ են, որոնք տեղավորված են պատերի մեջ այդ նպատակով արված խորշերում։ Խողովակները դրված են հանդերձարանի չորս անկյուններում։ Այսպիսով, տաքացվում էր ամբողջ բաղնիքը (լողարանի հյուսիսային պատը կից լինելով ջեռուցման սենյակին, տաքանում էր այնտեղից, իսկ մյուս պատն ընդհանուր էր)։ Որպեսզի տաք օդն ու ծուխը անցնեին լողարանի ու հանդերձարանի տակով, վերջիններիս հատակը բարձրացված է հատուկ սալիկների վրա, որոնց վրա դրված են ավելի մեծ սալեր. այդ նույն նպատակի համար պատերի վրա արված են 5 սանտիմետրանոց ելուստներ։

Բաղնիքի տաքացման այսպիսի սիստեմը հայտնի էր շատ վաղուց։ Հայաստանում նման բաղնիք հայտնաբերվել է Գառնիում, որը, մասնագետների կարծիքով, պատկանում է II—III դ.[15]։ Դվինի միջնաբերդում ևս բացվել է մի բաղնիք, որի հատակը նույնպես բարձրացված է եղել, սակայն՝ կավե սալիկների վրա։ Անբերդի բաղնիքին իր սկզբունքներով շատ մոտ է Անիի միջնաբերդի բաղնիքը, որը սակայն ավելի մեծ է։ Այն ունի յոթ բաժանմունք, որոնցից երկուսը լողարան են, մյուսները հանդերձարան և այլ օժանդակ կառույցներ։ Երկու լողարան է ունեցել նաև Դվինի բաղնիքը։ Երկու լողարանով բաղնիքները հատուկ էին մեծ քաղաքներին։ Անդրադառնալով Անբերդի բաղնիքին, պրոֆ. Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ այն ունեցել է երկու լողարան[16]։

Անբերդի բաղնիքին, ոչ միայն իրենց չափերով, այլև սկզբունքներով, շատ մոտ են Խերսոնեսի[17] և Դմանիսիի բաղնիքները[18]։

Անբերդի բաղնիքի ուսումնասիրությամբ զբաղվել են շատերը։ Հ. Օրբելին մի առանձին աշխատություն է նվիրել դրան[19], որտեղ մանրամասն քննության է ենթարկել բաղնիքի կառուցվածքը, կապը նման մյուս շինարարությունների հետ։ Ջուրը բաղնիք է բերվել կավե խողովակներով, որոնց հետքերը պահպանվել են ջեռուցման սենյակի մեջ։ Ամրոց մտնող գլխավոր մայրուղուց մի ճյուղ անջատվելով, մտնում է բաղնիք, մյուսը գնում է ամրոցի հարավային մաս։ Տաք ջուրը ջեռուցման սենյակից լողարան է հասել երկաթյա խողովակների միջով, որոնցից մի կտոր մինչև այսօր էլ պահպանվել է պատի մեջ։ Հավանաբար, սառը ջուրը, բացի ջեռուցման սենյակից, երկաթե խողովակներով հասել է դեպի լողարան, որտեղ պատի մեջ փորված հատուկ գուբ կա։ Այստեղ ջուրը կարգավորվել է բրոնզե ծորակների միջոցով։ Կեղտաջուրը հեռացվել է ավելի մեծ տրամաչափի կավե խողովակներով, որոնք անցել են բաղնիքի հատակի տակով։

Բաղնիքի մուտքը մի աստիճանով ցածր է արված։ Ճարտարապետ Հ. Խալփախչյանը գտնում է, որ դա կապված է բաղնիքի համար առավել տաքություն ապահովելու հանգամանքի հետ[20]։ Ընդհանրապես, ինչպես իրավացիորեն նշում

[15] *Б. Н. Аракелян*, Гарни, т. 2, Ереван, 1957, стр. 23—47.

[16] Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 136—138։*

[17] *А. Л. Якобсон*, Средневековый Херсонес, МИА, 17, М.—Л., 1950.

[18] *Л. Мусхелишвили*, Раскопки в Дманиси, СА, 1940, № 6.

[19] *И. А. Орбели*, նշվ. աշխ., էջ 316—322։

[20] *О. Х. Халпахчьян*, Средневековые бани Армении, СА, 1960, № 1, стр. 220.



է Խալփախչյանը, Անբերդի և Հայաստանի մյուս բաղնիքների առանձնահատկությունը նրանց էկոնոմիկ կառուցվածքն է. ցածր են, չունեն պատուհաններ, ծուխն ու տաք օդը օգտագործվել են բաղնիքը տաքացնելու համար։

Բաղնիքը ներսից պատվել է կրաշաղախի հաստ շերտով, որը շատ լավ պահպանվել է ջեռուցման սենյակում։ Լողարանում այդ կրաշաղախի վրա կարմիր ներկով փոքր քառակուսիներ են արված։

Հետագայում, հավանաբար XIV դ. և ավելի ուշ, տաք ջուրը խողովակներով չի հասել լողարան, այլ ամանով անմիջապես վերցվել է ջեռուցման սենյակից, որտեղ, հնարավոր է, այդ ժամանակ դրված է եղել պղնձե մեծ կաթսա։ Ջրամատակարարման նոր սիստեմի համար անհրաժեշտ է եղել ջեռուցման սենյակի և լողարանի միջև եղած պատի մեջ անցք բանալ, այն չափով, որ հնարավոր լիներ ազատ կերպով ջուր վերցնել։ Այս սիստեմը Հայաստանի համար բնորոշ չէ, այն լայնորեն տարածված էր հարևան երկրներում (Իրան, Ադրբեջան և այլուր)[21]։

Անբերդի բաղնիքի կառուցման ժամանակի խնդրին ուսումնասիրողները չեն անդրադարձել։ Հ. Օրբելին անուղղակի կերպով այն համարում է մինչև XII դ. կառուցված։ Ն. Տոկարսկին գտնում է, որ Անբերդի բաղնիքը ավելի ուշ շրջանի կառույց է, քան Անիի պալատական բաղնիքը։ Համապատասխան նյութեր առայժմ չկան Անբերդի բաղնիքի կառուցման թվականը ճշտելու համար։ Մեր կարծիքով, այն պետք է վերագրել Բագրատունյաց շրջանին. երկաթե խողովակների ու բրոնզե ծորակների սիստեմը Զաքարյան շրջանին է պատկանում։ Սակայն ինչպիսի՞ն է եղել շենքը սկզբում, ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել հետագա դարերում, առայժմ դժվար է ասել։

Մատուռը գտնվում է բաղնիքից արևմուտք, նրա և ջրամբարի միջև։ Փոքր շինություն է, դրսից քառանկյունի հատակագծով, 5,5 մ երկարությամբ և 4 մ լայնությամբ (գծ. 12)։ Միակ մուտքը հարավային կողմից է, ունի արևելյան կիսակլոր աբսիդ, շարված է տեղական սրբատաշ բազալտ քարով, ամուր կրաշաղախով։ Այն հայտնաբերվել է 1936 թ. պեղումներով և մասամբ վերանորոգվել։ Այժմ պահպանվել են շինության միայն հիմքերը և տեղ-տեղ էլ պատերի ստորին շարքերը։ Պեղումների ընթացքում մատուռի տակից հայտնաբերվել է մարդկային կմախք։ Դժբախտաբար, մատուռի կառուցման ժամանակի մասին դժվար է որոշակի բան ասել հնագիտական նյութի բացակայության պատճառով։ Այնուամենայնիվ, դատելով մատուռի հատակագծային լուծումից և պահպանված քարերի մշակումը նկատի ունենալով, կարող ենք այն թվագրել մոտավորապես XII—XIII դդ.։

Մի քանի խոսք Անբերդի բնակելի կառույցների մասին։ Միջնաբերդի վերաբերյալ արդեն նշել ենք, որ այն ծառայում էր նաև որպես բնակարան Անբերդի տերերի համար։ Բազմահարկ այս շինությունը ամրացված էր ըստ ամենայնի։ Որպես բնակարան այն ուներ բոլոր հարմարանքները. սենյակները ընդարձակ էին, որոնց պատուհանները հարավային կողմնորոշում ունենալով՝ բավարար քանակով լույս ու ջերմություն էին ստանում։

Անբերդի ամբողջ տարածության վրա մնացել են բնակարանային կոմպլեքսների ավերակներ (նկ. 39), որոնց մի մասում շատ լավ պահպանվել են նաև պատերը։ Այստեղ շատ պարզ երևում են բնակելի սենյակների և դրանց

[21] *О. Х. Халпахчьян*, նշվ. աշխ., էջ 219։

օժանդակ կառույցների հետքեր։ Դրանք մեծ, ավելի քան 40—50 քառ. մետր մակերես ունեցող սենյակներ են, որոնք, հավանաբար, ծածկված են եղել փայտե գերաններով։ Սակայն այս բնակարանները պատկանում են ուշ շրջանի, երբ ամրոցը որպես այդպիսին արդեն գոյություն չուներ։

1963 թ. պեղումների ընթացքում արևմտյան պարսպին կից պեղվեց մի բնակարանային կոմպլեքս, որը հնագիտական նյութերի հիման վրա թվագրվում է XIII դ.։ Այն բաղկացած է երկարավուն՝ ուղղանկյուն-քառանկյունի բնակելի մեկ սենյակից, մոտ 30 քառ. մետր տարածությամբ։ Պատերը շարված են մեծ-մեծ բազալտե կիսատաշ քարերով՝ հողե շաղախով։ Սենյակի պատերից մեկի դերը կատարում է պարիսպը։ Այս սենյակին կից բացվեցին



Գծ. 12. Մատուռի հատակագիծը։

երկու այլ, ավելի փոքր շինություններ, որոնք բնականաբար օժանդակ կառույցներն են։ 1964 թ. պեղվեց մեկ ուրիշ բնակարանային կոմպլեքսի մի մասը՝ ամրոցի հարավային ծայրում (գծ. 13)։ Այստեղ բացվել են թոնրատուն և մի փոքր շքեղ սենյակ։ Վերջինիս մակերեսը 8 քառ. մետր է։ Պատերը շարված են խնամքով տաշած բազալտ քարերից, որոնց բարձրությունը 50 սմ է։ Առաջին շարքից վերև տարված է մի քանդակազարդ գոտի։ Սենյակը սալահատակված է։ Հատկանշական է, որ այսքան շքեղ կառուցված սենյակի պատերն էլ շարված են առանց կրաշաղախի։ Սա պետք է, որ բնակարանային կոմպ-



Գծ. 13. Ամրոցի հարավային մասում պեղված սենյակը։



Գծ. 14. Երնուքյուն ամրոցի հարավ-արևելյան մասում.

լեքսի մեջ մտած լիներ, քանի որ այդտեղ գտնված են կենցաղային շատ առարկաներ, այդ թվում մեծ քանակությամբ խեցեղեն։ Նման մի սենյակ էլ բացվել է 1968 թ. պեղումների ժամանակ (նկ. 41)։ Սենյակը չափերով շատ մոտ է 1964 թ. հայտնաբերվածին, միայն հատակագծում անկանոն քառանկյունի է (գծ. 14)։ Բացի այդ, վերջինում հնագիտական առարկաներ, հատկապես խեցեղեն, քիչ է հայտնաբերվել։

Անբերդի եկեղեցու շինարարական արձանագրության մեջ խոսվում է կամուրջի և ջրաղացի մասին։ Ճանապարհները դեպի Անբերդ երկու կողմերից էլ կտրում են լեռնային գետակներ, որոնք հատկապես գարնանը խիստ վարարում են, և անցնելը անհնարին է դառնում։ Անբերդի նման կարևոր ամրոցը առանց կամուրջների չէր կարող լինել։ Սակայն դրանցից ոչ մի հետք չի մնացել։ Անբերդում եղել է մի քանի ջրաղաց։ Դա երևում է վերոհիշյալ արձանագրությունից, որտեղ ասված է՝ «....ջաղացն վերա կարմնճին...»։ Նշանակում է, թե հատուկ նշված է կամուրջի մոտի ջրաղացը՝ մյուսներից տարբերելու համար։ Եթե մեկ ջրաղաց լիներ, ապա կնշվեր ուղղակի՝ Անբերդի ջրաղացը։ Այդ ջրաղացի հետքերը պահպանվել են Անբերդաձորում, այն մասում, որտեղ հավանաբար կամուրջն է եղել։ Բացի ջրաղացի շենքի հիմնապատերից պահպանվել են նաև ջրատար խողովակները։

Անբերդում կա նաև ձիթհանի քար, որը գտնվում է ամրոցի հարավային մասում։ Հետևաբար այդտեղ էլ եղել է ձիթհանը։ Ջիթհանը մեր կարծիքով տեղադրվել է ավելի ուշ, այն ժամանակ, երբ ամրոցն այլևս դադարել էր գոյություն ունենալուց։

Գերեզմանոցների և խաչքարերի մասին։ Գերեզմանոցները, ընդհանրապես ամրոցից դուրս են լինում։ Դա բացատրվում է նրանով, որ պարսպապատ ամրոցատարածությունը սուղ էր և այն տրամադրվում էր բնակելի և պաշտպանական կառույցներին։ Այդպես էր նաև Անբերդում։

Գերեզմանոցներից մեկը գտնվում է ամրոցի հյուսիսային կողմում, մոտ 200 մ հեռու, բարձունքի վրա։ Այստեղ պահպանվել են բազմաթիվ օրորոցաձև տապանաքարեր և խաչքարեր։ Հետաքրքիր է, որ բացի ընդհանուր գերեզմանատնից, որը բավական մեծ է, կան նաև տոհմական առանձին գերեզմանոցներ, որոնք ընդհանուր գերեզմանոցից հեռու են երբեմն մի քանի հարյուր մետրով։ Այստեղ կան նաև մատուռներ, գեղաքանդակ խաչքարեր, որոնց վրա դժբախտաբար, արձանագրություններ չկան։ Սակայն իրենց ոճով այս տոհմական գերեզմանոցներն ու խաչքարերը ուշ շրջանի գործեր են (XII—XIV դդ.)։ Ընդհանրապես այս գերեզմանոցից առայժմ ոչ մի արձանագրված քար չի հայտնաբերվել։

Մյուս գերեզմանոցը Արխաշանի ձորի հակառակ եզրին է՝ Անբերդից Բյուրական տանող ճանապարհի ձախ կողմում։ Գերեզմանոցը Ամրոցից հեռու է ավելի քան 500 մետրով։ Այս գերեզմանոցում թաղումներ կատարվել են, հավանաբար, X—XI դդ. սկսած։ Այստեղ նույնպես կան օրորոցաձև գերեզմանաքարեր և գեղաքանդակ խաչքարեր։ Սրանցից մեկը, որ պահպանվել է թերի վիճակում, ունի արձանագրություն։ Կարդացվում է միայն ՔՐԹԻ բառը։ Եթե դա Քուրդ անվան հոլովված ձևն է (Դ-Թ հնչյունափոխությունը սովորական երևույթ էր), ապա կարելի է ենթադրել, որ այն պատկանում է Անբերդին տիրող Վաչուտյան իշխաններին։ Խաչքարերը զարդարող նախշերի մեջ կան բուսական և երկրաչափական մոտիվներ՝ խաղողի և նռան պտուղների

գերակշռությամբ։ Այս գերեզմանոցում թաղումներ կատարվել են, հավանաբար, մինչև մոնղոլական արշավանքները, քանի որ ուշ շրջանի խաչքարեր չեն հայտնաբերվել։

Ինչպես ցույց ավեցին 1965 թ. պեղումները, ամրոցի ներսում թաղումներ կատարվել են եկեղեցու շրջապատում (նկ. 48)։ Եկեղեցու հյուսիսային կողմում պեղված է 200 քառ. մետր տարածություն, որտեղ թաղումները կատարվել են մասսայաբար։ Պարզվեց հետևյալ պատկերը, այստեղ ննջեցյալները թաղվել են այնքան խիտ (մեկը մյուսի վրա), որ ոչ մի կտոր ազատ տարածություն չի մնացել։ Պեղված ընդամենը 200 քառ. մետր տարածության վրա թաղվել են հազարից ավելի դիակ, որոնք մի քանի շարքով դրված են իրար վրա։ Հատկանշական է, որ շատ են երեխաների դիակները։ Մեր կարծիքով, սրա պատճառը երկարատև պաշարման ժամանակ առաջացած սովն ու համաճարակն են։ Մենք ենթադրում ենք, որ պաշարումը տեղի է ունեցել մոնղոլական արշավանքների ժամանակ։ Հնագիտական շերտից գտնված դրամները, որոնք վերաբերում են XII դ. վերջերին և XIII դ. սկզբներին, հաստատում են այդ բանը։

Հետագայում, XVI—XVII դդ., երբ ամրոցն այլևս գոյություն չուներ, և նրա տեղը հասարակ բնակավայր էր, եկեղեցու շրջապատում թաղումները շարունակվում էին։ Այդ մասին վկայում են խաչքարերն ու տապանաքարերը։ Խաչքարերից մի քանիսը ամբողջական են, մեծ մասամբ անխնամ պատրաստված։ Դրանցից մեկի վրա պատկերված է ճյուղավորված նռնենի՝ իր պտուղներով։ Երկու ուրիշ խաչքարերի ամբողջ մակերեսին պատկերված են խիստ ոճավորված խաչեր։ Գերեզմանաքարերից երկուսի վրա կան արձանագրություններ։ Նրանցից մեկը անտաշ լեռ քար է, բնական հարթ մակերեսի վրա, շրջանակի մեջ առնված է ննջեցյալի պատկերը ամբողջ հասակով, վրան մակագրված՝ «ՍԱՓԱՓԻՍ, ՈՎ... ՔԱՐՍ...»։ Մյուսը հարթ տապանաքար է, երեսը և կողքերը՝ մշակված։ Երկարությունը 1,40 սմ է, լայնությունը՝ 58 սմ, վրան ունի արձանագրություն՝ ՄԱՅՐ ՎԴԻ Է Ս. ԹԱԼԻԿ։ Կան նաև ուրիշ խաչքարերի բեկորներ։

Անբերդի խաչքարերից առանձնապես պետք է նշել Զաքարե Ամիրսպասալարի կողմից կանգնեցվածը՝ 1200 թ. Անբերդը ազատագրելու կապակցությամբ։ Այդ խաչքարը այժմ գտնվում է Անտառուտ գյուղի եկեղեցու մեջ։ Նրա ամբողջ մակերեսին պատկերված է ոճավորված խաչ, որի ներքևում և կողքերին գրված է արձանագրությունը։

Անբերդի պեղումներով հայտնաբերվել են նաև քանդակազարդ քարերի մի քանի բեկորներ, մեծ մասը 1936 թ., իսկ մեկը՝ 1965-ին։ Դրանցից երեքը հայտնաբերվել են եկեղեցուց ոչ հեռու. բոլորն էլ եռանկյունաձև են, ընդ որում, երկուսը միանգամայն նույն չափերն ունեն ու նույն զարդերը։ Սրանցից մեկը 20×40 սմ է և 15,5 սմ հաստություն ունի, իսկ մյուս երկուսը՝ 12×24 սմ, 12 սմ հաստությամբ։ Մեծ քարի վրա արված է բարդ նկարազարդում։ Զույգ ճյուղերը, կենտրոնում միանալով, դեպի վեր գնալով բաժանվում և վերջանում են երկու տերևներով. ներքևում նրանք վեր են ածվում հյուսածո զարդերի։ Վերջիններս գնում են տարբեր ուղղություններով։ Ճյուղերի երկրորդ զույգը մեջտեղում բաժանվելով՝ վերևում մտնենում և առաջացնում է երեք թերթանի ոճավորված ծաղիկ։



Մյուս երկու քարերը ավելի պարզ զարդեր ունեն։ Հավանաբար, դա պայմանավորվում է նրանց փոքր չափերով։ Սրանցից յուրաքանչյուրի վրա պատկերված են մեկական զույգ ճյուղ, որոնք կենտրոնում միանալով, կազմում են չորս թերթանի ծաղիկ, իսկ ներքևում՝ հյուսածո զարդեր։ Նման զարդամոտիվները Հայաստանում շատ են տարածված, հատկապես, XII—XIII դդ. խաչքարերի և նույն շրջանի ճարտարապետական այլ հուշարձանների վրա։

1936 թ. Անբերդից հայտնաբերվել է մեկ ուրիշ քանդակազարդ քար։ Այն քառակուսի է (28×28 սմ և 14,5 սմ), երեսը ամբողջովին պատած է հյուսածո զարդերով։ Իրար զուգահեռ ժապավենները հատվում են դիմացից եկող երկու նույնանման ժապավենների հետ։ Նման զարդամոտիվները, որոնք հայտնի էին դեռ VII դ., լայն տարածում ունեին X—XIII դդ.։

1936 թ. հայտնաբերվել է նաև կարևոր կառույցների քարերից մեկը։ Ն. Տոկարսկին գտնում է, որ այն խոյակ է։ Քարի չափերն են 87×74 սմ։ Նրա երկու կողմերը լավ մշակված են, որտեղ արված է 10 սմ լայնություն ունեցող զարդ։ Վերջինս պատկերում է մի քիչ ձգված բողբոջ։ Քարի մյուս երկու կողմերը միայն տաշված են։ Նրա մեջտեղում արված է անցք՝ մետաղե ձողով մյուս քարերին ամրացնելու համար։ Քարը գտնվել է Անբերդաձորի դարբասի մոտ։

Այս քարը հատուկ ուսումնասիրության նյութ են դարձրել Տ. Իզմայլովան[22] և Ն. Տոկարսկին[23]։

1937 թ. Անբերդաձորի կողմում հայտնաբերվել են ևս երկու քար, որոնցից մեկը վեցանկյունանի է, մյուսի մեջ փոս է արված։ Վերջինիս մեջ դրվել են կավե ջնարակապատ շքեղ ամաններ։ Նման կավե աման մինչև վերջերս էլ պահպանվել էր Անբերդի միջնաբերդի արտաքին բուրգերից մեկի վրա։ Անիի շենքերը նույնպես զարդարվել են նման ամաններով։ Եռանկյունի զարդերը Իզմայլովան համարում է XIII դ. մի անհետացած շենքի մասեր։ Այդ զարդերը նա համարում է պրիմիտիվ և գտնում, որ դրանք լայնորեն տարածված էին Կովկասում։ Սակայն նրա ամենամոտ զուգահեռները հեղինակի կարծիքով գտնվում են Հյուսիսային Ադրբեջանում (Դաղստան)։ Վկայակոչելով Դաղստանի քարերից մեկի զարդամոտիվները, որոնք իրենց ոճով նման են Անբերդին, սակայն թռչունի զարդով են, և համեմատելով Անբերդից հայտնաբերված քարի զարդամոտիվների հետ, Իզմայլովան նշում է, որ դաղստանյան զարդամոտիվները ավելի կատարյալ են։

Մեզ թվում է, թե կարիք չկար հասնելու Դաղստան Անբերդի զարդամոտիվների համար համեմատական նյութ ճարելու համար, քանի որ Հայաստանում այդ մոտիվները ավելի տարածված էին։ Անբերդին այնքան մոտ գտնվող Անի մայրաքաղաքը ամեն տեսակի զարդամոտիվ կարող էր մատակարարել։

Տ. Իզմայլովայի այդ վերաբերմունքով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ Դաղստանի զարդամոտիվներից հետո միայն նա հնարավոր է համարում Անբերդի զարդամոտիվները համեմատել Անիի Տիգրան Հոնենցի և այլ հուշարձանների հետ և այդ առթիվ գրում, որ այդ համեմատությունը չի

[22] *Т. А. Измаилова*, Архитектурные фрагменты из Анберда, Труды отдела Востока Государственного Эрмитажа, т. 1, Л., 1939, стр. 295—315.

[23] *Н. М. Токарский*, Капитель из Анберда, Труды отдела Востока Государственного Эрмитажа, т. 3, Л., 1940, стр. 217—223.

հակասում իր արտահայտած հիմնական թեզին։ Այնուհետև նշելով, որ Անբերդից հայտնաբերված զարդամոտիվները պատկանում են աշխարհիկ արվեստի ճյուղին, որոնք XII—XIII դդ. ներթափանցում են նաև կրոնական շենքերի հարդարման մեջ, ժամանակի արվեստը նա բաժանում է երկու խմբի, որոնցից մեկը անվանում է պահպանողական, մյուսը՝ առաջադիմական, որ ամեն կերպ կրկնում էր հին ձևերը։ Նշելով, որ Անբերդի վարպետները առաջնակարգ չէին ինչպես Անիինը, ասում է, որ այդ առանձնահատկությունը ապացույց է այն բանի, որ քանդակները պատկանում են Անբերդ գյուղաքաղաքում կառուցված շենքերի, ինչպես այն անվանում են տեղի եկեղեցու արձանագրության մեջ։ Այնուհետև ավելացնում է. չլինելով արհեստի ու առևտրի կենտրոն, Անբերդը, հավանաբար, գտնվում էր առևտրական ճանապարհներից մեկի վրա, որով այս ամրոցն էին բերում եգիպտական կերամիկա ու ապակի, իրանական թասեր ու չինական սելադոն, որոնք հայտնաբերվել են պեղումներից։ Առևտրական մագիստրալ ճանապարհների վրա գտնվելու նրա դիրքը հնարավորություն էր տալիս շփվելու իր ժամանակի մշակութային կենտրոնների հետ[24]։

Նշենք սակայն, որ Անբերդի եկեղեցու արձանագրության մեջ այն գյուղաքաղաք չի անվանվում, և մեզ ընդհանրապես հայտնի չէ, թե որևէ տեղ Անբերդը գյուղաքաղաք անվանված լինի։ Անբերդը չէր գտնվում նաև առևտրական ճանապարհների վրա։

Խոյակը հատուկ ուսումնասիրության է ենթարկել նաև Ն. Տոկարսկին։ Նա գտնում է, որ քարը պատկանել է VII դ. սկզբներին կառուցված մի շենքի։ Որպես փաստարկ բերվում է խոյակի վրայի անցքը, որը ըստ նրա արվում էր մինչև VII դ. կեսերը և ծառայում էր մյուս քարերին երկաթե ձողով ամրացնելու համար։ Սակայն այս եղանակը հատուկ է նաև X—XI դդ. ճարտարապետությանը, որի համար որպես օրինակ կարող են ծառայել հենց Անբերդի եկեղեցու բազմաթիվ քարերը նման անցքերով։

Մենք առայժմ դժվարանում ենք որոշակիորեն ասել, թե այդ քարը ինչ շենքի է պատկանել։ Հետագա պեղումները, հավանաբար, պատասխան կտան նաև այս հարցին։ Սակայն միանգամայն պարզ է, որ խոյակը պատկանում է X—XI դդ. կառուցված մի շենքի։

---

[24] Т. А. Измаилова, նշվ. աշխ., էջ 315։



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ԱՆԲԵՐԴԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

1936 թ. ամռանը ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ սկսվեցին Անբերդի հնագիտական պեղումները։ Դեռևս 1929 թ. այցելելով Անբերդ, Օրբելին նպատակահարմար գտավ պեղել այդ ամրոցը։ Անբերդի պեղումները պայմանավորվում էին նրանով, որ Անիում Ն. Մառի կատարած պեղումների ընթացքում արդեն պարզվել էր Առաջավոր Ասիայի նշանավոր քաղաքներից մեկի տնտեսական և մշակութային կյանքը։ Այժմ հարկավոր էր պարզել այդ քաղաքների և ամրոցների կապը, դրանց փոխհարաբերությունները և այլ հարցեր։ Արշավախմբի աշխատանքներին մասնակցում էր Լենինգրադի Պետական էրմիտաժի և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի գիտական աշխատակիցների մի մեծ խումբ։

Արշավախումբը նպատակ ուներ 3—4 տարվա ընթացքում հիմնովին պեղել Անբերդ ամրոցը։ 1936 թ. պեղվեցին պալատը, բաղնիքն ու նրա շրջակայքը, ամրոցի հարավային ծայրը, դեպի Անբերդաձոր տանող գաղտնուղին և այլ տեղեր։ Պեղումները մեծ արդյունքներ տվեցին։ Բացվեցին պալատի սենյակներից մի քանիսը, ամրոցի կողմից պալատ տանող մուտքը իր քարե դռնով և 21 աստիճաններով, պալատական ջրամբարը, վերջինիս ջուր մատակարարող կավե խողովակները, ինչպես նաև ճարտարապետական այլ մանրամասներ։

Պեղումները բացեցին բաղնիքի ներսի կառուցվածքը իր տարբեր բաժանմունքներով՝ ջեռուցման կաթսայով, լողարանով, հանդերձարանով։ Բաղնիքի մեջ բացվեցին ջուր մատակարարող կավե խողովակները, ինչպես նաև ջեռուցման բաժանմունքից լողարան տանող երկաթե խողովակները, բաղնիքին կից երկհարկանի շինությունը և այլն։

Արշավախումբը հավաքեց և վերծանեց Անբերդի, ինչպես նաև շրջակա վայրերի վիմական արձանագրությունները։

Անբերդից հայտնաբերված բրոնզե դեղաքանդակ հավանգներն ու աշտանակները, հախճապակե, ջնարակած, կարմիր փայլեցրած և հասարակ խեցեղենի բազմաթիվ օրինակները, ինչպես և երկաթե զենքերն ու աշխատանքային գործիքները իրենց արժեքով խիստ կարևոր են ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Առաջավոր Ասիայի հնագիտության համար։

Հ. Օրբելին և արշավախմբի մյուս անդամները հրատարակեցին առանձին հոդվածներ՝ նվիրված պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերին

---

[1] И. А. Орбели, Баня и скоморох XII века; Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., его же «Қапитель из Анберда»; Т. А. Измаилова, Қерамика из раскопок в Анберде, ее же «Архитектурные фрагменты из Анберда».

և ճարտարապետական հուշարձաններին[1]։ Սակայն հետագա տարիներին Օրբելին չկարողացավ շարունակել Անբերդի պեղումները Էրմիտաժում խիստ զբաղված լինելու պատճառով։

**1963 թվականի պեղումները.**—*ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը որոշեց 1963 թ. վերսկսել Անբերդի պեղումները[2]։ Այդ պեղումները նպատակ ունեին պարզելու Արխաշանի դարբասից սկսվող և դեպի արևմուտք գնացող պարսպապատի կառուցման ժամանակը։ Լրիվ պեղվեց պարսպապատի արտաքին և մասամբ էլ ներքին կողմը։ Պարսպապատը հայտնաբերվել էր 1936 թ. պեղումների ընթացքում արշավախմբի անդամ Հաջյանի կողմից։ Հետագայում Ն. Տոկարսկին այն կարծիքն է հայտնել, որ պարսպապատը նախաարաբական շրջանի կառույց է։*

*Պարսպապատը կառուցված է միջին մեծության կոպիտ տաշված քարերից (քարերից շատերը երկրորդ անգամ են օգտագործված), ցեխի շաղախով, ունի չորս կիսաբոլոր բուրգեր, որոնք եղել են հենապատեր։ Բուրգերի ներսը դատարկ չէ։ Այս կառուցվածքը աչքի է ընկնում իր անարվեստ և աղքատիկ շինելակերպով։ Պարսպապատերը չունեն նույնիսկ խորը թաղված հիմքեր։ Վերջիններս դրված են Զաքարյան կամ Վաչուտյան շրջանի կուլտուրական շերտի վրա։ Պարսպապատի հաստությունը 1,5 մ է։ Պարսպապատի արտաքին մասում՝ բուրգի մոտ հիմքերից ներքև բացվեց մի սենյակ, որի մի պատը մտնում է բուրգի տակ։ Հետագայում շարունակելով պեղումները, բացեցինք նաև այս սենյակի հատակը։ Բացվեց սենյակի հյուսիսային պատը՝ 130 սմ հաստությամբ, շարված մեծ-մեծ քարերով՝ առանց կրաշաղախի։ Սենյակը սալահատակված է, պատերից պահպանվել է միայն առաջին շարքը։ Վերջինիս բարձրությունը 45 սմ է։ Այս պատը և սալահատակը շարունակվում են դեպի բուրգի տակը, որի պատճառով հնարավոր չեղավ լրիվ բացել։ Մեր բացածը, որը, հավանաբար, բնակարանային կոմպլեքսի գլխավոր սենյակն է, ունի նաև օժանդակ կառույցներ, որոնցից հաջողվեց բացել նրա հյուսիսային մասում գտնվող թոնրատունը (նկ. 40)։ Սենյակից թոնրատուն տանող մուտքը ունի 66 սմ բացվածք։ Թոնրատան մի մասը նույնպես գտնվում է բուրգի տակ։ Հնարավոր եղավ բացել նաև թոնրատան արևելյան պատը, կենտրոնում բացվեց մի ամբողջական թոնիր։ Այստեղից հայտնաբերվեց սելջուկյան պղնձե դրամ, որը պատկանում է XII դ. վերջերին։ Սենյակը և դրան կից կառույցները ամբողջովին այրված են և պատված մոխրի հաստ շերտով։ Այստեղ կրակն այնքան ուժեղ է եղել, որ փչացրել է խեցեղեն ամանների ջնարակը և դրամը։ Գտնված պղնձե ղավաթը (նկ. 57), երկու երկաթյա խաչերը (նկ. 80) և այլ իրեր վերաբերում են XII դ. վերջերին և XIII դ. սկզբներին։ Մոխրաշերտը, որը ոչ միայն այստեղ, այլ նաև ամենուրեք նկատվում է Անբերդի այս կուլտուրական շերտի վրա, թույլ տվեց եզրակացնելու, որ մեր բացած սենյակը իր օժանդակ կառույցներով վերաբերում է այն շրջանին, երբ ամրոցը 1196 թ. գրավվելով Զաքարե Ամիրսպասալարի կողմից, հանձնվում է Վաչուտյան իշխաններին, որոնք այն դարձնում են իրենց ռազմական ու վարչական կենտրոնը։ Ամենուրեք նկատվող հրդեհի հետքերը մեզ թույլ են տալիս եզրակացնելու, որ մոնղոլական արշավանքների ժամանակ, 1236 թ., Անբերդը լուրջ դիմադրություն ցույց տալով, գրավվում*

*[2] Պեղումներին մասնակցում էին 1936 թ. արշավախմբի պետի տեղակալ Ն. Տոկարսկին և տողերիս հեղինակը։*



*և ավերվում է։ Բացված պարսպապատը, որը մենք անվանում ենք նոր պարսպապատ, կառուցվել է մոնղոլական արշավանքներից հետո։*

*Անբերդի ժամանակագրության հարցին նվիրված բաժնում մանրամասն խոսել ենք Անբերդի մինչբագրատունյան շրջանի գոյության հարցի մասին, այդ պատճառով այստեղ բավարարվում ենք միայն նշելով, որ ինչպես հնագիտական նյութերի, այնպես էլ պատմական ու գրավոր աղբյուրների ուսումնասիրությունը հիմք չի տալիս պնդելու, որ այստեղ նախքան Բագրատունիները բնակեցված է եղել։ Ինչպես նշեցինք, պեղվեց այս պարսպի ամբողջ արտաքին կողմը։ Առանձնապես հետաքրքիր արդյունքներ տվեց № 2 բուրգից արևելք ընկած տարածության ուսումնասիրությունը (բուրգերը մենք համարակալել ենք արևմուտքից արևելք)։ Հայտնաբերվեց մի խոշոր քար՝ 55 սմ բարձրությամբ։ Սա նույնպես մտնում է պարսպապատի տակ, պատած է կրաշաղախով, սակայն շարքի քար չէ։ Վրայի շաղախը հարթեցված է։ Կրաշաղախը շարունակվում է նաև հատակին՝ նույնպես հարթեցված։ Այստեղ երևան եկավ մոխրի հաստ շերտ, որի միջից հայտնաբերվեցին խեցեղենի բազմաթիվ բեկորներ, շրջապատից գտնվեցին երկաթե խողովակ, մուրճ, դռան փակի մի մասը, եղան պայտ, և երկաթյա անորոշ իրերի մնացորդներ։ Հնարավոր է, որ մենք այստեղ գործ ունենք դարբնի արհեստանոցի հետ, որի գոյությունը Անբերդում շատ հավանական է։ Սակայն այս շինության լրիվ բացումը կապված էր պարսպի քանդման հետ, ուստի այստեղ աշխատանքը չշարունակեցինք (նկ. 58)։*

*Փորձեցինք բացել պարսպապատը ներսի կողմից։ Մեզ հետաքրքրող շինությունը այս մասում չի շարունակվում, սակայն այստեղ ևս բացվեցին շինությունների հետքեր, որտեղից և դուրս եկավ ուշ շրջանի (XIV—XV դդ.) պատկանող խեցեղեն, որից մեծ չափով գտնվել էր 1936 թ., դղյակի պեղումներից[3]։ Պեղվեց նաև № 1 բուրգը արտաքին կողմից։ Այս բուրգը կամ հենապատը դրված է ժայռի վրա։*

*Պարսպապատի՝ բաղնիքի մոտ եղած հատվածը այժմ հարթ է, և ճանապարհը գնում է այստեղից դեպի եկեղեցի։ Այս մասի պեղումները պարզեցին, որ նոր պարսպապատ կառուցելու ժամանակ ճանապարհը չի եղել, այլ այստեղ նույնպես պարսպապատը շարունակվել է։ Ամրոցի կործանումից հետո, երբ XVI—XVII դդ. Անբերդը նորից բնակեցվել է, պարսպապատը, ինչպես և հիմնական պարիսպներից շատերը քանդվել են և վերածվել ճանապարհի։*

*Նոր պարսպապատի միացումը հնին պարզելու համար հարկ եղավ պեղել Արխաշանի դարբասի մոտ, նրանից վերև գտնվող աշտարակը։ Այստեղ մենք հնարավորություն ունեցանք բացելու երեք շինարարական շրջան։ Աշտարակը պատկանում է Բագրատունյաց շրջանին, կամ այն գոյություն է ունեցել մինչև Անբերդի ազատագրումը Զաքարյանների կողմից։ Անբերդն ազատագրելուց հետո Զաքարյաններն անմիջապես ձեռնամուխ են եղել պարսպապատերի և աշտարակների ամրացման գործին. վերաշարվել են փուլ եկած տեղերը և ամուր կրաշաղախով ծեփվել են շարքերի արանքները։ Հավանաբար, որոշ ժամանակ անց Արխաշան գետակի կողմից բացվում է երկրորդ դարբասը։*

*Այստեղ գտնվեցին հասարակ և ջնարակած խեցեղենի բեկորներ՝ խուփ՝ եղան գլուխ հիշեցնող բռնակով, բազալտ քարից երկանքի մաս. բոլորն էլ պատկանում են XIV—XV դդ.։ Այստեղ, նոր պարսպապատից ներս, պեղվեց*

*[3] Տե՛ս Т. А. Измаилова, նշվ. աշխ.։*

մի սենյակ (ոչ լրիվ), բնակարանային կոմպլեքսի թոնրատունը։ Սենյակից հայտնաբերվեցին սանդի ծեծիչ քարը, պղնձե դրամ և խեցեղեն։

Նոր պարսպապատից ներս պեղվեց նրա ամենաբարձր մասը։ Ն. Մ. Տոկարսկու ենթադրությամբ, եթե սա էր ամրոցի հին մասը, ապա այստեղ (չհաշված պալատը) պետք է կառուցված լիներ հին, VII դ. պատկանող եկեղեցին։ Եկեղեցին գտնելու ջանքերն ապարդյուն անցան։ Սակայն բացվեց մի սենյակ, որի պատերը շարված են կոպիտ տաշված քարերով, առանց կրաշաղախի։ Սենյակի մեջտեղում բացվեց մի թոնիր, որի պատերի հաստությունը 2 սմ է, շատ լավ թրծված է, պահպանվել է նաև ակը՝ վրան գծավոր զարդեր։

**1964 թվականի պեղումները.**—1964 թ. աշնանը վերստին ձեռնարկվեցին Անբերդի պեղման աշխատանքները։ Արշավախումբը նպատակ ուներ չափագրել ամրոցի պարսպապատերն ու ճարտարապետական կառույցները։ Ճարտարապետ Կորյուն Ղաֆադարյանի ղեկավարությամբ չափագրվեց ամբողջ պարսպապատը՝ իր երկու դարպասներով և կառուցողական տարբեր շրջաններով։ Չափագրությունների հետ մեկտեղ ձեռնամուխ եղանք պեղման աշխատանքներին։ Պեղումների միջոցով հայտնաբերվեցին պարսպի առանձին մասեր, աշտարակներ, որոնք նույնպես չափագրվեցին։

Անբերդի պարսպապատերի մի մասը շարված է անմշակ, մեծ-մեծ որձաքարերով՝ առանց շաղախի, իսկ մի մասն էլ, հատկապես նրա հարավային ծայրում՝ լավ տաշված մեծ-մեծ քարերով՝ նման ուրարտական շրջանի ամրությունների պատերին։ Այս հանգամանքը երկար ժամանակ ստիպել է ուսումնասիրողներին փնտրել այնտեղ նախնադարյան կամ ուրարտական շերտ։ Այս ենթադրությանը մեծապես նպաստում է նաև Անբերդի դիրքը։

1936 թ. պեղվել էր նաև ամրոցի հարավային ծայրում գտնվող տեղամասը՝ նպատակ ունենալով հայտնաբերել ուրարտական կուլտուրական շերտ։ Պեղումները պարզել էին, որ այս մասում կան միայն միջնադարյան շերտեր։ 1964 թ. մենք նույնպես ձեռնամուխ եղանք այս մասի պեղման աշխատանքներին՝ նպատակ ունենալով պարզել ուրարտական կամ նախաուրարտական շերտի գոյության հարցը։ Պեղումները կատարվեցին 1936 թ. այս մասում պեղված վայրից 30—35 մ դեպի հարավ։ Արևմուտքից արևելք մեկ մետր լայնությամբ և 10 մ երկարությամբ խրամատ անցկացրինք, որը մոտ 30 սմ խորացնելուց հետո գտնվեց ձևավոր քիվի նման մի քար, շուտով բացվեց նաև սենյակը, որին պատկանում էր քարը։ Մաքրվեցին սենյակի հատակը և պատերը։ Պատերից պահպանվել են ստորին շարքը՝ լրիվ (շարքի բարձրությունը 60 սմ է) և դրա վրա ձևավոր գոտու մասեր (նկ. 14)։ Պատերը շարված են սրբատաշ տուֆ քարով՝ առանց կրաշաղախի։ Հայտնաբերված ածխացած գերանների բեկորները ապացույց են այն բանի, որ սենյակը ունեցել է փայտե ծածկ։ Սենյակի հատակը սվաղված էր թույլ կրաշաղախով և ավազով, նախքան սվաղելը այն հարթեցվել է։ Սենյակը պեղելուց հետո քանդեցինք նրա հատակը և մոտ մեկ մետր խորացրինք, սակայն կուլտուրական որևէ շերտ հայտնաբերել մեզ չհաջողվեց։ Այսպիսով, այս պեղումների արդյունքը նույնպես այն եղավ, որ բացի միջնադարյան շերտից այստեղ կուլտուրական այլ շերտեր չհայտնաբերվեցին։ Ամբողջ ամրոցի հետ միասին սենյակը հանկարծակի գրավվել ու հրդեհվել է։ Սրա ամենալավ ապացույցը մոխրի հաստ շերտն է (մոտ 20 սմ) փռված սենյակի ամբողջ մակերեսով։ Հրդեհը այնքան ուժեղ է եղել, որ բրոնզե իրերից մեկը հալվել կպել է պատի քարերին։ Ջնարակապատ խեցեղեն



անոթները այնպես են տուժել կրակից, որ դժվարությամբ են երևում դրանց վրայի գույները։ Սենյակում գտնված գանգերն ու մարդկային կմախքները նույնպես ապացուցում են, որ սենյակը հանկարծակի է գրավվել ու հրդեհվել։ Սենյակում բռնկված հրդեհն այնքան ուժեղ է եղել, որ դուրս է եկել և տարածվել հարևան շինությունների վրա։ Գտնված առարկաներից արժեքավոր են բրոնզե զարդագամերը, քանդակազարդ ամանը բրոնզից, հախճապակե անոթի բեկորը՝ վրան վերադիր զարդերով, պղնձե դրամները և այլ իրեր։ Դրամներից մեկը վերաբերում է XIII դ. սկզբին, իսկ մյուսը, որ նախորդին շատ նման է, այրվել է, և նրա ժամանակը որոշել հնարավոր չէ։ Դրամը և գտնված հնագիտական իրերը ապացույց են այն բանի, որ շենքը ավերվել է մոնղոլական արշավանքների հետևանքով։ Այստեղից արևելք՝ դեպի պարիսպները բացվեց մի թոնրատուն մեջը թոնիր՝ սալ քարով փակված և մի կարաս։ Թոնրի և կարասի մակարդակները հավասար են և նախորդ սենյակից բարձր։ Սակայն հնարավոր է, որ սրանք բոլորն էլ միևնույն ժամանակի կառույցներ են։ Ուռուցիկ գոտիներով զարդարված կարասի միջից դուրս եկավ սև փայլեցրած, բարակ պատերով ամանի՝ հավանաբար փարչի մի մասը։ Նման հետախուզական պեղումներ կատարվեցին նաև սենյակի մյուս կողմերում։ Հետաքրքիրն այն է, որ սենյակի շրջապատում շինության պատեր չհայտնաբերվեցին, սակայն հնագիտական առարկաներ հայտնաբերվում էին բավարար քանակով։

Միևնույն ժամանակ պեղվեցին նոր պարսպի № 2 բուրգի արևելյան և հարավային կողմերում գտնվող սենյակները, որոնք բացվել էին 1936 թ. պեղումների ժամանակ, երբ ամբողջ նոր պարսպապատը բացվեց։ Պարսպի հիմքից ներքև բացվեց մի սենյակ՝ իր օժանդակ կառույցներով, որոնք պատկանում են XIII դարին։ Սենյակի հատակը սալահատակված էր բարակ, մեծ սալերով։ 1964 թ. սենյակը չափագրելուց հետո հանեցինք սալերը և պեղեցինք դրանց տակը։ Պարզվեց, որ սալերի տակ գոյություն ունի բավական հաստ կուլտուրական շերտ։ Գտնվեցին ջնարակած ու հասարակ խեցեղենի բեկորներ։ Տարածության փոքր լինելու պատճառով հնարավոր չեղավ պեղումները ծավալել (մի կողմից նոր պարիսպն էր խանգարում մյուս կողմից՝ ուշ միջնադարյան կառույցները)։ Այստեղ հայտնաբերվեցին նաև երկաթե առարկաներ։ Սենյակից հարավ բացվեց մի այլ շինության հետք, որը նույնպես ավելի վաղ շրջանի է պատկանում և մեզ թվում է, որ այս, ինչպես նաև մյուս սենյակի սալերի տակ հայտնաբերված շերտը պատկանում է X—XI դդ. (նկ. 59)։ Սրանից ներքև մայր հողն է՝ ավազախառն կավով։ Այս սենյակի պատի հաստությունը 60 սմ է՝ մեծ-մեծ քարերով, առանց կրաշաղախի։ Հայտնաբերվեցին նաև սենյակի շեմքը, որը բավական մաշված էր, մանգաղի մաս, նրբախեցի ամանի բեկորներ, հասարակ ծիթահրագ, ջնարակած խեցեղեն և այլ առարկաներ։ Այստեղի հետագա պեղումները նույնպես կապված էին պարսպի քանդման հետ, ուստի դադարեցվեցին՝ մինչև վերջիններիս լրիվ չափագրումն ու ֆիքսացումը։

Պեղվեց նաև միջնաբերդ-պալատը։ 1936 թ. այստեղ պեղվել էր երեք սենյակ և մեզ թվում էր՝ լրիվ։ Սակայն 1964 թ. պեղումները ցույց տվեցին, որ աշխատանքները մինչև վերջ չեն հասցվել։ Պեղեցինք երրորդ սենյակը։ 1936 թ. պեղումներով այստեղ բացվել էր մի շերտ, որտեղ իրար կողքի հայտնաբերվել էին բազմաթիվ թոնիրներ։ Մասամբ էլ պեղվել էր թոնիրներից

ներքև ընկած ջրերը։ Այդ ջրերից ներքև սենյակի հատակը հարթեցնելու նպատակով, լիցք էր արված։ Լիցքը հիմնականում սենյակի արևելյան մասում էր։ Դա հետևանք է այն բանի, որ պալատը կառուցելիս, տեղանքի խիստ թեքության պատճառով, հատակը հարթեցվել է մեծ-մեծ քարերով, որոնց վրա էլ մանր քարեր են շարվել։ Հետագայում, երբ սենյակները փլվել են, մնացած հարկերի պարունակությունն, ինչպես նաև փլված պատերի քարերը կուտակվել են հատակին, որի հետևանքով արևելյան մասը ավելի բարձր է մնացել, քան արևմտյանը։ 1936 թ. սենյակը պեղելով վերևից ներքև, հասել են արևելյան մասում հարթեցման համար գործածված քարերին և նույն մակարդակով էլ պեղել սենյակի արևմտյան մասը, որի տակ մնացել է կուլտուրական հաստ և հարուստ շերտ։ 1964 թ. մենք սկսեցինք պեղել հենց այս արևմտյան մասը։ Այստեղ սկզբում բացվեցին տարբեր տրամագծի մի քանի թոնիրներ։ Դվինի միջնաբերդում նույնպես բացվել են սենյակներ, որոնցից յուրաքանչյուրի մեջ 3—4 թոնիր է եղել։ Այս կապակցությամբ Կ. Ղաֆադարյանը գրում է, որ մինչև այսօր էլ թոնրատանը լինում են առնվազն 3 թոնիր՝ մեծ, միջակ և փոքր, որոնք տարբեր նպատակների են ծառայել[4]։ Պրոֆ. Բ. Առաքելյանը թոնիրների շատությունը վերագրում է XIII—XIV դդ.[5]։ Պետք է նկատել, որ այս դրույթը հաստատվում է նաև Ամբերդի պեղումներով։ Ամբերդի պալատը իր գոյության սկզբնական և ծաղկման շրջաններում իսկապես պալատ էր։ Այս շրջանում թոնրատները, ինչպես և տնտեսական նպատակների ծառայող այլ շենքեր, բնականաբար, պալատից դուրս էին գտնվում։ Միայն Լենկթեմուրի արշավանքներից հետո, երբ ամրոցը հիմնովին ավերվեց և դադարեց որպես այդպիսին գոյություն ունենալուց, պալատն էլ դադարեց իշխանական ապարանք լինելուց և հետագայում՝ XVI—XVII դդ., երբ նորից բնակեցվեց, պալատը դարձավ սովորական բնակարան։ Նրա մեծ դահլիճները մանրատվեցին փոքր սենյակներով և այլ հարմարություններով։ Այս է պատճառը, որ վերևի շերտերում բոլոր սենյակներում հանդիպում են մեկից ավելի թոնիրներ։ Այստեղ պեղումների հենց առաջին օրը դուրս եկավ մի բրոնզե հավանգ՝ մեջը չորս հատ փական քանդակներով։ Այն կշռում է ուղիղ 5 կգ։ Նման երեք հավանգներ գտնվել են 1936 թ. պեղումներից՝ բաղնիքի շրջապատում։ Պետք է ասել, սակայն, որ մյուս պեղումներից նման հավանգների հայտնաբերումը շատ հազվադեպ է։ Հավանգի տակ գտնվեց նրան կպած բամբակ (միջնադարյան Հայաստանում բամբակ արտադրվում էր Արարատյան դաշտավայրում և բերվում նաև Ամբերդ, որի մասին վկայում է Ամբերդի եկեղեցու արձանագրությունը)։ Այստեղից դուրս եկավ նաև հախճապակե փոքր անոթի բեկոր։ Գտնվեց նաև նույն տիպի, դրսից կանաչ ջնարակով պատած բարձրորակ անոթի նույնպիսի բեկոր։ Սրանք ներմուծված առարկաներ են։ Գտնվեցին նաև ապակե շատ նուրբ անոթների բեկորներ, որոնցից մեկը շատ բարակ է, նուրբ ու թափանցիկ և հավանաբար ջահի բեկոր է։ Պեղվեց նաև արևելյան պարսպի մեջ գտնվող հնձանը, որը փորված է պատի կենտրոնում, շարված է փոքր որձաքարերով և ամուր կրաշաղախով ծեփված։ Այսպես է պատրաստված նաև հատակը, որը գոգավոր է։ Հնձանը ունի մոտ 1 մ տրամագիծ և 1,2 մ

4 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 52—53։

5 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 220։





Ամրոցը հյուսիս-արևմուտքից



Միջնաբերդը ամրոցի կողմից

*խորությամբ։ Նման հնձաններ շատ կան պարսպի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան հատվածների վրա։ Դրանք պատկանում են Անբերդի կյանքի վերջին շրջանին, երբ ամրոցը որպես այդպիսին գոյություն չուներ, և պարսպապատերը քանդված էին ու այլևս չէին նորոգվում։ Նոր բնակարաններ կառուցելու համար պարսպի քարերը այժմ օգտագործվում էին որպես պատրաստի քար, իսկ մնացած մասերի մեջ տեղադրվում էին օժանդակ կառույցները ի թիվս որոնց, նաև հնձանները։*

**1965 թվականի պեղումները.**—*Անբերդում վերանորոգման աշխատանքներ կատարելու կապակցությամբ ՀՍՍՀ Պետշինի հուշարձանների վերանորոգման և պահպանության բաժինը 1965 թ. կատարեց մաքրման աշխատանքներ։ Եկեղեցու շրջապատում, հատկապես հյուսիսային կողմում, հողը դարերով կուտակվելով, փակել էր շինության հյուսիսային պատը՝ մոտ երկու մետր բարձրությամբ։ Եկեղեցու կտուրից թափվող անձրևաջրերը ծծվում էին այդ հողի մեջ և քայքայում եկեղեցու հիմքերը։ Այդ պատճառով որոշվեց հեռացնել հողը՝ մոտ 20 մ լայնությամբ։ Նախ, պարզվեց, որ ուշ շրջանում, XVI—XVII դդ., եկեղեցուն կից մարդիկ են բնակվել։ Բնակարանային կոմպլեքսի պատերը կցել են եկեղեցուն։ Բացված շինության պատերը բազալտ քարերից են, որոնց մեծ մասը վերցված է ամրոցի պարսպից։ Այստեղ բացվեց մի այսպիսի հետաքրքիր տեսարան. բազալտ մեծ քարը, որ մի ժամանակ ուրիշ կառույցի է պատկանել, տաշել, շինել են օրորոցաձև տապանաքար։ Հետագայում այլ նպատակի համար քարի մեջ փոս են արել։*

*Դրանից ներքև բացված շերտը պատկանում է XIII դարին։ Կատարված են մասսայական թաղումներ։ Դա կապված է եղել մեծ աղետի հետ։ Հնագիտական նյութն ու գտնված դրամները մեզ այն համոզման են բերել, որ այս երևույթը կապված է մոնղոլական արշավանքների հետ։*

*Արդեն առիթ ենք ունեցել նշելու, որ ամրոցների ներսում գերեզմանոցներ չէին լինում։ Անբերդի երկու գերեզմանոցներն էլ ամրոցից դուրս են։ Այստեղ մեր պեղած մասում դիակներն արտակարգ շատ են։ Սկսած եկեղեցու անմիջապես մուտքից, դիակները մի քանի շարքով դրված են իրար վրա, և դա ոչ թե տարբեր, այլ նույն ժամանակի թաղումներ են։ Շատ կան նաև երեխաների դիակներ։ Պարզ երևում է, որ առանձին գերեզմանոցներ չեն արել, այլ թաղել են խիտ առ խիտ։*

*Ինչպես երևում է պեղումներից, Անբերդը մոնղոլներին համառ դիմադրություն է ցույց տվել։ Գրոհով վերցնել ամրոցը նրանց չի հաջողվել։ Մոնղոլները պաշարում են ամրոցը, որի ընթացքում, հավանաբար, վերջանում է սննդի պաշարը կամ համաճարակ է սկսվում, և տեղի են ունենում մասսայական մահացություններ։ Բնական է, որ պաշարված ամրոցը մահացածներին դուրս հանել չէր կարող, այդ պատճառով թաղում են եկեղեցու մոտ։*

*Դրանից ներքև բացված շերտը վերաբերում է Բագրատունյաց շրջանին։ Այստեղ եկեղեցուց մոտ 20 մ հեռավորության վրա բացվեցին շինության հետքեր, որոնց ինչ լինելը պարզել չհաջողվեց, քանի որ դրանք շարունակվում էին դեպի հյուսիս, որտեղ հողի հաստ շերտ է։ Դրանք ժամանակակից են եկեղեցու կառուցմանը։ Մեր հետախուզումները հնագիտական նյութ գրեթե չտվեցին։ Սա բացատրվում է նրանով, որ մեր բացածը բնակելի շինություն չէ (եկեղեցու շրջապատում իր ժամանակին չէին բնակվում)։*

*Հայտնաբերվեցին եկեղեցուն պատկանող շատ քարեր ու բեկորներ,*

*ծածկի սալաքարեր, չնայած դրանցից շատ գտնվեցին, սակայն ամբողջական չեն և վերանորոգման համար ոչ պիտանի։ Հողը եկեղեցու շրջապատից հեռացնելուց հետո, պատի մոտ թեքություն արվեց՝ ջուրը հեռացնելու համար, իսկ վերանորոգման համար գտնված պիտանի քարերը շարեցինք եկեղեցու մաքրված պատի տակ։*

**1966 թվականի պեղումները.**—*Շարունակվեցին եկեղեցու շրջապատի մաքրման աշխատանքները։ Այստեղ կարգի բերվեցին և դասավորվեցին 1965 թ. գտնված մի քանի քանդակազարդ քարեր ու խաչքարի բեկորներ։ Պարզվեց, որ ինչպես եկեղեցու հյուսիսային, այնպես էլ հարավային և արևելյան կողմերում թաղումները շարունակվել են նաև ուշ դարերում։ Հարավային կողմը XV—XVII դդ. վերածվել է գերեզմանոցի, որտեղ կան տափակ ու օրորոցաձև, մեծ մասամբ կոպիտ տաշված տապանաքարեր։ Տափակ քարերի վրա վերարտադրվել են մարդկանց պատկերներ։ Տապանաքարերը արձանագրություններ չունեն։*

*Եկեղեցու հարավային կողմում՝ նրան կից կա մի փոքր շինություն, որից պահպանվել են արևելյան պատի որոշ հետքեր։ Մաքրվեց նաև այս շինության ներսը, բացվեցին պատերի պահպանված մասերը։ Շինությունն ունի ձևավոր գոտի, որից մի քանի քարեր պահպանվել են իրենց տեղում։*

*Հողից մաքրվեցին ու եկեղեցու հարավային պատի տակ դասավորվեցին նրան պատկանող քարերը, այդ թվում նաև արձանագրվածները, որոնք 1936 թ. դեռ իրենց տեղում էին և ընկել են վերջին տարիների ընթացքում։ Եկեղեցուն պատկանող քարեր կան թափված նրանից մոտ 100 մ հեռավորության վրա, հատկապես հարավային մասում։ Առանձին տեղերում կատարվեցին ստուգողական պեղումներ՝ պարզելու համար, թե այդ քարերից հողի տակ չկա՞ն արդյոք։ Այստեղ պարզվեց, որ տեղանքի թեքության պատճառով մեծ հաստության հողաշերտեր են գոյացել վերջին դարերի ընթացքում, և որ եկեղեցուն պատկանող քարերը, որոնք ժամանակին ընկել են, այժմ ծածկված են հողի երկու մետրանոց շերտով։*

*Այդ աշխատանքների միջոցով մաքրվեցին ու կարգի բերվեցին եկեղեցին և նրա շրջապատը։ Բացվեց եկեղեցու հյուսիսային մուտքը, որը կիսով չափ հողով էր լցված, հատուկ ջրհեռացման առուներ փորվեցին՝ մաքրված մասերից անձրևաջրերը հեռացնելու համար։*

*Միևնույն ժամանակ աշխատանքները շարունակվեցին 1963 թ. պեղված նոր պարսպի № 3 և № 4 բուրգերի մոտ։ Շարունակեցինք բացել Բաղրատունյաց շրջանին պատկանող սենյակը։ Նրան կից բացվեց մի թոնրատուն՝ փոքր մակերեսով (մոտ 10 քառ. մետր)։ Այստեղից հայտնաբերվեցին մեծ թվով ինչպես հասարակ, այնպես էլ ջնարակած խեցեղեն անոթների բեկորներ։*

*1965 թ.՝ աշխատանքների վերջին օրը, մեր ուշադրությունը գրավեց եկեղեցուց մոտ 100 մ հյուսիս գտնվող կրաշաղախի կանգվածը։ 1966 թ. այս մասում պեղումներ կատարելով, պարզեցինք, որ պատկանում է մի բավական մեծ շինության։ Հաջողվեց բացել այդ շինության մի մասը, որը շարունակվում է դեպի արևմուտք։ Դա մեծ, սրբատաշ բազալտ քարերով, ամուր կրաշաղախով պատ է (նկ. 60)։ Պատի հարավային կողմում, որը հավանաբար շինության ներսն է, բացվեց որմնասյուն՝ քառանկյունի հատակագծով։ Շինության քարերը իրենց չափերով մոտ են եկեղեցու քարերին։*

**1968 թվականի պեղումները.**—*(Արշավախմբի կազմը (նկ. 65) Ս. Հարությունյան, Ռ. Եփրեմյան, Ա. Միրիջանյան, Տ. Արծրունյան, Ն. Հակոբյան,*





*Գծ. 15. Ամրոցի հին մուտքը՝ հատակագիծ և կտրվածքներ։*

*Ս. Մախաչյան)։ Պեղումները սկսեցինք եկեղեցուց հյուսիս բացված շինության մաքրումով։ Պարզվեց, որ գործ ունենք պարսպի հին մուտքերից մեկի հետ։ Այդ պատճառով պեղումների երրորդ օրը մեր բացած պատից մի քանի մետր հարավ սկսեցինք փնտրել մուտքի հանդիպակաց պատը և այս մասում պեղումները ավելի ընդարձակելով գտանք այն։ Դրանք իրարից հեռու են 2,32 մետրով և չունեն հանդիպակաց արևելյան և արևմտյան պատեր։ Շուտով ի հայտ եկան մուտքի երկու անկյունները պարսպի արտաքին կողմից։ Հետագա դարերում այս մուտքը փակվել է և պարսպի այս մասը շարվել։ Սակայն այս շարվածքը պարսպի ընդհանուր շարվածքի հետ չի բռնում, մանր քարերով է ու անարվեստ։ Անկյունները շարված են մեծ-մեծ որձաքարերով և շատ նման են մեր բացած կառույցի շինելակերպին (գծ. 15)։ Պարզվեց, որ մուտքը դրված է մայր հողի վրա և նրա տակ ոչ մի հնագիտական շերտ գոյություն չունի։ Այս հանգամանքը մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ ամրոցի այս մուտքը ամենանախնականն է և ամրոցը կառուցելու ժամանակից այն գոյություն է ունեցել ու փակվել է, հավանաբար, XII—XIII դդ., երբ ամրոցի համար նպատակահարմար են գտել բացել ուրիշ մուտքեր։ Հետագա դարերում այդ մուտքի երկու պատերին կցելով փոքր քարերով անարվեստ շարված արևելյան ու արևմտյան պատեր, այն օգտագործել են որպես բնակարանային կոմպլեքսի կառույց։ Մուտքի շրջապատի պեղումները ցույց տվեցին, որ ամրոցի անկման շրջանում (XIV—XVII դդ.) մուտքի պատերի մեծ ու սրբատաշ քարերից երկուսը տարել օգտագործել են կողքի սենյակի համար։ Այս մասում պեղումներն ավարտելուց հետո այդ քարերը մենք դրեցինք իրենց տեղում։ Փորձեցինք պարզել նաև, թե ճանապարհը այս մուտքով ամրոց մտնելուց հետո ինչպես է ճյուղավորվել։ Առայժմ մեզ հաջողվել է գտնել նրա միայն հարավային ճյուղավորումը։ Պարզորոշ առանձնանում են հնագիտական երկու շերտ, որոնցից առաջինը թվագրվում է X—XIII, մյուսը XVI—XVII դարերով։*

*Միաժամանակ պեղումները սկսվեցին հարավային տեղամասում՝ եկեղեցուց մոտ 200 մ հարավ։ Այստեղ պարսպի մոտ բացվեցին նախ XVI—XVII դդ. պատկանող բնակարանային կոմպլեքսները, որոնցից հյուսիսայինը սուրանկյուն եռանկյան հատակագիծ ունի (նկ. 57)։ Այստեղից գտնված առարկաներն էլ քիչ են, մեծ մասամբ հասարակ ու կոպիտ խեցեղենի բեկորներ։*

*Սրանից ներքև ընկնող շերտը պատկանում է XII—XIII դարերին։ Այստեղ բացվեց մի սենյակ, որն իր չափերով նման է 1964 թ. ամրոցի հարավային մասում բացված սենյակին, սակայն անկանոն քառանկյունի հատակագծով։ Հատակը պատված է հարթ տաշված սալաքարերով։ Սրանք խնամքով իրար մոտ են դրված, այնպես, որ սալերի միջև տարածություն չի մնում։ Մուտքը փոքր է և բացված է հարավային կողմում։ Սենյակը պարսպից հեռու է 5 մետրով։ Այս, ինչպես և 1964 թ. բացված սենյակի շրջապատում, նույն մակարդակի վրա կառույցներ չեն երևում։ Գտնված թոնիրներն ու պատերը ավելի բարձր են։ Սրանից ներքև նույնպես մայր հողն է։ Սակայն ի տարբերություն մյուս շինության, այս սենյակը հնագիտական առարկաներով այնքան էլ հարուստ չէր։ Սրանից հյուսիս բացվեցին մի քանի այլ շինություններ, որոնցից լավ պահպանվել են երկու երկարավուն պատեր։ Սրանց միջև եղած տարածությունը նույնպես փոքր է և շուտով պարզվեց, որ մենք այստեղ գործ ունենք դարբնոցի հետ։ Դուրս եկան ոչ միայն մեծ քանակությամբ երկաթի*



*խարամ, այլև երկաթե շատ առարկաներ, որոնց մի մասը դեռ թերավարտ։ Այդ շինության մեջ հայտնաբերվեցին մեծ ու փոքր թոնիրներ։ Դարբնոցներ Անբերդում բավական շատ են եղել։ Միայն 1968 թ. մենք բացել ենք երեքը։ Դարբնոցներին հատկացված շինությունները շատ անխնամ են կառուցվել և վատ են պահպանվել։ Այդ է պատճառը, որ դրանք հաճախ դժվար է ճանաչել։*

*Սակայն ամենահետաքրքիրը կառուցապատման այն հսկայական տարբերությունն է, որ ցայտուն կերպով նկատվում է պետականության առկայության և ամրոցի անկման ժամանակաշրջանի միջև։ Պարզորոշ նկատվում է հատուկ հոգատարություն ամրոցի, նրա պարիսպների ու բուրգերի նկատմամբ պետականության շրջանում, և ընդհակառակը։ Ավելին. առաջին շրջանում նկատվում են կառուցապատման որոշակի սկզբունքներ։ Երբ գործում էր ամրոցն իր պաշտպանական սիստեմներով, պարսպի ներսի կողմում հինգ-վեց մետր տարածություն էր թողնվում, պաշտպան զինվորների շարժումը ամրոցի պարիսպների ու աշտարակների այս կամ այն հատվածից մեկ ուրիշ հատված արագ ու դյուրին տեղափոխելու համար։ Վերոհիշյալ ժամանակաշրջանում մեր պեղած տեղամասում այդ տարածության վրա ոչ մի կառուցապատում չի արված։ Իսկ դրան հակառակ, անկման շրջանում, շինությունների պատերը բոլոր տեղերում կցված են ամրոցին։ Պարիսպներն արդեն որոշ հատվածներում օգտագործվել են որպես բնակարանային և այլ կառույցների պատեր. իսկ որոշ տեղերում էլ քանդել ու օգտագործել են նոր շինությունների համար։*

*Մաքրվեց նաև Արխաշանի դարբասի ներսը, մասամբ էլ դուրսը։ 1968 թ. մաքրվեց այդ դարբասի կրկնակի մուտքի արևմտյան կողմը։ Պարզեցինք նաև նրա միացումը հին դարբասի հետ։ Դարբասից ներս գնացող ճանապարհը գտնելու համար պեղեցինք այդ մուտքից ներս ընկած տարածությունը։ Պարզվեց, որ ճանապարհի մի հատված փոքր-ինչ թեքվելով արևելք, շարունակվում է պարսպի մոտով։ Նույն նպատակով պեղեցինք նաև մուտքից ներս՝ դեպի արևմուտք եղած հարթ տարածությունը, կարծելով, որ ճանապարհի մի ճյուղն էլ գնում է այդ ուղղությամբ։ Սակայն մեր սպասածին հակառակ, այդտեղ բացվեց մի դարբնոց, գրեթե մուտքին անմիջապես կից։ Դարբնոցը, հավանաբար, Բագրատունյաց շրջանի կառույց է։ Երկաթե առարկաների հետ այնտեղ հայտնաբերվեցին պղնձե ու բրոնզե առարկաների մասեր։ Պեղումները պարզեցին նաև, որ անկման շրջանում համատարած կառուցապատվել է՝ ընդհուպ մինչև մուտքը։*

*Այս աշխատանքներին զուգահեռ բարեկարգեցինք այս մուտքը՝ որոշ չափով կատարելով ամրացման աշխատանքներ, պատրաստելով հարթ ճանապարհ՝ ամրոց այցելողների համար։*

*1968 թ. աշխատանքներ սկսվեցին Անբերդաձորի մուտքի մոտ՝ նպատակ ունենալով բարեկարգել այն և բացել այցելուների համար։ Մաքրեցինք նաև արտաքին մուտքի արևմտյան կողմում գտնվող կրկնահարկ աշտարակի առաջին հարկը։ Ուշագրավ է, որ այստեղ Բագրատունյաց կամ Զաքարյան շրջաններին վերաբերող հնագիտական առարկաներ գրեթե չկան։ Սա վկայում է, որ աշտարակը ոչ թե մշտական, այլ ժամանակավոր կացարան է եղել պահապան զինվորների համար։ Այստեղ ամենահետաքրքիրը բետոնե հարթ ծածկի հայտնաբերումն էր։ Այն գտնվեց աշտարակի առաջին հարկի հատակին՝ մեծ բեկորներով։ Բեկորներից մեկը մոտ երկու մետր երկարությամբ և մեկու-*

կես մետր լայնությամբ զանգված է (մնացածներն ավելի փոքր են), հաստությունը՝ 15 սմ։ Ամուր կրաշաղախ է, որն ստացվել է մաքուր կրից՝ ավազի քիչ խառնուրդով։ Սրանով ծածկվել է աշտարակի երկրորդ հարկը (առաջին հարկը ծածկվել է փայտե գերաններով, որոնց ոչ միայն մնացորդներն են հայտնաբերվել տեղում, այլև պատի մեջ գերանների համար արված կլոր փոսերը)։ Մենք արդեն նշել ենք, որ միջնադարյան Հայաստանի աշտարակների պաշտպանական ակտիվ կառույցը տեղադրվում էր վերևի հարթակում։ Այս գյուտը կարևոր է հենց նրանով, որ ապացուցում է մեր ենթադրության իսկությունը։

Անբերդածորի հին մուտքի ներսի կողմում, ինչպես և իր իսկ մուտքի մեջ, ուշ շրջանում բնակարաններ են կառուցվել, որոնք փակել էին մուտքը։ Սա ապացույց է, թե նշված ժամանակաշրջանում այս մուտքը նույնպես չի օգտագործվել։ Հարկ եղավ դրանք չափագրելուց հետո հանել, որպեսզի մուտքը բացվի։

Վերջացնելով մեր խոսքը մուտքերի պեղումների մասին, պետք է նկատենք, որ հնագիտական պեղումները այստեղ ևս նույն պատկերն են վեր հանում, ինչ պարիսպների և բուրգերի դեպքում. ինչքան հոգատարություն որ ցուցաբերվել է սրանց նկատմամբ պետականության ժամանակներում, նույնքան էլ անուշադրության ու անտարբերության են դրանք մատնվել մեր ժողովրդի համար այնքան մղձավանջային դարերում։

Պեղումները մեծ ծավալով շարունակվեցին միջնաբերդում (Ն. Հակոբյան, Ռ. Եփրեմյան, Ս. Մախատչյան)։ Պեղվեց միջնաբերդի մուտքից արևելք III սենյակը։ Պարզվեց, որ սենյակի միայն արտաքին պատերն են կրաշաղախով, իսկ ներսի պատերը հասարակ ցեխով են շարված։ Սենյակը պեղվեց մինչև հատակը, ուր հայտնաբերված կուլտուրական շերտը ծածկված է մոխրով։ Վերջինս, հավանաբար առաջացել է մոնղոլական արշավանքների ժամանակ՝ հրդեհման պատճառով։ Այս շերտից դուրս եկան հնագիտական բազմաթիվ առարկաներ, որոնց մեջ մեծ թիվ է կազմում խեցեղենը։ Այս հանգամանքը ստիպում է մտածել, որ մենք գործ ունենք տնտեսական նպատակների ծառայած սենյակի հետ։ Այստեղ ոչ ճշգրիտ հաշվումներով գտնվեցին մոտ 70 տարբեր ամանների բեկորներ։ Հետաքրքիրն այն է, որ կան ինչպես սափորներ ու կճուճներ, փոքր կարասներ, այնպես էլ ջնարակած թասեր ու այլ անոթներ։ Ճեծ տոկոս են կազմում նաև մանրահատիկ կավից պատրաստված կարմիր ներկած նուրբ պատեր ունեցող թասերն ու քրեղանները, որոնք, ի դեպ, ամրոցի մյուս մասերից հազվադեպ են հայտնաբերվել։ Գտնվեցին նաև բրոնզե առարկաներ։ Հատկապես նշելի է բրոնզե աշտանակի գյուտը (նկ. 61)՝ դրված մեծ աղյուսի վրա, որը մատնանշում է, որ այն իր տեղում է մնացել։ Գտնվեցին նաև նետասլաքներ և երկաթե այլ առարկաներ։ Այս սենյակի հատակը մյուսների նման նախ հարթեցրել են մեծ քարերով, ապա՝ մանր քարերով, այնուհետև լցրել են մանրահատիկ կավ և հարթեցրել ու տոփանել։

Պեղվեց նաև միջնաբերդի արտաքին պարսպի ու հետագա դարերում կառուցված բուրգերով պատի միջև ընկած տարածությունը։ Այստեղ դարերի ընթացքում երկու պատերի միջև կուտակվել են հողն ու քանդված պատերի բեկորները՝ առաջացնելով 10 մետրից ավելի հաստություն ունեցող շերտ։ Նախ ձեռնամուխ եղանք այս հատվածի արևելյան մասի պեղման աշխատանքներին։ Այստեղից դուրս եկան պարսպի բեկորներ, ինչպես նաև կրաշաղախի



մանր ու խոշոր զանգվածներ։ Այս շինարարական մնացորդների միջից գտնված հնագիտական իրերը, բնական է, շատ սակավաթիվ էին։ Սակայն բացի պարսպի քարերից, այստեղից դուրս եկան նաև որթատաշ մեծ քարեր, որոնք թե՛ չափերով և թե՛ մշակմամբ շատ նման են Վահրամաշեն եկեղեցու քարերին։ Հավանաբար, մենք այստեղ գործ ունենք մի կարևոր կառույցի ավերակների հետ, որի հիմքերը առայժմ հնարավորություն չենք ունեցել պարզելու։

Ամենահետաքրքիրը այստեղ վահանի գյուտն է՝ 4,5 մ խորության մեջ (նկ. 62), պարսպի թափված քարերի անմիջապես տակից։ Այս հանգամանքը շատ կարևոր է ժամանակը որոշելու համար։ Պարիսպը (խոսքը արտաքինին է վերաբերում) քանդվել կարող էր միայն XIII դ. հետո, երբ ամրոցը երկար ժամանակով ամայացավ։ Քանի որ այդ շրջանի պարսպի քարերի անմիջապես տակն է հայտնաբերվել վահանը, սա անշուշտ ապացույց է այն բանի, որ դա ավելի վաղ շրջանի պատկանել չէր կարող։ Դեռ ավելին, կարելի է պնդել, որ այն մոնղոլական արշավանքների ժամանակ հենց կռվի ժամանակ է ընկել այստեղ, դա ամրոցը պաշտպանող զինվորներից մեկի վահանն է։

Այստեղից հայտնաբերվեցին նաև երկաթե այլ առարկաներ, որոնցից մի մասը անմշակ կամ կիսամշակ վիճակումն է։ Հնարավոր է, որ միջնաբերդի այս մասում (նրա առաջին հարկում) ժամանակին եղել է դարբնոց։

Շարունակվեցին աշխատանքները Անբերդի ջրամատակարարման հարցերը պարզաբանելու ուղղությամբ (աշխատանքները ղեկավարում էր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիդրավլիկայի ամբիոնի ավագ դասախոս Ռ. Եփրեմյանը)։ Նախորդ տարիների՝ մանավանդ 1936 թ. պեղումների ընթացքում պարզվել էր, որ ջուրը ամրոց է բերվել 4—5 կմ հեռավորությունից՝ Անբերդաձորից։ 1968 թ. կարողացանք գտնել այդ ջրի ակունքը, որը բաղկացած է մի քանի աղբյուրներից։ Կատարվեց տեղահանույթ՝ ամբողջ ջրամատակարարման գծի երկարությամբ։ Միջնաբերդի ջրամբարը ջուրը մտել է կավե խողովակներով, որը պարզվել էր նախկինում։ Հայտնաբերվեց մաքրող-ֆիլտրող կարասը՝ պարզարանը, մոտ 50 սմ բարձրությամբ, նեղ բերանով (գծ. 16)։ Կարասի երկու հանդիպակաց կողմերում արված են կլոր անցքեր՝ ջրատար խողովակների համար։ Պարզվեց նաև, որ նախքան ջրամբար մտնելը մի խողովակաշար ընդհանուր ջրատարից բաժանվելով գնում է միջնաբերդից դուրս (գծ. 17)։ Հետագա ուսումնասիրությունները պարզեցին, որ այն ամրոցի ջրամբարին ջուր մատակարարելու համար է։ Սակայն այս մասում որոշ հատվածներ չհաջողվեց ուսումնասիրել՝ տեղանքի պատճառով։

Ջրամատակարարման հարցում նշանակալից էր երկրորդ գաղտնուղու հայտնաբերումը։ Սա գտնվում է արևմտյան պարիսպներից մի քիչ ներքև։ Գաղտնուղին նման է հարավային պարիսպների մոտ գտնվող, 1936 թվականին պեղվածին։ Կառուցված է մեծ քարերով՝ վրան միակտուր սալ քար դրված, սակայն չափերով ավելի փոքր է։ Դատելով ծածկից, կարելի է ասել, որ այս գաղտնուղին ավելի մեծ թեքություն ունի, քան նախորդը։ Առայժմ մեզ հաջողվել է բացել նրա միջին հատվածը։ Իսկ ամենակարևորը՝ նրա սկզբի ու վերջավորության կառուցվածքը մեզ անհայտ է։ Ժամանակը որոշելու համար շատ կարևոր է, թե այն որտեղից է սկիզբ առնում, քանի որ արևմտյան ներքևի պարիսպները կառուցված են XIII դ., իսկ վերևինը՝ X—XI դդ.։

Այստեղից հայտնաբերվեցին հասարակ ու ջնարակած խեցեղենի մի քանի

*բեկորներ, որոնք հավանաբար այստեղ են ընկել վերևից՝ անձրևներից առաջացած հեղեղների հետևանքով։*

*ՀՍՍՀ Մինիստրների Սովետի Պետշինի հուշարձանների վերականգնման վարչությունը 1970 թ. սկսել է Անբերդի վերականգնման աշխատանքները։ Այժմ վերականգնվում է Վահրամաշեն եկեղեցին, իսկ հետագա տարիների վարչությունը նպատակ ունի վերականգնելու բաղնիքը, պալատը, ամրոցապատերն ու այլ ճարտարապետական հուշարձանները։*

*Եկեղեցու վերականգնման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ եղավ պեղել նրա հարավային մասը, որտեղից դուրս եկան եկեղեցու երեսպատ քարեր, ինչպես նաև ծածկի սալեր, որոնք այժմ տեղադրվում են իրենց տեղում։ Բացի այդ, նույն տեղից դուրս են եկել նաև խաչքարի բեկորներ և քանդակազարդ այլ քարեր։ Առանձնապես հետաքրքիր է թռչունի զարդով քարը։ Այստեղից հայտնաբերվել են նաև միջնադարյան խեցու բեկորներ և այլ առարկաներ։*



*Գծ. 16. Միջնաբերդի ջրամբարը ֆիլտրող կառուցվածքով։*

**Պեղումներով հայտնաբերված առարկաները.** — *1936, 1963—1968 թթ. պեղումներով Անբերդից հայտնաբերվել է հնագիտական առատ նյութ։ Չնայած պեղումները մեծ ծավալով չեն կատարվել, այնուամենայնիվ, գտնված առարկաները աչքի են ընկնում թե իրենց քանակով, թե, մանավանդ, նշանակությամբ։ Ինչպես մյուս հնավայրերից, այնպես էլ Անբերդից հայտնաբերված առարկաների մեջ քանակով ամենից շատը խեցեղենն է։*




*Գծ. 17. Ջրատար խողովակ։*

*Կասկածից դուրս է, որ ինչպես միջնադարյան այլ բնակավայրերում, այնպես էլ Անբերդում լայնորեն օգտագործվել են փայտե, ոսկրե, կաշվե և այլ նյութերից պատրաստված առարկաներ, որոնցից մեզ շատ քիչ բան է հասել (գծ 18)։*



**Մետաղե առարկաներ.** — *Անբերդում հայտնաբերվել են զգալի քանակությամբ մետաղե առարկաներ։ Թանկարժեք մետաղներից ոսկե և արծաթե առարկաներ քիչ են հայտնաբերվել։ Դրանք են՝ 1936 թ. հայտնաբերված բյուզանդական ոսկե դրամը, արծաթե ապարանջանը և այլ մանր իրեր։ Անբերդում համեմատաբար շատ են բրոնզե առարկաները։*

**Զենքեր.** — *Հայտնի է, որ ուսումնասիրվող շրջանում (X—XVI դդ.) զենքերը պատրաստվում էին բացառապես երկաթից։ Դվինն ու Անին, հատկապես առաջինը, հանդիսանում էին Հայաստանի զինագործության խոշոր կենտրոններ։ Հայաստանի մյուս քաղաքներից ու բնակավայրերից շատերը նույնպես զենք էին արտադրում։*




*Գծ. 18. Երկաթե առարկաներ։*

*Հայտնի է, որ պատերազմների ժամանակ հատուկ արհեստավոր-զինագործներ էին ուղեկցում զորքին, որոնք վերանորոգում էին հին զենքերը և, հավանաբար, պատրաստում նաև նորերը[6]։*

*Բերդերը, հատկապես Անբերդի նման հզոր ամրոցը, որը բազմամարդ կայազոր ուներ, անպայման պետք է իր զենքի արտադրման սեփական արհեստանոցն ունենար, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ պաշարումների*

---

[6] *Պատմություն Ղևոնդյա մեծի վարդապետի, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 56։*



6—945

ժամանակ ամրոցը հնարավորություն չուներ զինագործության առաջնակարգ կենտրոններից զենք ստանալու:

**Նիզակներ.**—Հայոց զորքի մեջ նիզակավորները առաջնակարգ դեր ունեին: Անբերդից հայտնաբերվել են մի քանի նիզակներ՝ տափակ, տերևաձև, կլոր նիստավոր:

Առաջին նիզակը (նկ. 66) ունի 38 սմ երկարություն՝ կոթառի հետ միասին: Գործող մասը 24 սմ է, մասսիվ, տափակ, տերևաձև է: Լայնությունը կոթառի մոտ 4 սմ է: Աստիճանաբար լայնանում է գրեթե մինչև կենտրոն, հետո դեպի ծայրը նորից նեղանում է: Նիզակի եզրերը բարակ են ու սուր, իսկ կենտրոնը բավական հաստ է: Կոթառը սնամեջ է՝ փայտե կոթը մեջը հագցնելու համար, կլոր է (4 սմ տրամագծով), ունի 15 սմ երկարություն: Նման նիզակներ հայտնաբերվել են Անիի և Դվինի պեղումներից[7]: Այս տիպի նիզակների մասին խոսելիս պրոֆ. Կարո Ղաֆադարյանը այն միտքն է հայտնում, որ այդ նիզակը չէր կարող պատկանել հետևակի, որովհետև հետիոտն վիճակում նրանով շեշտակի հարված հասցնելն անհնար էր, իսկ հեծյալի ձեռքին այն կդառնար մի հուժկու զենք՝ ձիու արագության թափով թշնամուն հարվածելու համար[8]:

Երկրորդ նիզակը (նկ. 67) բաղկացած է գործող մասից և կոթառից: Գործող մասը պահպանվել է լրիվ, իսկ կոթառը թերի է: Գործող մասը կլոր է ու նիստավոր, երկարությունը՝ 15,5 սմ: Կոթառը միացման տեղում ունի 3 սմ տրամագիծ: Գործող մասը դեպի ծայրը՝ մինչև ութերորդ սանտիմետրը, հավասար է, որից հետո հաստանում է, որտեղ տրամագիծը 4 սմ է: Սրանից հետո սկսում է խիստ նեղանալ, ծայրը սուր է: Կոթառը կտրվածքում կլոր է ու սնամեջ: Այստեղ պահպանվել են նիզակի փայտե կոթի մնացորդները: Կոթառի և գործող մասի միջև կա կամրջակ՝ 3,5 սմ տրամագծով: Նման նիստավոր նիզակները խիստ հազվադեպ են: Նրանցից մեկը գտնվել է Դմանիսիի պեղումներից և պահպանվում է Վրաստանի պետական թանգարանում:

1968 թ. պեղումների միջոցին հայտնաբերվեցին մի քանի նիզակ (նկ. 68), որոնցից հետաքրքիր ձև ունի արևելյան պարսպի մոտ գտնվածը: Սա միջին մեծության նիզակ է՝ 20 սմ ընդհանուր երկարությամբ, գործող մասը 13 սմ երկարությամբ և 3 սմ լայնությամբ, ծայրը՝ խոցող կամ հարվածող մասը, սուր է, սակայն եզրերը հաստ են: Գործող մասը ունի գոգավորություն, որի տակից ամբողջ երկարությամբ անցնում է լայն ակոս:

Միջնաբերդից հայտնաբերված նիզակներից միայն մեկի գործող մասն է գտնվել՝ այն էլ ոչ լրիվ: Պահպանված մասի երկարությունը 17 սմ է, քառակող հոծ երկաթից է, հաստությունը 1,5 սմ է: Հետաքրքիր է նաև մեկ ուրիշ նիզակի գործող մասը, որը, հավանաբար, կիսամշակ վիճակում է մեզ հասել: Սա նույնպես քառակող է, սակայն ավելի հաստ:

Անբերդից հայտնաբերված նիզակները տարբեր նպատակների են ծառայել: Եթե առաջինը հեծյալի էր և նախատեսված էր խոցելու և մարմնի մեջ խրելու համար, ապա երկրորդը ավելի շուտ հարվածելու և ոչ այնքան խոցելու համար էր: Սակայն, եթե վերջինս չէր կարող ծակել թշնամու զրահը և մտնել մարմնի մեջ, ապա կարող էր ավելի մեծ հարված հասցնել՝ ուժեղ ջարդվածք առաջացնելով: Հնարավոր է, որ գոգավոր նիզակը օգտագործված լինի հետևակի կողմից հեծելազորի դեմ կռվելու համար, քանի որ նրա գոգավորությունը ներքևից հարվածելու դեպքում ավելի կմեծացներ հարվածի ուժը:

7 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում, հ. I, Երևան, 1958, էջ 145:

8 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 163:



**Նետասլաքներ.**—Նետասլաքները պեղումներից ավելի առատորեն են հայտնաբերվում, քան զենքի մյուս տեսակները, քանի որ, եթե ամբողջ մարտի ընթացքում մեկ զինվորին հարկավոր էր մեկ նիզակ կամ մեկ սուր, ապա աղեղնավորին հարկավոր կլիներ մի քանի տասնյակ նետեր, որոնք արձակվելուց հետո մեծ մասամբ գետին ընկնելով, թաղվում էին հողի մեջ: Նպատակահարմար ենք գտնում տալ Անբերդից հայտնաբերված նետասլաքներից մի քանիսի նկարագիրը:

Դրանցից մեկը (գտնվել է 1936 թ.) քառանիստ, մասսիվ նետասլաք է (նկ. 69): Երկարությունը պոչուկի հետ միասին 10 սմ է (գործող մասը՝ 6, պոչուկը՝ 4 սմ), ամենալայն տեղում 1,5 սմ: Սրանք շատ տարածված էին միջին դարերում և առատորեն հայտնաբերվում են Հայաստանի պեղավայրերից: Կ. Ղաֆադարյանը դրանք անվանում է բրգավոր նետասլաքներ[9]:

Մյուս նմուշը տափակ, շեղանկյունաձև նետասլաք է (նկ. 70): Գործող մասի երկարությունը մոտ 4 սմ է, լայնությունը՝ 3, չափազանց բարակ է (մոտ 1 մմ): Պոչուկի և գործող մասի միջև կա ուռուցիկ գոտի, որի տրամագիծը 1,3 սմ է: Նման գոտիները պահպանում էին սլաքները փայտի մեջ չափից ավելի խրվելուց: Նման նետասլաքներ հայտնաբերվել են Դվինում: Կ. Ղաֆադարյանը սրանք դնում է տերևաձև, տափակ նետասլաքների շարքում:

Հարկ է նշել, որ այս տիպի նետասլաքները տարածման շատ լայն շրջանակներ ունեն: Դրանցից գտնվել են Անիում, Դվինում, Կապաղակում, Դմանիսիում և Անդրկովկասի այլ հնավայրերում: Այդ նետասլաքներից հայտնաբերվել են նաև Միջին Ասիայի, ինչպես նաև Ուկրաինայի պեղավայրերում:

Երրորդը երկարավուն, տերևաձև, տափակ նետասլաք է (նկ. 71), բայց ոչ շեղանկյուն: Գործող մասի երկարությունը 3,5 սմ է, պոչուկը՝ 5, ամենալայն մասը՝ 1,5: Մեջտեղում ավելի հաստ է, մոտ 3 մմ, իսկ դեպի եզրերը բարակում է ու սրվում: Սա նախորդների նման լրիվ տափակ չէ: Նախորդի նման պոչուկի և գործող մասի միջև ունի ուռուցիկ գոտի՝ մոտ 8 մմ տրամագծով:

Նետասլաքներից չորրորդ նմուշը տափակ է, տերևաձև: Պահպանվել է միայն գործող մասը (երկարությունը՝ 4,5 սմ, լայնությունը՝ 2):

Հինգերորդը եռանիստ փոքր նետասլաք է, գործող մասը՝ 2 սմ, իսկ պոչուկը՝ 6: Նախորդների նման գործող մասի և պոչուկի միջև ունի ուռուցիկ գոտի: Այս կարգի նետասլաքները Կ. Ղաֆադարյանը դասում է եռանիստ ակոսավորների շարքը[10]: Ինչպես հայտնի է, եռանիստ նետասլաքները գոյություն ունեին շատ վաղուց և հատուկ են վաղ միջնադարին: Սակայն Անբերդինը Դվինի վաղ շերտերից գտնվածներից տարբերվում է նրանով, որ գործող մասի ու պոչուկի միջև, ինչպես Անբերդից հայտնաբերված մյուս բոլոր նետասլաքները, ունեն ուռուցիկ մաս: Դրան կարելի է կոչել պահպանող գոտի (փայտի մեջ չափից ավելի չխրվելու համար): Մեզ թվում է, որ այդ գոտին բնորոշ է հասուն միջնադարին: Անբերդից հայտնաբերվածները մեծ մասամբ XII—XIII դդ. շերտից են: Ուրեմն, մեր նկարագրած այս վերջին նետասլաքն էլ (ուռուցիկ գոտիով) կապվում է այդ շրջանի հետ: Վաղ շրջանից փոխանցվել է եռանիստ ձևը, որը հասուն միջնադարում քիչ է հանդիպում:

9 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 161 (նկ. 142):

10 Անդ:

Մեր նկարագրած նետասլաքները տարբեր ձևեր ու չափեր ունեն։ Ուստի, շատ հավանական է, որ դրանք միջնադարում տարբեր անվանումներ ունեին։ Նիկողայոս Մառը, վկայակոչելով վրաց լեզվաբան Օրբելիանիի կարծիքը, համաձայն որի Վրաստանի նետասլաքների տարբեր ձևերը տարբեր անուններ են ունեցել, գտնում է, որ Հայաստանի համար նույնպես այս սկզբունքը պետք է ընդունված լիներ[11]։ Մեզ թվում է, թե այս կերպ մոտենալով, կարելի է գտնել նետանման զենքերի մյուս բոլոր տարբերակները, մանավանդ, որ մեր միջնադարյան մատենագիրների մոտ հիշատակված զենքերի շատ տեսակներ, ինչպես՝ աշտե, սվին և այլն, արձակվում էին այնպես, ինչպես նետերը։ Օրինակ, Մովսես Խորենացին գրում է. «...Եւ մօտ անցեալ աջողեցաւ ձգել զսուինն. քանզի էր կորովի և երկայնաձիգ, հեռի պաշտէան արձակեալ, որպես ի թռիչս սրաթև հաւուց»[12]։

Պեղումներով հայտնաբերված այն զենքերը, որոնք նման են նետասլաքների և միայն չափերով են մեծ, մեր հնագետներից շատերը անվանում են տեգեր։ Սակայն պատմիչների մոտ պահպանված վկայությունները ցույց են տալիս, որ տեգ կոչվում էր նիզակի գործող մասը, այնպես, ինչպես սուր՝ սուսերի գործող մասը, սլաք՝ նետի գործող մասը։ Մեր կարծիքով, վերոհիշյալ զենքերը նույնպես արձակվել են աղեղների միջոցով և նետասլաքների տարբերակներից են, որոնց մեր պատմիչները աշտե, սվին և այլ անվանումներ են տալիս։

Առայժմ դժվար է իմանալ, թե նկարագրված նետասլաքներից որոնք են տեղում արտադրվել և որոնք են նվաճումների միջոցով բերվել։ Սակայն նրանցից մի տեսակի՝ տափակ շեղանկյունաձև նետասլաքի մասին որոշակի կարող ենք ասել, որ Հայաստանի հնավայրերի վաղ շերտերում դա բոլորովին չի հանդիպում, մինչդեռ շատ առատ է XII—XIII դդ. շերտերում։ Նկատի ունենալով նրա տարածման մեծ շրջանակները (Միջին Ասիայից մինչև Ուկրաինա), կարծում ենք, որ այն միջինասիական նվաճող ցեղերի զենքերից է։ Բացառված չէ նաև այն, որ դա մեր պատմիչների կողմից նկարագրված այն նետերից է, որի դեմ հայոց զրահները չէին դիմանում։

**Դաշույններ.**—Անիբերդից հայտնաբերված դանակներից ու դաշույններից, մեր կարծիքով, միայն մի քանիսն են ծառայել որպես զենք, քանի որ միայն դրանց գործող մասի և բռնակի միջև կա երկաթե պահպանակ՝ հարվածելու կամ խոցելու ժամանակ զենքը գործածողի ձեռքից չսահելու և սուր մասին չդիպչելու համար։

Առաջին դաշույնը գտնվել է միջնաբերդի III սենյակից։ Գործող մասը թերի է։ Նրա ամբողջ երկարությունը բռնակի հետ միասին 19,3 սմ է, գործող՝ պահպանված մասը 10 սմ, լայնությունը՝ 4։ Գործող մասը հիմքում նեղ է (պահպանակի մոտ 2 սմ)։ Երկաթե պահպանակը առանձին երկաթից է, ունի 1,5 սմ լայնություն։ Բռնակը, որի վրա պահպանվել են փայտե մասեր, ունի 7,5 սմ երկարություն։ Բռնակի հաստության մասին դժվար է դատել, քանի որ փայտը լրիվ չի պահպանվել։ Գործող մասի երկու կողմերն էլ սուր են. բնական է, որ դաշույնի ծայրը նույնպես սուր է եղել, քանի որ նախատեսված էր խոցելու և հարվածելու համար։ Այս դաշույնը Անիից գտնված սուսերից տարբերվում է նրանով, որ եթե առաջինը հիմքից սկսած շատ քիչ

[11] *Н. Я. Марр,* Ани, Л.—М., 1934, стр. 104.

[12] **Մովսես Խորենացի,** *Բ, գլ. Ե, էջ 107։*



նեղանում է, ապա Անբերդի դաշույնը ընդհակառակն, հիմքից սկսած լայնանում է։

Մյուս դաշույնը ավելի փոքր է։ Պահպանվել է միայն գործող մասը՝ 11 սմ երկարությամբ և 1,5 սմ լայնությամբ։ Մասամբ մնացել է նաև պահպանակը՝ 2 սմ տրամագծով և նույնքան էլ լայնությամբ։ Դաշույնը որոշ չափով կեռ է, սուր մասը դրսի կողմից է՝ ծայրն էլ սուր։

Երրորդ դաշույնը հայտնաբերվել է նոր պարսպապատի մոտից։ Գործող մասի երկարությունը 10 սմ է, ծայրը նույնպես կեռ է։ Այս դաշույնը առաջինների նման ունի պահպանակ։ Հավանաբար, այս երեք դաշույններն էլ ունեցել են պատյան, որով ամրացվել են ռազմիկի գոտուն։ Մատենագիրների տված տեղեկություններից հայտնի է, որ այս զենքը օգտագործվել է թե՛ հեծյալ և թե՛ հետևակ զինվորների կողմից՝ որպես օժանդակ զենք ձեռնամարտի ժամանակ։

**Զրահ.**—Այս ընդհանուր տերմինով միջնադարում կոչվում էին մարտիկի զրահը, սաղավարտը, վահանը, ինչպես նաև լանջապանակը, բազպանը, սռնապանը և այլն։

**Վահան.**—Հայաստանի, ինչպես նաև հարևան երկրների հնավայրերից միջնադարյան վահաններ գրեթե չեն հայտնաբերվել։ Դա բացատրվում է նախ նրանով, որ վահանները, ինչպես և սաղավարտներն ու թանկարժեք այլ զենք ու զրահը փոխանցվել են սերնդից սերունդ։ Բացի այդ, վահանները միջնադարում պատրաստվել են փայտից ու կաշվից, որոնք հողի մեջ մնալով փտել են, իսկ վահանի մետաղյա մասերն էլ փոքր լինելով, չեն տվել վահանի պատկեր։ Չնայած մի քանի պեղավայրերում վահանի երկաթյա կամ բրոնզյա մասեր հայտնաբերվել են, սակայն դրանցով դժվար է եղել վահանը վերականգնելը։

1936 թ. Անբերդի պեղումներից գտնվել էր մի զարդագամ, որը ժամանակին բնութագրվել էր որպես բրոնզե իր՝ անորոշ նշանակությամբ։ Նման մի իր էլ գտնվել է Կապաղակի պեղումներից[13]։

1964 թ. Անբերդի հարավային ծայրում գտնվող սենյակներից մեկում հայտնաբերվեցին նման մի քանի իրեր (թվով 5 հատ)։ Իրենց ձևով այս իրերը հիշեցնում են սուր, միայն չափերով շատ փոքր են։ Երկարությունը 5 սմ է։ Ներքևի մասը սրածայր է, ունի 4 սմ երկարություն, որից վերև պահպանակն է, մոտ 2 սմ հաստությամբ և 1 սմ լայնությամբ։ Սրանից վերև գլուխն է, որը մեծ մասամբ կլոր է լինում։ Կարևորն այն է, որ իրերից մեկի վրա շատ լավ պահպանվել են փայտի և կաշվի մնացորդներ, որից միանգամայն պարզ է դառնում, որ այն մտել է փայտի մեջ և պահել է կաշին, որ նրա սուր մասը փայտի մեջ մտնելու, իսկ հարթ ու լայն մասը կաշին պահելու համար է։ Երկար ժամանակ մենք չէինք կարողանում որոշել, թե այս առարկաները ինչ իրի են պատկանել։ Սակայն, հարակից նյութերն էլ նկատի ունենալով վերջապես եկանք այն եզրակացության, որ դրանք վահանի մասեր կարող են լինել։

Այս հարցում մեծապես օգնեցին ազգագրական նյութերը։ Հայաստանի պետական պատմական թանգարանի ազգագրական ֆոնդերում պահվում են նոր ժամանակներին վերաբերող կաշեպատ փայտե վահաններ։ Սրանց վրա

[13] *С. М. Казыев.* Историко--археолсгическое обследование городища Кабалы, Материальная культура Азербайджана, т. 5, табл. 15.

կաշին ամրանում է նույնատիպ գամերով, ինչպիսիք գտնվել են Անբերդում։

Վրաստանի պատմական թանգարանում ևս պահվում են բազմաթիվ փայտե վահաններ, որոնց մի մասը ամբողջական փայտից է և կաշեպատ։ Կաշին ամրացված է փայտի վրա բրոնզե գամերով, որոնք նույնպես նման են Անբերդից հայտնաբերվածներին։

1968 թ. միջնաբերդի պեղումներից հայտնաբերվեց ամբողջական վահան (նկ. 62), որի փայտե մասերը սակայն փտել են։ Պահպանվել են միայն մետաղյա մասերը, որոնք լրիվ գաղափար են տալիս նրա չափի, ձևի ու նյութի մասին։ Վահանը կլոր է, տրամագիծը 80 սմ, որը պարզվում է երկաթե մեծ օղակի միջոցով։ Օղակի ձողի հաստությունը 2 մմ է։ Սրանից ներս կա ևս մի օղակ՝ 30 սմ տրամագծով՝ նույն երկաթե ձողից, իսկ կենտրոնում կումբն է։ Վերջինս մասամբ երկաթից է, բավական ծանր, արտաքին կողմը ուռուցիկ, ներսից գոգավոր, կենտրոնում ունի սուր ելուստ։ Արտաքին կամ մեծ օղակի վրա կա 20 բռնակ, որոնք ամրացրել ու պահել են վահանի հիմնական մասը։ Վերջինս ամենայն հավանականությամբ եղել է փայտից։ Սա հաստատվում է նրանով, որ կմրի մեջ պահպանվել են փայտի կտորներ։ Այդ բռնակների չափերից էլ կարելի է որոշել փայտի հաստությունը, որը մոտ 1 սմ է։ Փայտի վրա քաշված կաշին ներկված է եղել կարմրավուն ներկով, որի հետքերը շատ պարզ դրոշմված էին վահանի տակի հողի վրա։ Միջին օղակի վրա կա նախորդներից ավելի լայն չորս ամրակ, չորս հատ էլ կա կմրի վրա։ Սրանք, հավանաբար, ամրացվել են կաշվե փոկերով և հարվածի ժամանակ թուլացրել են ձեռքի վրա ընկնող հարվածի ուժը։ Մեծ օղակի ամրակները իրարից հեռու են 20 սանտիմետրով, իսկ միջին օղակինը՝ 7։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, վահանի հիմնական նյութը փայտն է։ Դա հասկանալի է, քանի որ այդ մեծության մետաղյա վահանը, ինչքան էլ բարակ, այնուամենայնիվ ծանր էր և գործածելը դժվար կլիներ[14]։ Վահաններ օգտագործել են ինչպես հետևակ, այնպես էլ հեծյալ զինվորները։ Վահանների օգտագործման մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Փավստոս Բուզանդը. Գարեգին Ռշտունին ծանր վիրավոր ընկնում է դաշտում, նրա մոտով անցնում է Համազասպ իշխանը, որը «...ետ հրաման վահանաւորացն, որ, ընդ նմա էին, ասէ. իջէք և դիք զվահանսդ ի վերա նորա և պահեցեք։

Ապա ետ այսորիկ գայր Դանուն ոմն զումապետ (տասնապետ) սպարակրացն գնդին Մանուէլեան զօրացն, ետես զի իջեալ էին վահանաւորք ի վերա, և Գարեգինն պահէին»[15]։ Այս հատվածից երևում է, որ կային նաև հեծյալ վահանավորներ։

**Կացիններ**.—Անբերդի պեղումներից հայտնաբերված կացիններից նպատակահարմար ենք գտնում տալ երկուսի նկարագիրը։ Դրանցից մեկը երկաթե մեծ կացին է (նկ. 72), գտնվել է միջնաբերդի III սենյակի պեղում-

---

[14] Համեմատաբար մեծ թվով վահաններ հայտնաբերվել են ուրարտական շրջանից։ Ավելի վաղ ժամանակներից գտնվել են վահանի որոշ մասեր, իսկ հետագա շրջաններում ամբողջական վահանները նույնպես հազվադեպ են։ Ուրարտական վահանների մի մասը ամբողջական բրոնզից է՝ վրան պատկանելիությունը ցույց տվող արձանագրություններով, մի մասի էլ միայն կումբն է մետաղից, իսկ մնացած մասերը փայտից, կամ ավելի ճիշտ ուռենու ճյուղերից են։ Առաջինները, հավանաբար, զարդավահաններ են, իսկ երկրորդները՝ մարտական։

[15] Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1914, էջ 306—307։



ներից։ Երկարությունը կոթառի հետ միասին 24 սմ է։ Բերանը լայն է և մի քիչ առաջ թեքված։ Ընդհանրապես նեղ է ու երկար։ Բերանի պահպանված մասը 9 սմ է։ Կոթառը ամենանեղ մասում 3,5 սմ է, փայտե կոթի համար անցքը՝ 4,5×2,8 սմ։ Ներսի կողմից գոգավոր է, դրսից ուռուցիկ։ Ամբողջական երկաթից է և բավական ծանր։

Փոքր կացնի ընդհանուր երկարությունը 14 սմ է, բերանի լայնությունը՝ 7։ Փայտե կոթի համար ունի 2,5×3 սմ անցք. հարվածող կամ կտրող մասի հակառակ կողմում ունի մուրճի նման դուրս ընկած ելուստ։

Նման կացիններ հայտնաբերվել են նաև Դվինի պեղումներից։ Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ դրանք տան մեջ զանազան թեթև աշխատանքներ կատարելու համար են[16]։ Սակայն հնարավոր է, որ այս փոքր կացինը ծառայած լինի որպես զենք։ Մեր մատենագիրների տված տեղեկությունների համաձայն կացինը հանդես է գալիս թե՛ իբրև աշխատանքային գործիք և թե՛ իբրև զենք։ Հատուկ ուշադրության է արժանի կացնի նման զենքերի՝ սակր, վաղր, ճիկռ անվանումների գործածությունը։ Հավանաբար, դրանք կացնի տարբերակներն են։ Ավելի ճիշտ կլիներ ասել, որ դրանք զենքի կամ աշխատանքային գործիքի տարբեր տեսակներն են, որոնք նախատեսված են հատելու կամ ջարդելու համար։

Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան ժամանակաշրջանի կացինները, որոնցից շատ են հայտնաբերվել, մոտավորապես նույն ձևերն ունեն, ինչպիսիք Անբերդի և Դվինի օրինակները։ Բրոնզեդարյան կացինները մասնագետների կարծիքով, նույնպես օգտագործվել են որպես զենք։ Ի դեպ, մատենագիրների մոտ հիշատակված վաղրի, ճիկռի, սակրի ու մյուսների և ոչ մի տեսակը, մասնագետների կարծիքով, չի հայտնաբերվել։ Սակայն ճիշտ կլինի դրանք փնտրել Դվինից, Անբերդից և այլ միջնադարյան հնավայրերից հայտնաբերված կացինների տարբեր ձևերի մեջ։

Միջնադարում մետաղյա գործիքները մեծ կշիռ ունեին կենցաղում՝ հատկապես երկաթից պատրաստվածները։ Անբերդից հայտնաբերվել են դանակներ, մուրճեր, երկաթե դգալ, զանազան պայտեր, տարբեր չափի ու նշանակության գամեր և կենցաղային այլ առարկաներ։

**Դանակներ**.—Անբերդից հայտնաբերված դանակների մեծ մասը երկաթից են՝ ոսկրե և փայտե կոթերով (նկ. 95)։ Վերջիններս մեծ մասամբ քայքայվել են, և դրանց մեծ մասի չափի ու ձևի մասին գաղափար ենք կազմում պահպանված երկաթե ամրակների միջոցով։ Անբերդի դանակների մեջ կան ինչպես չծալվող՝ ուղիղ, գործող մասը և կոթը ամբողջական, այնպես էլ ծալվող գրպանի դանակներ։

Նպատակահարմար ենք գտնում բերել դրանցից մի քանիսի նկարագրությունը։

1. Միասայր դանակ է՝ գործող մասը մի քիչ գոգավոր։ Գտնվել է 1936 թ. պեղումներից՝ միջնաբերդում։ Ունի 11,5 սմ երկարություն (գործող մասը՝ 9 սմ) և 1,5 սմ լայնություն։ Պահպանվել է գրեթե ամբողջական վիճակում։ Ունեցել է փայտե կոթ, որից մի մասը պահպանվել է։

2. Գտնվել է նոր պարսպապատի արտաքին կողմից 1964 թ. (նկ. 73, 74)։ Երկարությունը 19 սմ է (գործող մասը՝ 13 սմ), լայնությունը՝ 2,5, կոթը թերի

---

[16] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 157։

է։ Միասայր, ուղիղ, չծալվող դանակ է։ Պարզ երևում է, որ քիչ է մաշված։

3. Ուղիղ դանակ է, գործող մասի երկարությունը 12 սմ է, լայնությունը՝ 1,5 սմ։ Դանակի ընդհանուր երկարությունը պահպանված կոթի հետ միասին 15 սմ է։ Բավական բանեցված է, քանի որ շեղբի մոտ լայն է, իսկ մնացած գործածվող մասը մաշված է։

4. Փոքր, ծալվող դանակ է՝ երկարությունը 9 սմ, կոթի միացման տեղում ունի փոքրիկ անցք՝ փայտե կամ ոսկրե կոթը վրան ամրացնելու համար։ Գտնըվել է միջնաբերդի երրորդ սենյակից՝ արևմտյան պատի մոտ, վերևի շերտից։

5. Փոքր դանակ է, գտնվել է նախորդի հետ միասին։ Երկարությունը 9 սմ է, լայնությունը՝ 1,5, գործող մասը միասայր է։

6. Գրպանի փոքր դանակ է։ Գտնվել է նոր պարսպի մոտից, պահպանվել է երկաթե մասը ամբողջությամբ։ Երկարությունը 12 սմ է, լայնությունը հիմքի մոտ՝ 1,5 սմ։ Գործող մասը կորավոր է և մաշված։ Պահպանվել է նաև երկաթե օղակը՝ գոտուն ամրացնելու համար։

Դանակների նկարագրությունից երևում է, որ տարբեր չափեր ունենալով, դրանք տարբեր նպատակների են ծառայել։ Սակայն ձևերով իրար նման են և գրեթե բոլորն էլ գտնվել են X—XIII դդ. շերտերից։ Նման դանակներ գտնվել են նաև Հայաստանի հնավայրերի միջնադարյան շերտերից, սակայն իրենց ձևերով Անբերդից գտնվածները շատ ավելի նման են Դվինից հայտնաբերվածներին[17]։ Դվինից հայտնաբերված ուղիղ, չծալվող դանակների մասին Կ. Ղաֆադարյանը գրում է, որ դրանք կարող էին օգտագործվել նաև որպես զենք, քանի որ գտնվել են զենքերի հետ միասին և նեղ ու երկար շեղբ ունեն[18]։ Նշված հատկանիշները, իհարկե, անհրաժեշտ են դանակները որպես զենք գործածելու համար։ Մեզ թվում է, թե որպես զենք օգտագործելու համար դրանք նախ և առաջ պետք է լինեին երկսայր, սակայն մեծ մասը միասայր է։

**Քարագործ վարպետի մուրճեր.**— Անբերդի շինարարական աշխատանքների ժամանակ օգտագործվել են զանազան երկաթե գործիքներ, որոնցից հայտնաբերվել են երկու մուրճ։ Դրանցից մեկը գտնվել է 1963 թ. նոր պարսպի արտաքին կողմում (նկ. 75)։ Ունի 11 սմ երկարություն, մի կողմը երկար է ու սուր, իսկ մյուս կողմը՝ կարճ ու բութ։ Կենտրոնական մասում արված է փոքր, կլոր անցք փայտե կոթի համար։ Այս մուրճի գլուխը կարևոր է նրանով, որ այն լրիվ պատրաստված չէ, կիսամշակ է։ Նման կիսամշակ առարկաներ ուրիշ տեղերից բերելը անիմաստ էր, և պարզ է, որ այն արտադրվել է տեղում։

Մյուս մուրճը գտնվել է 1968 թ. պեղումներով՝ միջնաբերդից։ Երկարությունը 8 սմ է, գործող մասը կամ բերանը լայն է (4 սմ)։ Սա նման է ուրագի, բայց նախատեսված է քար տաշելու համար։

**Սանդերք** (նկ. 76).— Գտնվել է 1936 թ. պեղումներից։ Խիստ քայքայված է։ Լավ պահպանվել են միայն սանդերքի ատամները՝ 3 մմ տրամագծով և 13 սմ երկարությամբ երկաթե ձողեր են։ Ատամները երկշարք են։ Շարքերի միջև տարածությունը ներքևում մոտ 3—4 սմ է, դեպի վերև՝ ծայրերի մոտ, ատամները մոտենում են իրար։ Ատամները ներքևում ամրացել են երկաթե թիթեղի վրա։ Վերջինս, հավանաբար, միացել է փայտին, որից գրեթե ոչինչ չի պահ-

17 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 165 (նկ. 146)։ Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 2 (տախտակ 10, 11)։

18 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 164։



պանվել։ Սանդերքը մինչև այսօր էլ գյուղական վայրերում օգտագործվում է ոչխարի բուրդը մշակելու համար։ Անբերդի նման արոտավայրերով հարուստ բնակավայրի համար ոչխարաբուծությունը տնտեսության կարևոր ճյուղերից է։

Առօրյա գործածության իրերից Անբերդում հայտնաբերվել են թաթակիչ, ակիշ և այլ իրեր։

Թաթակիչը ունի 53 սմ երկարություն, թաթը տափակ է ու բարակ։ Վերջինս ունի 12 սմ լայնություն։ Պոչը բարակ է։ Այն ծառայել է թոնրից եփված հացը հանելու համար։

Ակիշը (նկ. 77) նման է առաջինին։ Սրանք լինում են թաթով և առանց թաթի։ Անբերդից գտնվածը առանց թաթի է և ծառայել է վառված թոնրի մեջ կճուճներ դնելու կամ այնտեղից դրանք հանելու համար։

Այս երկու գործիքներն էլ մինչև այսօր գործածվում են գյուղական տնտեսության մեջ։ Պեղումներից հայտնաբերվածները վկայում են, որ երկար դարերի ընթացքում դրանք գրեթե փոփոխության չեն ենթարկվել։

Անբերդից հայտնաբերվել են նաև մանգաղի գործող մասեր (նկ. 78)։ Նրանցից մեկի հիմքի մոտ պահպանվել է փոքր անցք՝ կոթառի հետ ամրացնելու համար։

**Երկաթե խողովակներ.**— Անբերդի բաղնիքի ջեռուցման կաթսայից ջուրը դեպի լողարան էր գնում երկաթե խողովակներով, որոնց մի փոքր հատվածը մինչև օրս էլ պահպանվել է ջեռուցման կաթսայի և լողարանի միջև եղած պատի կրաշաղախի մեջ։ Նման խողովակների հատվածներ հայտնաբերվել են բաղնիքի ներսը պեղելիս և իրենց չափերով համապատասխանում են շաղախի մեջ պահպանվածին։ Այդ խողովակի ընդհանուր երկարությունը 11 սմ է, տրամագիծը դրսից՝ 2,3, ներսից՝ 1,8—2 սմ, պատերի հաստությունը 2—3 մմ է։ Այս խողովակը բաղկացած է երեք հատվածից, որոնք իրար հետ միացել են երկաթե կամրջակների միջոցով։ Նման խողովակներ, ավելի մեծ տրամագծով, հայտնաբերվել են 1963 թ. պեղումներով, բաղնիքից հեռու, սակայն միացման նույն տեխնիկայով։ Ինչպես հայտնի է, Անիի բաղնիքի երկաթյա խողովակները միացման այլ տեխնիկա ունեն։ Նրանք իրար մեջ հագնում են այնպես, ինչպես կավե խողովակները։ Հայտնի է նաև, որ Դվինից հայտնաբերված երկաթե խողովակները, որոնք ստացվել են կռման միջոցով, միացվել են ավելի դյուրահալ մետաղի՝ պղնձի զոդմամբ։ Անբերդից հայտնաբերված խողովակների թե՛ կարերի և թե մեկը մյուսի հետ միացման տեղերում չկան պղնձի հետքեր։ Նրանք միացած են երկու հատվածները իրար կողքի դնելով, երկաթե կամրջակների միջոցով։ Ակադեմիկոս Հ. Օրբելին խոսելով Անբերդի խողովակների միացման տեխնիկայի մասին, նշում է, որ նման ձևով են միացվում նաև ժամանակակից գազատար ու ջրատար խողովակները[19] (խոսքն, անշուշտ, երեսունական թվականների մասին է)։ Քանի որ հայտնի չէ, թե Անբերդի խողովակների միացման համար ուրիշ ավելի դյուրահալ մետաղ օգտագործվել է, թե ոչ, ապա կարելի է ենթադրել, որ դա արվել է երկաթը շատ ուժեղ տաքացնելու՝ հալման աստիճանին մոտեցնելու միջոցով։ Ինչևէ, փաստն այն է, որ Անբերդում օգտագործված երկաթե խողովակների միացման տեխնիկան ժամանակի առաջնակարգ գյուտերից էր, քանի որ եթե միացումը ձուլման միջոցով չի արվել, ապա թերևս հալելու աստիճան տաքացվել է, որի համար կպահանջվեր բարձր ջերմաստիճան։

19 *И. А. Орбели*, Баня и скоморох XII века, стр. 318.

Երկաթե խողովակներով ջուրը լցվել է լողարանում տեղադրված քարե գուռերի մեջ։ Այստեղ, ինչպես նշում է Հ. Օրբելին, տաք և սառը ջրերը կարգավորվել են բրոնզե ծորակների միջոցով[20], որոնցից երկուսը հայտնաբերվեցին 1936, իսկ մեկը՝ 1965 թվականին։ Սրանք իրենց ձևով և ֆունկցիաներով շատ նման են ինքնաեռների ծորակներին։ 1965 թ. գտածի երկարությունը 14 սմ է (նկ. 79), ներքևը բարակ ու երկար ձողի է նման։ Վերևի մասը հաստ է և ունի բռնակ։ Վերջինս ունի 5 ելուստ, հավանաբար, ծորակը պտտելու միջոցով բացել-փակելու համար։ Սրանից ներքև կլոր, քիչ ձվաձև անցքն է, որտեղից




Գծ. 19. Երկաթե խաչեր

հոսում է ջուրը։ Բռնակը հակառակ կողմը դարձնելու դեպքում դադարում է ջրի հոսքը։ Ծորակը շատ լավ է պահպանվել։ Գտնվել է եկեղեցու հյուսիսային կողմում։ Անհավանական չէ, որ եկեղեցին էլ է ջուր ստացել երկաթե խողովակների միջոցով, և այդ ծորակով այն կարգավորվել է, մանավանդ, որ նրա շրջապատում նույնպես գտնվել են խողովակների բեկորներ։ Բրոնզե ծորակներով ջրի հոսքը կարգավորելու տեխնիկան նույնպես ժամանակի կարևոր գյուտերից էր։ Արհեստի այնպիսի առաջնակարգ կենտրոններում, ինչպիսիք Դվինն ու Անին էին, նման ծորակներ չեն հայտնաբերվել։ Այլ վայրերում չեն հայտնաբերվել նաև նման ձևով միացված խողովակներ։ Երկաթե խողովակների միացման տեխնիկան և բրոնզե ծորակների օգտագործումը վերաբերում են այն կարճատև ժամանակաշրջանին, երբ Անբերդը ազատագրվելով սելջուկներից, բուռն ծաղկում էր ապրում։

Երկար դարերի ընթացքում ոչ միայն այս, այլև շատ ուրիշ գյուտեր, որոնք ժամանակին կատարվել էին Հայաստանում, մոռացվեցին։

20 И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 320։



Մինչև XX դ. առաջին տասնամյակները, Հայաստանում գործող բաղնիքներում ջրի հոսքը կարգավորվում էր փայտե խցանների օգնությամբ։

**Երկաթե խաչեր** (գծ. 19)—Միջնադարյան Հայաստանում խաչերը, ընդհանրապես, պատրաստում էին պղնձից կամ բրոնզից։ Անիի եկեղեցիների մոտերքից հայտնաբերված բոլոր խաչերը պղնձից են։ Հակառակ դրան, Անբերդից հայտնաբերված խաչերը երկաթյա են։ Խաչերից մեկի երկարությունը 20 սմ է։ Հորիզոնական թևերից մեկի վրա, որ պահպանվել է լրիվ, արված է երկու օղակ։ Թևերի չափերի հարաբերությունը հետևյալն է. հորիզոնականը՝ 5,5 սմ, ներքևինը՝ 6, վերևինը, որ լրիվ չի պահպանվել, վերակազմությամբ մոտ 6 սմ է։ Թևերի լայնությունը՝ 1,7 սմ է։ Սրանք կենտրոնից դեպի ծայրերը չեն լայնանում։ Գտնվել է 1963 թ., նոր պարսպի արտաքին մասում։

Մյուս խաչը գտնվել է առաջինի հետ միասին, միևնույն տեղից։ Երկարությունը 20 սմ է, վերևի թևը՝ 4,5, հորիզոնականները՝ 5,5, ներքևինը՝ 8, պոչուկը՝ 7 սմ։ Կենտրոնում կամ միացման տեղում թևերի լայնությունը 1 սմ է, դեպի ծայրերը աստիճանաբար լայնանում են՝ հասնելով 1,7 սանտիմետրի։ Այս խաչը առաջինի նման թևերի ծայրերին ունի կլոր օղակներ։

Երրորդ խաչը գտնվել է եկեղեցուց հարավ։ Չափերով նախորդներից բավական փոքր է։ Երկարությունը՝ 8 սմ։ Խաչթևերի հարաբերությունը հետևյալն է, հորիզոնականներինը 2-ական սմ, վերևինը՝ 2,5, ներքևինը՝ 4 սմ։ Խաչթևերի միացման տեղում դրանց լայնությունը 5 մմ է, դեպի ծայրերը խիստ լայնանում են՝ հասնելով 1,5 սանտիմետրի։

Մեր կարծիքով նկարագրված խաչերից միայն վերջինն է օգտագործվել եկեղեցական արարողությունների ժամանակ, քանի որ չափերով փոքր է և գտնվել է եկեղեցու մոտերքից։ Իսկ մյուս երկուսը այլ նպատակի են ծառայել՝ նախ մեծ են, և երկրորդ՝ գտնվել են եկեղեցուց և պաշտամունքային նշանակություն ունեցող կառույցներից հեռու։

Էջմիածնի վանքի թանգարանում պահվում է մի մեծ, երկաթե խաչ, որը վերագրվում է Աշոտ Երկաթին։ Պրոֆ. Բ. Առաքելյանի կարծիքով, այն զորքերի առջևից տարվող խաչ է և վերաբերում է X դարին[21]։ Անբերդից հայտնաբերված խաչերը չափերով ավելի փոքր են, քան Աշոտ Երկաթին վերագրվողը, սակայն բոլորն էլ փայտի վրա ամրանալու համար ներքևում ունեն հարմարանքներ։ Այս խաչերը եկեղեցական արարողությունների համար չեն նաև այն պատճառով, որ չունեն քանդակներ և բավական կոպիտ են պատրաստված, իսկ Անիից հայտնաբերված բոլոր խաչերը պատրաստված են նուրբ և ունեն գեղեցիկ զարդեր։

Շատ հավանական է, որ Անբերդից հայտնաբերված խաչերը, Աշոտ Երկաթին վերագրվողի նման, նույնպես տարվել են զորքի առջևից։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայերը քրիստոնյա էին և բնական է, որ նրանց դրոշակները պետք է զարդարեին խաչանշանները։ Հետաքրքիր է, որ Մատենադարանում պահվող ձեռագրերից մեկի մեջ պատկերված է Մուշեղ Մամիկոնյանի երթը, որտեղ դրոշները, որոնք տարվում էին նրա հետևից, վերևում պատկերված ունեն այնպիսի խաչեր, ինչպիսիք Անբերդից հայտնաբերվածներն են։

Նշան, խաչադրոշ, խաչանշան, խաչվառ բառերը շատ են հանդիպում մեր

21 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 137։

մատենագրերի մոտ: Այդ դրոշները և նշանները, հավանաբար, հաճախ վերևի մասում ունենում էին երկաթե խաչեր:

Ինչպես տեսանք, Անբերդից հայտնաբերված խաչերից մեկը գրեթե հավասարաթև էր, իսկ մյուսի ներքևի թևը երկար էր: Մեկը հիմքից մինչև խաչթևերի ծայրերը հավասար լայնություն ուներ, իսկ մյուսը հիմքում նեղ էր, իսկ դեպի թևերի ծայրերը լայնանում էր: Երրորդ փոքր խաչի թևերի չափերը նույնպես անհավասար են և դեպի ծայրերը խիստ լայնանում են:

Քննության առնելով խաչի պատկերման ձևերը ու նրանց զարգացման հարցը, Հ. Օրբելին հանգում է այն հետևության, որ XII—XIII դդ. Հայաստանում պատկերված խաչերի վերևի թևը հորիզոնականից մի քիչ երկար է, իսկ ներքևինը՝ վերևինից ավելի երկար: Վաղ շրջանում պատկերված խաչերի թևերի համաչափության միջև եղած տարբերությունը ավելի քիչ է: V—VI դդ. թևերը գրեթե հավասար են[22]:

Անբերդից հայտնաբերված խաչերից երկուսը ճիշտ թվագրվում են XII դ. վերջով և XIII դ. սկզբով: Սրանք գտնվել են այն սենյակից, որ 1236 թ. ամբողջ ամրոցի հետ ավերվել է և հրդեհվել մոնղոլների ձեռքով:

Խաչերից մեկի թևերը մասամբ համապատասխանում են Հ. Օրբելու տված համաչափություններին, սակայն մյուսը գրեթե հավասարաթև է: Պետք է նկատի ունենալ, որ այս երկու խաչերը գտնվել են ոչ միայն միևնույն սենյակից, այլև միևնույն խորության վրա: Մի խոսքով, միասին, այնպես որ սրանց իրար ժամանակակից լինելը կասկածից վեր է: Ընդունելով այս իրողությունը, մեզ մնում է պարզել, թե ինչպե՞ս է պատահել, որ միևնույն ժամանակաշրջանում պատրաստվել են տարբեր համաչափություն ունեցող խաչեր, և ինչու հենց XII—XIII դդ. նորից հանդիպում ենք հավասարաթև խաչերի:

Համամիտ լինելով ակադեմիկոս Օրբելուն, որ սկզբնական շրջանում Հայաստանում պատկերված խաչերը հավասարաթև են և նրանց համաչափությունը խախտվում է հետագա դարերի ընթացքում (XII—XIII դդ. այդ համաչափությունը ստանում է խիստ որոշակի կերպարանք՝ վերևի թևը ավելի երկար է, քան հորիզոնականները, իսկ ներքևինը երկար է վերևինից), չենք կարող չնշել, որ հենց այդ ժամանակաշրջանից սկսվում է հակառակ պրոցեսը՝ այսինքն վերադարձը դեպի խաչի սկզբնական հավասարաթև պատկերումը: Խոտակերաց սբ. Նշանի տուփը[23], որ կերտել է տվել Հաչի Պռոշյան իշխանը 1300 թ., մեջտեղում պատկերված ունի մի մեծ խաչ, որը նույնպես մոտենում է հավասարաթևին: Պետք է նկատել, որ Հայաստանում, ինչպես նաև Բյուզանդիայում, դեռ X—XI դդ. կան պատկերված խաչեր, որոնք խիստ համապատասխան են Հ. Օրբելու՝ վերը նշված համամասնություններին, բացի այդ, նրանք սլացիկ են և կենտրոնից՝ խաչի հիմքից դեպի թևերը լայնանում են: Այդպես է Հոռոմոսի վանքի ժամատան առաստաղի վրա քանդակված խաչը[24], ինչպես

[22] *И. А. Орбели,* Колокол с анийскими орнаментальными мотивами XII—XIII вв. (Избранные труды, Ереван, 1963, стр. 175—188).

[23] Հրատարակվել և մանրամասն ուսումնասիրվել է Գարեգին Հովսեփյանի կողմից՝ «Խոտակերաց սբ. Նշան, մի նմուշ ԺԴ դարու հայ ոսկերչ․թեան» հրատարակության «Գեղարվեստ» հանդեսի, Թիֆլիս, 1912, էջ 2, նույնի Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, հ. 1, էջ 186—198:

Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 175 (տախտակ 23):

[24] Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 106, Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 2 (տախտակ 27),



նաև Կոստանդնուպոլսի երկու մասնատուփերի մեջ քանդակված խաչերը: Մասնատուփերը, որոնք այժմ պահվում են Վենետիկի և Լուվրի թանգարաններում, պատկանում են X դարին: Պետք է նկատել, սակայն, որ Կոստանդնուպոլսի IV դ. պատկանող խաչերի ներքևի և վերևի թևերը ավելի երկար են, քան VI դարինը, իսկ X դ. երկու տիպերն էլ հանդիպում են[25]: Հայաստանում V դ. պատկերված խաչերը հավասարաթև են, իսկ դրանից հետո համամասնությունը խախտվում է մինչև XII դ., երբ հայ վարպետները հասնում են համաչափական լավագույն ձևի: Սրանից հետո խաչերի ներքևի թևը սկսում է երկարել:

Հ. Օրբելին նաև նշում է, որ խաչի թևերը հիմքից դեպի ծայրերը լայնանում են ոչ թե ուղիղ գծով, այլ կոր: Այդպես են նաև Անբերդից հայտնաբերված խաչերից երկուսը: Օրբելին այս կորաձև լայնացումը նույնպես համարում է Հայաստանի խաչերի կարևոր առանձնահատկություններից մեկը: Նկատենք, որ բյուզանդական խաչերի մեծ մասի թևերը ուղիղ գծով են լայնանում:

Այնուհետև, խոսելով խաչերի թևերին գտնվող օղակների մասին, Օրբելին գրում է, որ դրանք հայտնի են դեռ V դ. և հարատևում են մի քանի հարյուրամյակների ընթացքում: Միայն թե, եթե վաղ շրջանի խաչերին բնորոշ էր ամեն մի թևի վրա երկուական օղակ, ապա հետագա դարերում սրանցից յուրաքանչյուրը բաժանվում է երեք մասի, մի բան, որ ավելի շատ հատուկ էր XII—XIII դարերին: Անբերդից հայտնաբերվածները ունեն երկուական օղակ: Երկուական օղակ ունի նաև Խոտակերաց սբ. Նշանինը: Այսպիսով, այստեղ նույնպես տեսնում ենք հին մոտիվների կրկնություն: Միայն նշենք, որ Անբերդի խաչերի օղակները կլոր են, իսկ Խոտակերաց սբ. Նշանինը՝ սուր: Վերջինս, ինչպես նշում է Օրբելին, դարձյալ հատուկ է ուշ շրջանի խաչերին[26]:

Ուրեմն, Անբերդից հայտնաբերված խաչերը իրենց ձևով ու համաչափություններով նման են Հայաստանի նույն ժամանակաշրջանի խաչերին, իրենց շատ հատկանիշներով հարազատ նրանց և բավական տարբեր բյուզանդական խաչերից:

Արխաշանի դարբասի ներսի կողմից 1968 թ. հայտնաբերվեց երկաթե բավականին մեծ իր, որը մեր կարծիքով դարբասի դռան մասն է: Այն բաղկացած է մոտ 40 սմ երկարություն և 2 սմ տրամագիծ ունեցող մասսիվ երկաթե ձողից, որը դեպի վերև նեղանում է, իսկ ներքևում հատուկ կամրջակի միջոցով միանում է 20 սմ երկարությամբ և 4 սմ տրամագծով խողովակի հետ: Խողովակի վերևի մասում, ներսի կողմից, հատուկ ելուստներ են արված: Հավանաբար, այս խողովակի մեջ մտել է դռան ծխնին:

Անբերդի պեղումներից հայտնաբերվել են տարբեր նպատակների ծառայող երկաթե իրեր՝ տարբեր չափերի բազմաթիվ գամեր, եղան, ձիու պայտեր, դռան փականքներ և այլն:

**Բրոնզե և պղնձե առարկաներ.**—Անբերդում հայտնաբերված բրոնզե և պղնձե առարկաների թիվը բավական պատկառելի է, եթե նկատի ունենանք, որ Դվինի նման արհեստավորական խոշոր կենտրոնից նման առարկաներ համեմատաբար ավելի քիչ են հայտնաբերվել: Գտնված առարկաների մեջ առանձնապես կարևոր են բրոնզե հավանգներն ու աշտանակները, մոմակալները, զարդարանքի առարկաները:

[25] The art of Costandinople by Yohn Beckwith, London, 1956, նկ. 12, 23—26, 55, 97, 98 103, 117, 119, 120:

[26] *И. А. Орбели,* նշվ. աշխ., էջ 176—177:

**Հավանգներ.**—Հնագիտական պեղումներից բրոնզե հավանգներ շատ քիչ են հայտնաբերվում, սակայն Անբերդում, որտեղ համեմատաբար քիչ էլ պեղումներ են կատարվել, գտնվել է չորս հավանգ։ Այս երևույթը բացատրվում է նրանով, որ ամրոցը հանկարծակի է գրավվել ու ավերվել։

Նկարագրենք այդ հավանգները։

Դրանցից մեկը քանդակազարդ կլոր հավանգ է, տրամագիծը՝ 20 սմ։ Ունի երեք քանդակազարդ գոտի, բուսական ու կենդանական պատկերներով։ Ներքևի գոտու լայնությունը 3 սմ է, որտեղ պատկերված է գազանների վազքի տեսարան։ Քանդակված է շուն կամ առյուծ՝ տարբեր դիրքերում պատկերված են երկու գազան, մեկը վազելիս ու ոտքի մեկը բարձրացրած՝ շատ դինամիկ վիճակում, մյուսը՝ թռիչքի մեջ։ Այս երկու մոտիվները հաջորդաբար կրկնվում են՝ զբաղեցնելով ամբողջ հավանգի պարագիծը։ Յուրաքանչյուր պատկերի լայնությունը 5 սմ է։ Սրանից վերև գնում է մի ավելի լայն գոտի (5 սմ բարձրությամբ), որտեղ արված է խիստ ոճավորված բուսական նկարազարդում։ Տեղ-տեղ բույսը այնքան է ոճավորված, որ կորցրել է իր բնական պատկերը և վեր է ածվել երկրաչափական զարդամոտիվի։ Այս երկու գոտիների արանքում 14 սմ լայնությամբ ազատ հարթ տարածություն է։ Այս գոտիներից վերև արաբական կամ, ավելի ճիշտ է ասել, արաբատառ արձանագրությունն է՝ բաղկացած մեկ ու կես բառից, որը վերցված է մուսուլմանական աղոթքներից։ Սրանից վերև, հավանգի շրթին, պատկերված է քրիստոնեական արվեստին այնքան հատուկ խաչը։ Վերջինս առնված է շրջանակի մեջ և կրկնված է չորս անգամ։ Հավանգը բազմանիստ է (12 նիստ), սակայն իր ձևով հիշեցնում է կավե ամանները[27]։

Մյուս հավանգը նման է առաջինին, այն տարբերությամբ միայն, որ սա ութանիստ է։ Տրամագիծը 18 սմ է, նույնքան էլ բարձրությունն է։ Ներսից տրամագիծը 13,5 սմ է։ Ամեն մի նիստի վրա կա եռանկյունաձև ելուստ, բացի մեկից, որի վրա բռնակն է՝ եզան գլխի պատկերով։ Վրան արաբական տառեր կան, որոնք սակայն իմաստ չեն արտահայտում։ Պետք է նկատել, որ արաբական տառերը, ինչպես նաև մուսուլմանական այլ էլեմենտներ, որոշակի ազդեցություն են ունեցել Անբերդում հայտնաբերված հավանգների մակերեսները ձևավորելու գործում, սակայն դրանից չի կարելի հետևություն անել, թե հայկական արվեստը գտնվել է մուսուլմանականի ոլորտում, ինչպես գտնում են ոմանք։ Երկու հավանգներն էլ այժմ գտնվում են Էրմիտաժում։

Երրորդ հավանգը նույնպես ութանիստ է (նկ. 81), միայն այն տարբերությամբ, որ զարդարանքի տեսակետից շատ ավելի զուսպ է։ Ունի մեկ բռնակ, որի վրա սակայն առանձին զարդարանք չկա։ Յուրաքանչյուր նիստի վրա կա հիմքով դեպի ներքև եռանկյունաձև ելուստ, վերջինիս մշակումը զուսպ է ու նուրբ։ Չնայած այս հավանգի զարդարանքի ոչ հարուստ լինելուն, գեղարվեստական մշակման տեսակետից Անբերդի հավանգների մեջ լավագույնը կարելի է համարել։

Չորրորդ հավանգը հայտնաբերվել է 1964 թ. պեղումներով (նկ. 82)։ Արտաքուստ և ներքուստ կլոր է՝ 12,5 սմ բարձրությամբ և 15 սմ տրամագծով։ Պատերը, ինչպես և մյուս հավանգներինը, հաստ են (1,7 սմ)։ Դրսից ամբողջովին պատած է բուսական ու երկրաչափական զարդերով, որոնք տարբեր

[27] *И. А. Орбели*, Баня и скоморох XII века, էջ 319.



լայնության գոտիներով գրկում են ամբողջ հավանգի մակերեսը։ Ամենալայն գոտին մեջտեղինն է։ 7 մմ լայնությամբ երկու գծեր իրար միանալով, առաջացնում են 3,5 սմ տրամագիծ ունեցող շրջաններ, միևնույն ժամանակ այս գծերը շրջանագծի վերևից ու ներքևից առաջացնում են ուղիղ գծեր, որոնք սահմանազատում են այս զարդարանքները մյուսներից։ Շրջանագծերի մեջ հաջորդաբար պատկերված են մի դեպքում՝ վեցթևանի աստղ, մյուս դեպքում՝ խիստ ոճավորված բողբոջ, որը երկու կողմից առնված է եռատերև զարդերի մեջ։ Շրջանագծերի և ուղիղ գծերի միջև ընկած տարածության վրա նույնպես պատկերված են խիստ ոճավորված եռատերև զարդեր։ Մեջտեղի, վերը նկարագրված զարդամոտիվներից վերև և ներքև արված է միևնույն զարդագոտին։ Վերջինս ունի 2 սմ լայնություն և վերևից ու ներքևից առնված է երկուական հորիզոնական գծերի մեջ։ Ինքը զարդը գալարվող գծի վրա եռատերև պատկեր է, որը շրջված է մեկ դեպի վերև, մեկ դեպի ներքև։ Այս օրնամենտը դրսից եզրափակվում է 1,5 սմ լայնություն ունեցող պարանահյուս գոտիներով, որոնցից ներքևինը փորագրված է հավանգի նստուկի, մյուսը՝ վերևինը, շուրթի վրա։

Ինչպես տեսնում ենք, ամբողջ նկարազարդման մեջ մեծ տեղ է գրավում եռատերև զարդը։ Այն լայնորեն տարածված է ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի երկրներում։ Հայաստանում դա հայտնի էր շատ վաղ ժամանակներից և շատ մեծ տարածում ուներ։ Մինչև այժմ էլ եռատերև զարդն օգտագործվում է։ Կան զարդամոտիվներ, որոնք միայն քարի վրա են արվում, կան և այնպիսիները, որոնք օգտագործվում են միայն խեցեղենի կամ փայտի վրա և այլն։ Սակայն եռատերև զարդը արվում է բոլոր իրերի, ավելի ճիշտ, վերը թվարկված բոլոր նյութերից պատրաստված առարկաների վրա։ Բերենք մի քանի ակնառու օրինակ միայն XII—XIII դդ. հուշարձաններից. այսպես՝ Անիի, Ախթամարի, Աղթալայի եկեղեցիները, Հաղպատի խաչքարերը, Մշո ս. Առաքելոց եկեղեցու դուռը, Դվինի հախճապակյա անոթները և այլն։ Հաղպատի խաչքարերից մեկի շրջանակի մեջ առնված եռատերև զարդի մոտիվը մանրամասների մեջ և ընդհանուր գծերով նման է մեր բերած հավանգի մշակմանը։

Մշո ս. Առաքելոց վանքի 1134 թ. պատրաստված դուռը ամբողջովին պատած է քանդակներով։ Դուռը շրջանակող գոտին մարդկային, կենդանական, երկրաչափական ու բուսական քանդակների մի ամբողջ սիստեմ է, իսկ սրանից ներս գտնվող բարակ գոտու վրա պատկերված է գծի վրա գալարվող եռատերև զարդ, որը հատկապես ոճավորմամբ շատ նման է հավանգի զարդերին։

Պարանահյուս զարդը նույնպես լայնորեն հայտնի է միջնադարյան Հայաստանի ճարտարապետության ինչպես վաղ շրջանի (Զվարթնոց, Թալին), այնպես էլ XIII դ. հուշարձանների խաչքարերի, պղնձե կամ բրոնզե առարկաների և իրերի վրա։

Երկու գծերով շարունակական շրջագծերի զարդերը նույնպես կիրառել են ինչպես ճարտարապետական հուշարձանների, խաչքարերի, այնպես էլ խեցեղենի՝ հատկապես նրա ջնարակած նմուշների վրա։

Նման զարդամոտիվներ տարածված են նաև Վրաստանի, Պարսկաստանի, Բյուզանդիայի և Հայաստանին հարևան այլ երկրների ճարտարապետական, հնագիտական հուշարձանների վրա, սակայն Անբերդի զարդամոտիվներին ամենից հարազատը Հայաստանի տերիտորիայում գտնվածներն են։

Հավանգների վրա պատկերված գազանների վազքի տեսարանը և այլ

մոտիվներ Հայաստանի ուսումնասիրվող ժամանակաշրջանի համար նույնպես խորթ չեն։ Հիշենք Դվինից հայտնաբերված բնակելի տան խորշի գիպսե շրջանակները, Մշո ս. Առաքելոց վանքի դուռը, Անիի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մուտքի կամարները և այլն։

Նկարագրված հավանգները գտնվել են XII—XIII դդ. շերտից։ Այս շերտի մասին մենք արդեն խոսել ենք։ 1236 թ. մոնղոլների կողմից Անբերդը գրավելուց հետո նման առարկաների գլուտը օրինաչափ է։ Այսպիսով, միանգամայն պարզ է, որ XIII դ. սկզբին այս առարկաները գործածության մեջ են եղել։ 1964 թ. հայտնաբերված հավանգի միջից գտնված չորս դրամները պատկանում են XII դ. վերջին և XIII դ. սկզբին։ Իհարկե, դրանք կարող էին կորցրված լինել հավանգների արտադրությունից առաջ կամ հետո։ Այնուամենայնիվ, դրանք այդ ժամանակաշրջանում գործածվել են։ Սակայն բանն այն է, որ հավանգները շատ մասսիվ և շատ դիմացկուն են։ Դրանք կարող էին օգտագործվել նաև հարյուրամյակների ընթացքում։ Սակայն նրանց ձևը և օրնամենտացիան բնորոշ է XII—XIII դարերին։ Գուցե նրանցից մեկը, որի օրնամենտացիան ավելի պարզ է, և զարդերը բարդացված չեն, ավելի վաղ ժամանակների արտադրանք է։

Անբերդի 1964 թ. պեղումներից հայտնաբերվել է պղնձե թասի կափարիչ (նկ. 83)։ Այն խիստ քայքայված է։ Մեծապես վնասվել է նաև հրդեհից։ Գտնվել է ամրոցի հարավային ծայրի սենյակից։ Պահպանված մասը թույլ է տալիս ենթադրելու, որ այն ունեցել է կլոր ձև՝ մոտ 11,5 սմ տրամագծով։ Որպես բռնակ օգտագործվել է ամբողջ հասակով մեկ կանգնած առյուծի պատկերը՝ 4 սմ բարձրությամբ (նկ. 84)։ Դժվար է ասել, այդ բռնակը միակն է եղել, թե մի քանի հատ։ Համենայն դեպս առյուծը այնպիսի դիրքով է պատկերված, որ կարելի է ասել, թե այն եղել է վերևից։ Այդ դեպքում հնարավոր է, որ բռնակը միակն է եղել։ Ամբողջ կափարիչը մշակված է դրվագման եղանակով։ Պահպանված մասի վրա արված է 2,5 սմ լայնություն ունեցող գոտի, որի վրա պատկերված է ոճավորված բողբոջ։ Առանձնապես հետաքրքիր մշակում ունի առյուծի պատկերը։ Նա նստած է ետևի ոտքերի վրա, առջևի ոտքերը պատկերված են ոչ ռեալիստական ձևով՝ երկար ու բարակ են և անմիջապես միանում են առյուծի գլխին։ Լավ է մշակված դեմքը։ Ծնոտը լայն է և ուռուցիկ։ Քիթը մշակված է եռանկյունաձև։ Աչքերը պատկերելու համար արվել են երկու կլոր փոսիկներ։ Առյուծի բաշը մշակված է ձկան թեփուկների նմանողությամբ։ Այս պատկերի մշակումը բավական նման է 1232 թ. պատրաստված Հաղարծնի մեծ կաթսայի ոտքերին պատկերված առյուծներին՝ հատկապես գլխի մշակմամբ։ Հաղարծնի կաթսայի վրա պատկերված առյուծներից մեկը ամբողջ իրանով է, մյուսը՝ միայն գլուխը։ Այստեղ նույնպես առյուծների ծնոտը ուռուցիկ է ու շեշտված, քիթը եռանկյունաձև է, աչքերի համար արված են կլոր փոսիկներ։ Տարբերությունն այն է, որ Հաղարծնի կաթսայի առյուծները ձուլված են մասսիվ պղնձից և բաշը ձկան թեփուկների նմանողությամբ մշակում չունի։ Իր ոճով կափարիչի վրայի առյուծի նման է մշակված նաև Անբերդի եկեղեցուց հարավ, 1971 թ. հայտնաբերված թաշնաքանդակը, ինչպես նաև Գեղարդավանքի եկեղեցու պատին քանդակված առյուծի պատկերը։ Հավանաբար, այս կափարիչը, որը XII—XIII դդ. գործ է, կրել է իր ժամանակի ոճի ազդեցությունը։

Անբերդից հայտնաբերվել են նաև մի քանի բրոնզե աշտանակներ (նկ. 85, 86, 87), որոնցից երեքը 1936 թ. բաղնիքի մոտ գտնվող, ինչպես ակադեմիկոս



Օրբելին է նշում, հնագետի համար երջանկաբեր շինությունից[28]։ Դրանք իրենցից ներկայացնում են բարձր ոտքի վրա ափսեաձև անոթներ, որոնց մեջ վառվել է մոմը։ Նման մի աշտանակի մասն էլ գտնվեց 1968 թ., միջնաբերդի արևելյան սենյակից։ Չնայած աշտանակի վրա առանձին զարդեր չեն արված, սակայն այն բավական ճաշակով և խնամքով է պատրաստված։ Բարձրությունը մոտ 60 սմ է, տրամագիծը՝ 3։ Ներքևի մասը ձևավոր է և վերջանում է տափակ մասով։ 1936 թ. պեղվածներից մեկի վրա արված է երեք քանդակազարդ գոտի, որոնք կազմված են խիստ ոճավորված բուսական և երկրաչափական զարդամոտիվներից։ Աշտանակներից մեկի ստորին մասը երեք ոտքերի վրա է։ Այս աշտանակի մշակումը նորից հիշեցնում է Հաղարծնի հանրահայտ մեծ կաթսան։ Հատկապես նման են ոտքերի մշակումը։

Անբերդից հայտնաբերված բրոնզե իրերի մեջ հետաքրքրություն է ներկայացնում փոքրիկ թասը, որի պատերի հաստությունը 1 մմ է։ Գտնվել են նաև երկաթե և պղնձե մատանիներ, որոնցից մեկը ակի տեղում կենդանու պատկեր ունի։ Հետաքրքիր են բոժոժ-զանգակը, բարակ խողովակները և այլն։ Բրոնզե խողովակներից մեկը մի կողմի վրա ունի մի քանի անցքեր և կարծես հիշեցնում է փողային գործիք։

Անբերդի 1936 թ. նյութերի մեջ կա նաև մի ապարանջանի բեկոր։ Վերջինս ատամնավոր է և հիշեցնում է մեր բրոնզեդարյան ապարանջանները։ 1936 թ. պեղումների օրագրի բացակայության պատճառով չենք կարող ասել, թե այն որտեղից է գտնվել։ Հարցն այն է, որ վաղ շրջանից միայն այս նյութն է։

**Խեցեղեն.**—Անբերդի պեղումներից հայտնաբերվել են բավական մեծ թվով խեցեղեն առարկաներ, որոնց մեծ մասը, ինչպես մյուս հնավայրերից՝ բեկորների ձևով։ Սակայն կան նաև ամբողջական ինչպես հասարակ, այնպես էլ ջնարակապատ անոթներ։ Խեցեղենը հիմնականում բաժանվում է երկու մեծ խմբերի. հասարակ և ջնարակած։

**Հասարակ խեցեղեն.**—Այս խմբում քննության է առնվում այն խեցեղենը, որը ջնարակապատ չէ։ Այստեղ կան ինչպես հասարակ կավից առանց դուրգի, այնպես էլ դուրգի վրա խնամքով պատրաստվածներ։ Կան անոթներ, որոնք պատրաստված են հատուկ կավից, ունեն նուրբ ու բարակ պատեր և կոչվում են նրբախեցի անոթներ։ Դրանք մեծ մասամբ ներկված են կարմիր գույնով և փայլեցված։ Անբերդի պեղումներից նման խեցեղեն հայտնաբերվել է ինչպես 1936 թ., այնպես էլ 1963—1968 թթ. պեղումներից։ Դրանց մի մասը կարող են կազմել այսպես կոչված դրոշմազարդ կարասները (նկ. 88), որոնք մեծ քանակությամբ հայտնաբերվել են Անիի և Դվինի պեղումներից։ Խեցեղենի մյուս խումբը կարմրավուն գույն ունի, սակայն առանց ներկի ու փայլի։ Դրանց կավը մեծ մասամբ ավազախառն է։ Անոթներն ունեն բավական հաստ պատեր։ Դրանք մեծ մասամբ տաշտեր են, զանազան մեծության թասեր ու կարասներ։ Հաջորդ խումբը սև կամ գորշ գույնի անոթներ են։ Դրանք մեծ մասամբ, այսպես կոչված, խոհանոցային անոթներ են՝ կճուճներ, քրեղաններ և այլն, ինչպես նաև կարասներ, կճուճների, թոնիրների ու անոթների խուփեր և այլ առարկաներ։

**Դրոշմազարդ կարասներ.**—Դրանք կարմիր գույնի են, երբեմն դեղնավուն երանգով։ Մեծ մասամբ փայլեցված են։ Անբերդից դրանք գտնվել են հիմնա-

[28] И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 320։



7—945

կանում բեկորների ձևով։ Միայն 1936 թ. պեղումներից հայտնաբերվածներից երկուսը ամբողջական են։ Սրանք ունեն 0,5 մետր ընդհանուր բարձրություն և Անիի ու Դվինի կարասների համեմատությամբ նեղ են։ Կարասներից մեկի վրա կապույտ ջնարակապատ խեցու բեկոր է ընդելուզվել։ Երկուսի վզերի մոտ էլ դրոշմման եղանակով եռանկյունի հորիզոնական գոտիներ են արված (եռանկյունին հաջորդաբար՝ մեկ դեպի վեր, մեկ դեպի վար)։ Պատկերներով դրոշմազարդ կարասների բեկորներ գտնվել են ինչպես 1936 թ., այնպես էլ հետագա տարիների պեղումներից։ Դրանց վրա պատկերված են կենաց ծառ, աքաղաղներ, այծեր, երկրաչափական և այլ զարդամոտիվներ։ Այդ բեկորներից մեկի վրա պատկերված է նախ երկու այծ, որից հետո՝ սանդղազարդ հետո՝ աքաղաղ (խիստ ոճավորված), վերջում՝ խաչ։ Այս վերջինը, ինչպես նաև սանդղազարդը մի տեսակ բաժանարարի կամ միջնորմի դեր են խաղում հիմնական պատկերների համար։ Գոտիների լայնությունը 3—4 սմ է, նույնքան էլ բարձրությունը, իսկ բաժանարար միջնորմ ծառայող պատկերներինը 1—2 սմ է։

Մեկ այլ, բավական մեծ բեկորի հորիզոնական գոտու վրա կարասի վզի կողմից իջնում են չորս ուղղահայաց գոտի, որոնք բաժանված են քառակուսիների, իսկ սրանց մեջ պատկերված են թռչող և նստած թռչուններ (հավանաբար, սագեր)։ Ի տարբերություն նախորդների, այստեղ թռչունների պատկերները ներճկված են։

1936 թ. Անբերդից հայտնաբերված դրոշմազարդ կարասների մասին բավականին հանգամանալից խոսել է Տ. Իզմայլովան[29]։ Նա դրանց թվագրման հարցում իրավացիորեն առարկում է Չուբինովին (Չուբինաշվիլի), որը դեռևս 20-ական թվականներին միտումնավոր կերպով Անիի դրոշմազարդ կարասների թվագրումը մի քանի դարով այս կողմ է բերում[30]։

Իրավացիորեն քննադատելով Չուբինաշվիլու սխալ տեսակետը «մուսուլմանական արվեստի առաջնակարգ նշանակության մասին», Տ. Իզմայլովան նույնպես չի կարողանում լրիվ ազատվել այդ տեսության ազդեցությունից և շատ դեպքերում կրկնում է 20—30-ական թվականներին մեծ տարածում գտած այն սխալը, համաձայն որի հայկական միջնադարյան արվեստը համարվում էր մուսուլմանական կամ այլ արվեստի մի մասը։

Հետագայում Բ. Շելկովնիկովի, Կ. Ղաֆադարյանի, Բ. Առաքելյանի և մյուսների կողմից քննարկվեցին դրոշմազարդ կամ դրոշմազարդ կարասների հետ կապված մի շարք հարցեր։ Բ. Շելկովնիկովը դրանք թվագրում է XII—XIII դարերով[31], իսկ Կ. Ղաֆադարյանը հենվելով Դվինից հայտնաբերված գոտեզարդ կարասների և դրանց հետ միասին դուրս եկած ճիշտ թվագրվող նյութերի վրա, գտնում է, որ դրանց ժամանակը պետք է համարել IX—XII դարերը[32]։

Անբերդի կարասները թվագրվում են XII դ. վերջով և XIII դ. առաջին տասնամյակներով։ Ավելի ճիշտ դրանք դուրս են եկել այն շերտից, որը

[29] *Т. А. Измаилова,* Керамика из раскопок в Анберде, стр. 192.

[30] *Чубинов,* Декоративное убранство анийских карасов, Христианский Восток, т. 5, выпуск 1, СПб., 1916.

[31] *Б. Шелковников,* Художественная керамическая промышленность средневековой Армении, Տեղեկագիր, Երևան, 1942, 3—4, էջ 11—14։

[32] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 194—197։



թվագրվում է 1196 թ. Զաքարյանների կողմից Անբերդը ազատագրվելուց մինչև 1236 թ. մոնղոլների կողմից այն ավերելը։ Կարևոր է նաև այն հարցը՝ Անբերդում են արտադրվել դրանք, թե բերվել են։ Մինչև Դվինի պեղումները գոտեզարդ կարասները կապվում էին միայն Անիի հետ։ Կ. Ղաֆադարյանը, հենվելով Դվինի պեղումների ընձեռած հարուստ նյութի վրա, ցույց տվեց, որ Դվինում այդ կարասները խիստ գործածական են եղել, և որ դրանց Դվինում արտադրվելը կասկածից վեր է։ Մեզ թվում է, թե Անբերդի նման խոշոր բնակավայրը նույնպես նման արտադրություն ունեցել է։ Նախ՝ այդ կարասները ծանր էին, հետևաբար դրանց տեղափոխումը բավական դժվար էր։ Բացի այդ դրանց արտադրությունը այնքան էլ բարդ չէր և Անբերդի համար միանգամայն մատչելի։ Եվ իրոք, Անբերդից հայտնաբերված կարասների կավը բավականին տարբերվում է թե՛ Անիի և թե՛ Դվինի կարասների կավից։ Այն ավելի խոշորահատիկ է, երբեմն էլ փոքր-ինչ ավազախառն։ Բացի այդ, Անբերդի օրինակները որակով էլ ցածր են և փայլն էլ խամրած։ Անբերդից հայտնաբերված կարասների մեջ կան այնպիսիները, որոնք, ճիշտ է, չունեն դրոշմազարդ գոտիներ, սակայն հատկապես իրենց կանթերի շքեղությամբ չեն զիջում գոտեզարդներին (նկ. 113)։ Սրանց գույնը նույնպես տարբերվում է Դվինի և Անիի նույնատիպ կարասների կավից և նման է Անբերդի գոտեզարդ կարասների կավին։

Այս բոլորը, թվում է, կասկած չեն թողնում, որ Անբերդից հայտնաբերված գոտեզարդ կարասները պատրաստվել են տեղում։

Անբերդից հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ հասարակ կարասներ, որոնք օգտագործվել են թե՛ հեղուկ և թե՛ այլ նյութեր պահելու համար։ Սրանց բարձրությունը մոտ մեկ մետր է, բերանը՝ համեմատաբար նեղ (10—15 սմ), չունեն առանձին զարդեր, բացի ուռուցիկ, հորիզոնական բարակ մի քանի գոտիներից և շատ սակավ պատահող ուղղահայաց, նույնպես ուռուցիկ զարդերից։ Այս կարասները կարելի է բաժանել երկու խմբի։

Առաջին խումբը բնորոշվում է բարակ պատերով (մոտ 0,5 սմ), շուրթերը մի քիչ ետ են շրջված, իրանը շուրթին միանում է կարճ վզով։ Շուրթը միշտ ունենում է մոտ 1,5 սմ լայնությամբ բավական ետ ընկած, գրեթե հորիզոնական, պսակ։

Երկրորդ խումբը բնորոշվում է հաստ պատերով (1—1,5 սմ), վիզը երկար է (10—12 սմ), որը շուրթի մասում փոքր-ինչ լայնանում է։ Ունի ոչ ցայտուն պսակ։ Վզի մասում ունի հորիզոնական ուռուցիկ գոտիներ (մեկ-երկու հատ)։ Նկարագրված կարասների հատակը բավական նեղ է (7—8 սմ) և տափակ։ Կարասների մի մասը թաղվել է գետնի մեջ։ 1964 թ. պեղումների ընթացքում ամրոցի հարավային ծայրում բացված փոքր սենյակի արևելյան մասում պեղվեց մի կարաս, որի բերանի մակարդակը հավասար էր իրենից ոչ հեռու գանվող թոնրի շուրթի մակարդակին։ Կարասը ուղղահայաց դիրքով էր և իր տեղում, պահպանվել էր նույնիսկ նրա բերանին դրվող սալ քարը։

Անբերդի կարասների կավը ավազախառն է, վատ թրծված։ Խեցու գույնը կարմրավուն է։ Նման կարասներ հայտնաբերվել են Դվինի[33], Անիի[34], Գառնիի[35], Արմավիրի և այլ հնավայրերի պեղումներից։

[33] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 184—185. (նկ. 157, 158, 159)։

[34] *И. А. Орбели.* Каталог анийского музея древностей (Избранные Труды, Ереван, 1963, стр. 58—59).

[35] Բ. Առաքելյան. Գր. Կարախանյան, Գառնի, հ. 3, Երևան, 1962, էջ 74—80։

**Կճուճներ, փարչեր.**—Այս խեցեղենը, որի բեկորները ամենից շատ են դուրս գալիս պեղումներից, խիստ գործածական է եղել թե՛ միջնաբերդի բնակիչների և թե՛ ամրոցաբնակների կողմից։ Դրանք մեծ մասամբ թոնրատան ամաններ են։ Դրվում էին կրակի վրա, որի պատճառով կճուճների կամ փարչերի մեծ մասը մրոտ է։ Կավի մեջ մեծ տոկոս է կազմում ավազը՝ ջերմության լավ դիմանալու համար։ Կավը գորշ գույնի է, սակայն պատահում են նաև բաց վարդագույն և այլ գույներ։

Սրանք իրենցից ներկայացնում են 25—30 սմ բարձրությամբ լայնաբերան անոթներ՝ 25—30 սմ տրամագծով։ Սովորաբար ունենում են երկու կանթ, կան օրինակներ խուլ կանթերով։ Պատահում են նաև առանց կանթի կճուճներ։ Պատերի հաստությունը խիստ տարբեր է. կան նուրբ ու բարակ (մոտ 0,5 սմ), ինչպես և հաստ պատեր ունեցողներ (մոտ 1 սմ)։ Ընդհանրապես պետք է ասել, որ Անբերդի կճուճներն ու փարչերը աչքի են ընկնում բարակ ու նուրբ պատերով և կավի մեջ ավազի մեծ տոկոսով։

Սրանք մեծ մասամբ ունեն դուրս շեշտված շուրթ և արտաքին կողմից սրածայր փայտիկի օգնությամբ արված գծային զարդեր։ Իրենց ոճով այս զարդերը խիստ նման են իրար, սակայն տարբերվում են մանրամասների մեջ։ Որպես կանոն շուրթի պսակից (որը նույնպես հորիզոնական փոսիկ է ունենում) իջնում է ուղիղ պատը, որը անոթի լայն մասում ունենում է ձողով արված հորիզոնական գծեր։ Որոշ նմուշների մեջ սրանցից ներքև, փորի մասում, արված են իրար զուգահեռ երկու ուղղահայաց գծեր, որտեղից էլ անցնում են հորիզոնական ներճկված զարդեր։ Երբեմն էլ այս հորիզոնական զարդերը արված են եռանկյունու օգնությամբ։ Այս անոթները ունենում են սովորաբար երկու կանթ։ XII—XIII դդ. պատկանող շերտից հայտնաբերվածների կանթերը որոշակիորեն տարբերվում են մյուսներից և խիստ յուրօրինակ են։ Դրանք ներքևում լայն են ու փռված։ Վերևում երեք մասի են բաժանվում, որոնցից երկու եզրայինները փռված միանում են ամանին, իսկ մեջտեղինը ուռուցիկ տեսք է ընդունում, հաճախ էլ ոլորվում ու նոր միանում ամանին։ Այս մասում կանթի կենտրոնում սովորաբար փոս է արվում։ Սրանց հատակը հարթ է ու լայն։

**Սափորներ.**—Իրենց չափերով սրանք մոտ են փարչերին ու կճուճներին, սակայն երբեք կրակի վրա չեն դրվել և օգտագործվել են ջրի, գինու և այլ հեղուկ նյութերի համար։ Այս սափորները չունեն նաև կանթեր, պատերը ավելի բարակ ու նուրբ են։ Հաճախ ներկված ու փայլեցված են լինում։ Պատրաստված են մեծ մասամբ բաց կարմրավուն կամ վարդագույն կավից։ 1965 թ. եկեղեցու հյուսիսային մասից հայտնաբերվեց մի ամբողջական սափոր (նկ. 90)։

Սափորներն ունեն 20—25 սմ բարձրություն և ամենալայն մասում մոտ 20 սմ տրամագիծ։ Բերանի լայնությունը 8—10 սմ է, շուրթերը մի քիչ ետ են շրջված։ Նստուկը տափակ է։ Վզի վրա հորիզոնական գծերի օգնությամբ արվում են զարդեր։ Վերևի մասը կարմիրով ներկված ու թույլ փայլեցված է լինում։ Սրանք շատ նման են Դվինից հայտնաբերված նմուշներին։ Սակայն Անբերդից հայտնաբերվածները կավի գույներով և, մանավանդ, ավազի շատությամբ տարբերվում են Դվինի օրինակներից։

Անբերդում կան նաև փոքր սափորներ։ Սրանք ունեն 10—12 սմ բարձրություն և նույնքան էլ լայնություն։ Բերանը նեղ է։ Մեծ մասամբ կարմիրով ներկված և լավ փայլեցված են։



**Քրեղաններ.**—Անբերդից հայտնաբերվել են թե ջնարակած (նկ. 91), թե կարմիր ներկած ու փայլեցված և թե հասարակ քրեղաններ։ Սրանք իրար նման են թե իրենց չափերով, թե ձևով և թե կավի բաղադրությամբ։ Միայն ներկվածների մեջ կան այնպիսիները, որոնց կավը մանրահատիկ է։ Քրեղանների բարձրությունը 9—10 սմ է, տրամագիծը լայն մասում՝ 18—20 սմ։ Ունեն բարձր ոտք կամ նստուկ, որի բարձրությունը 2 սմ է, իսկ տրամագիծը տատանվում է 8—10 սանտիմետրի միջև (նկ. 92, 93)։ Շուրթերը մեծ մասամբ ուղիղ են, մի փոքր ետ ընկած պատերով։ Սովորաբար ոչ մի զարդարանք թե՛ ներսից, թե՛ դրսից չունեն, եթե չհաշվենք դրսից երբեմն պատահող ալիքավոր կամ հորիզոնական գծերը։ Խեցին մեծ մասամբ կարմրավուն է, որի վրա ներսից և դրսից քսված է ավելի բաց գույնի շփոթ։ Առանց բացառության բոլորը պատրաստված են դուրգի վրա։ Քրեղաններ մինչև վերջերս էլ օգտագործվում էին կենցաղում՝ կերակուր ուտելու համար։ Անբերդից հայտնաբերված քրեղաններից շատերի վրա երևում են հրդեհի հետքեր, և չնայած երբեք կրակի վրա չեն դրվել, բայց դրանց մի մասը մրոտված է։

**Կաթնամաններ.**—Անբերդի տնտեսության մեջ անասնապահությունը մեծ դեր է կատարել։ Անասունների կաթը փռել են կավե մեծ տաշտերի մեջ (հավանաբար, օգտագործվել են փայտե մեծ տաշտեր, ինչպես այժմ, սակայն դրանք չեն հայտնաբերվել՝ հողի մեջ վատ պահպանվելու հետևանքով)։ Կավե ամբողջական տաշտեր Անբերդում չեն գտնվել, իսկ մյուս պեղավայրերից՝ հազվագյուտ, չնայած բեկորների քանակով դրանք շատ մեծ թիվ են կազմում։ Այդ բեկորները բացառապես շուրթի մասեր են, որոնցով կարողանում ենք վերականգնել դրանց բերանի բացվածքը, իսկ ամանի ձևի մասին գաղափար կազմելու համար ստիպված ենք դիմելու ազգագրական նյութերին։ Հայտնաբերված բեկորները հնարավորություն են տալիս ասելու, որ դրանց բարձրությունը չի անցել 10 սանտիմետրից, իսկ բերանը՝ 40—50 սմ է։ Դեպի ներքև նեղանում են և ունեն լայն ու հարթ հատակ՝ գետնի վրա լավ նստելու համար։ Սրանց շուրթը բավական լայն է (մոտ 3 սմ)՝ մի քիչ ետ փռված պսակով, որի վրա ձողիկով արված են ալիքավոր զարդեր։ Կաթնամանների կավը բաց վարդագույն է և՝ ավազի մեծ տոկոսով։ Հանդիպում են նաև ավելի փոքր կաթնամաններ՝ ավելի խնամքով պատրաստված։ Սրանք դրսից երբեմն ներկվել են կարմիր գույնով։ Շուրթը նախորդների համեմատ ավելի նեղ է։ Սրանց մի մասն էլ սեղանի վրա է դրվել։ Դրանց վրա կան զարդեր՝ փայտե ձողի օգնությամբ արված։ Երբեմն էլ փայլեցված են։

**Խուփեր.**—Անբերդից հայտնաբերված խուփերի մի մասը դրվել է թոնիրների վրա, սակայն նրանց մեծ մասը օգտագործվել է կճուճների, փարչերի և այլ անոթների բերանները փակելու համար (նկ. 95)։ Ոչ միայն թոնիրների մեծ խուփերը, այլև փոքր կճուճների մեծ մասի խուփերը մրոտված են։ Խուփերի մի մասը կարմիր ներկով է ներկված և մրոտ չէ։

Հատկապես հետաքրքիր են 1963 թ. գտնվածները։ Սրանցից մեկը, որ պատրաստված է գորշ ավազախառն կավից, բավական մեծ է՝ մոտ 40 սմ տրամագծով, կենտրոնում ուռուցիկ է։ Առանձնապես հետաքրքիր է բռնակը։ Սա մյուսների նման ելուստավոր, այսպես կոչված «մանչ» բռնակ ունի, սակայն դեկորատիվ նշանակությամբ և ավելի բարձր է։ Իսկական բռնակը կողքից է և նման է կճուճների բռնակների կանթերին։ Բռնակը մի ծայրով միանում է դեկորատիվ ելուստին, իսկ մյուսով՝ խուփի ներքևի մասին։ Ելուստի վրա վերադիր զարդով արված է խոյի գլուխ։

Մյուս խմբի խուփերն ավելի փոքր են։ Դրանց տրամագիծը 18—20 սմ է, ավելի բարակ են։ Սրանք իրենց ձևով առաջիններին նման են, սակայն արտաքին կողմից ունեն գծազարդեր։ Առանձնապես ուշագրավ են 1963 թ. հայտնաբերված խուփի վրայի զարդերը։ Ուռուցիկ ու տափակ մասերի միացման տեղում արված են երկշարք ակոսավոր շրջանաձև զարդեր, որտեղից շառավիղաձև դեպի խուփի եզրերն են գնում հաջորդաբար եղևնաձև և զիգզագավոր զարդեր։ Խուփը մրոտ է, դրվել է կճուճի կամ փարչի վրա։ Խեցին վարդագույն է, ավազախառն կավից։ Նույնանման մեկ այլ խուփ ունի շրջանաձև զարդեր, իսկ հարթ մասում արված են զիգզագաձև զարդեր։ Սրա մեկ ուրիշ տարբերակն է մի խուփի, որի հարթ մասում շրջանագծի ուղղությամբ սանրի օգնությամբ արված են զարդեր, որոնցից դրսի երկուսը ուղիղ են, իսկ մեջտեղինը՝ ալիքաձև։

Այս խմբի մեջ իր նրբությամբ աչքի է ընկնում 1936 թ. հայտնաբերված խուփը, որը շատ լավ թրծված, կարմիր ներկված ու փայլեցված է։ Պատրաստման որակով սրան նման է 1964 թ. նոր պարսպապատի մոտից հայտնաբերվածը, որի վրա դեռ թաց ժամանակ փայտե ձողով անցք է բացված, անշուշտ, եփվելու ժամանակ ամանից գոլորշին դուրս գալու համար։

Պեղումներից մեծ մասամբ հայտնաբերվում են այս խուփերի բռնակները, որոնք հիմնականում երկու ձևի են լինում. մեկը ելուստավոր է, կամ վերևը սուր ծայրով է վերջանում, մյուսի ելուստը հիմքից վերև լայնանում է և մեջն էլ փոս է լինում։ Սրանք ժողովրդի մեջ «մանչ» ու «աղջիկ» են անվանվում[36]։

**Ձիթաճրագներ**.—Լուսավորության համար Անբերդում օգտագործվել են պղնձե աշտանակներ ու մոմակալներ։ Դրանք մատչելի էին իշխանների և ունևորների համար, և պատահական չէ, որ հայտնաբերվել են դղյակից ու բաղնիքի շրջապատից։ Հասարակ ժողովուրդը օգտագործել է կավե ձիթաճրագներ, որոնք առատորեն հայտնաբերվել են ամրոցի տարբեր մասերից։ Դրանց մեջ լցված յուղը վառվում էր բամբակե պատրույգի միջոցով։ Կավե ձիթաճրագները կարելի է բաժանել երկու խմբի՝ հասարակ և ջնարակապատ։ Հասարակ ձիթաճրագները պատրաստված են ավազախառն, կարմրավուն կամ գորշ գույնի կավից։ Հատակը գրեթե միշտ տափակ է, երբեմն բարձր ոտքի վրա (նկ. 96)։ Ձիթաճրագի հիմնական մասը, որտեղ լցվում էր յուղը, ունի 8—12 սմ լայնություն, նույնքան էլ երկարություն։ Շուրթերը դեպի ներս են ներճկված, իսկ պատրույգ դնելու մասում ավելի է նեղացված՝ թողնելով 1—2 սմ։ Կան նաև օրինակներ, որոնց կավը թրծելուց հետո ստացել է գրեթե սև գույն։

Հանդիպում են նմուշներ, որոնք պատված են սպիտակ անգոբով։ Այդպիսի մի օրինակ, որ հայտնաբերվել է 1936 թ., վրան փակ է, կենտրոնում թողնված է մի փոքր անցք՝ պատրույգի համար։

Ձիթաճրագների մյուս խումբը պատած է մեծ մասամբ կապույտ և երկնագույն ջնարակով։ Սրանք ունեն բարձր ոտք։ Նախորդներից ավելի փոքր են։ Գրեթե բոլորն ունեն փոքր պոչուկ կամ բռնակ։ Հայտնաբերված ձիթաճրագները, մանավանդ պատրույգի տեղում, մրոտ են։

Անբերդից հայտնաբերվել են այսպես կոչված սնդկամաններ, որոնցից մի քանիսի վրա կան զարդեր։ Այս անոթների մասին բավական խոսվել է գիտական գրականության մեջ։ Հայտնվել են տարբեր կարծիքներ դրանց գործածության կերպի կամ նշանակության մասին։ Այժմ կարծես այն տեսակետն

36 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 198։



է տիրում, որ դրանք հեղուկ նյութեր պահելու համար են ծառայել[37]։ Սրանց մեջ հաջողությամբ կարելի էր պահել օծանելիք։ Դրանց կավը շատ մանրահատիկ է, լավ տրորված, որպես կանոն պատերը հաստ են և դրսից էլ մոտ 2 մմ հաստությամբ ավելի մշակված կավի շերտով պատած։ Այդ պատճառով ջուր բոլորովին չի ծծում։ Բերանները շատ նեղ են և հարմար պինդ փակելու համար։ Սրանց ձվաձևությունը պայմանավորվում էր միջի հեղուկի անկորուստ օգտագործմամբ։

Ուսումնասիրողներից Կ. Ղաֆադարյանը գտնում է, որ Դվինն ու Անին արտադրել են այդ սնդկամաններից[38]։ Դվինին հատուկ է խեցու բնորոշ կապտավունը, իսկ Անիին՝ դեղնավունը։ Անբերդից հայտնաբերվածների մեջ այս երկու տեսակներն էլ կան։ Նշանակում է, այն իր սնդկամանները ստացել է գլխավորապես այդ կենտրոններից։ Հավանաբար, Անբերդը չի ունեցել սնդըկամանների իր սեփական արտադրությունը, քանի որ հարմար կավ ամրոցի շրջապատում չկա, բացի այդ համեմատաբար փոքր ծավալը հնարավորություն էր տալիս դրանք բերել ոչ հեռու տեղերից, որպիսիք Անին ու Դվինն էին։

**Ջնարակած խեցեղեն**.—Ջնարակը հայտնի էր շատ վաղուց, սակայն մեծ կիրառություն ստացավ միայն միջնադարում, հատկապես Արևելքում։ Մեր խնդրից դուրս է անդրադառնալ ջնարակի ստացման, տարածման և բազմաթիվ այլ հարցերի արծարծմանն ու լուսաբանմանը։

Միջնադարյան Հայաստանում ջնարակած խեցեղենը մեծ կիրառություն է ունեցել։ Ջնարակով են պատած սափորներն ու քրեղանները, թասերն ու ափսեները, ձիթաճրագներն ու աղամանները։

Անբերդում ջնարակած խեցեղենը գործածական է եղել ինչպես միջնաբերդի, այնպես էլ ամրոցի բնակիչների համար։ Տարբերությունն այն է, որ իշխանավորները հնարավորություն են ունեցել գործածելու հեռավոր տեղերից բերված թանկարժեք անոթներ, ինչպես նաև հախճապակե բարձրորակ իրեր, իսկ ամրոցաբնակները բավարարվել են տեղական արտադրության, ինչպես նաև Դվինից ու Անիից բերված ջնարակապատ անոթներով։

Ժամանակագրական տեսակետից Անբերդի ջնարակած խեցեղենի վաղ օրինակները վերաբերվում են X—XI դարերին։ Անբերդում չեն գտնվել IX դարով թվագրվող Դվինից հայտնի դարչնագույն ու կանաչ թափանցիկ ջնարակապատ անոթներ, որոնց քառակուսիների բաժանված մակերեսը նկարազարդված է դարչնագույն սլաքներով։ Անուղղակի կերպով Անբերդն էլ կարող է օժանդակել այդ տիպի ջնարակապատ անոթների թվագրման վերջին սահմանը որոշելուն, քանի որ գրավոր աղբյուրներից հայտնի է, որ այն հանդես է գալիս որպես ամրոց X դարից։

Անբերդի X—XI դդ. պատկանող ջնարակած խեցեղենի նմուշները բնորոշվում են թափանցիկ, կանաչ, ինչպես նաև դեղին գույնի ջնարակների տակ գծազարդով և անգոբը հեռացնելու եղանակով զարդարելու տեխնիկայով։

Հաջորդ շրջանը թվագրվում է XII—XIII դարերով։ Այս շրջանի Անբերդի խեցեղենը բնորոշվում է մեծ մասամբ կանաչ, թափանցիկ ջնարակով։ Պատահում են նաև դեղնավուն, նույնպես թափանցիկ, ջնարակապատ անոթներ։ Նկարազարդումը արված է փորագրման և գծազարդման միջոցով։ Սակավ են հանդիպում կանաչ ջնարակով, առանց զարդի նմուշներ։

37 Հ. Ջանփոլադյան, Դվինի պեղումներից հայտնաբերված ձվաձև անոթները, ՀՍՍՀ ԳԱ պետական պատմական թանգարանի աշխատություններ, հ. 3, Երևան, 1950, էջ 147—167։

38 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 203—207։

Նպատակահարմար ենք գտնում տալ 1964 թ. ամրոցի հարավային ծայրում բացված սենյակից հայտնաբերված մի քանի ջնարակապատ անոթների նկարագրությունը, քանի որ այս սենյակի ժամանակը խիստ որոշ է (XII դ. վերջ և XIII դ. սկիզբ)։ Սա, անշուշտ, որոշ չափով կօգնի ջնարակապատ անոթների թվագրումը ճշտելուն, հատկապես զատելու Զաքարյան ժամանակաշրջանի նյութերը նախորդ՝ XI—XII դարերից։

Նկատի ունենալով, որ անոթների ձևերը նույնքան նշանակություն ունեն խեցեղենի ժամանակը որոշելու համար, որքան պատրաստման տեխնիկան, նպատակահարմար է տալ նաև դրանց ձևերի համառոտ նկարագրությունը։

**Փոքր, ոչ խորը թաս.**—*Բարձրությունը նստուկի հետ միասին՝ 6,5 սմ, տրամագիծը՝ 16 սմ, նստուկը ոչ բարձր, 6 սմ տրամագծով։ Շուրթը քիչ ետ է շրջված և դրսի կողմից ելուստավոր է։ Անոթի ներսը պատած է միագույն կանաչ ջնարակով։ Ոչ մի զարդ ներսից և դրսից չունի։*

**Մեծ քրեղան.**—*Ջնարակը նույնպես միայն ներսից է՝ թափանցիկ բաց-դեղնավուն։ Ջնարակի տակից կանաչ փոշու ցանման միջոցով շառավիղաձև արված են ոչ լայն շերտեր։ Կենտրոնից դեպի անոթի եզրերը շառավիղաձև բարձրանում են 7 բարակ գծեր, որոնք կանաչ շերտերի հետ համապատասխան չեն։ Նման քրեղաններ գտնվել են Դվինի պեղումներից։ Ամենայն հավանականությամբ, Անբերդի օրինակը նույնպես բերվել է Դվինից, քանի որ խեցին բաց-դեղնավուն է, ինչպես Դվինի նույնատիպ անոթներինը։*

XIII դ. վերջի և XIV դ. խեցեղենը խիստ տարբերվում է նախորդ շրջաններից։ Այն բնորոշվում է մի մասը սև անգոբով սպիտակ ֆոնի վրա արված զարդերով՝ վրան թափանցիկ ջնարակ։ Նկարազարդումը երկրաչափական է և ոճավորված բուսական մոտիվներով։ Անոթների արտաքին կողմը նկարազարդված է կապույտ և կանաչավուն ուղղահայաց գծերով, մյուս մասը ունի անգոբի վրա կոբալտով արված նկարազարդումներ։ Այս անոթների խեցին տեղական է՝ կարմրավուն խոշորահատիկ կավից։ Սրանց համար բնորոշ է ներքուստ և արտաքուստ բուսական և երկրաչափական մոտիվներով նկարազարդումը։ Հատկանշական է նաև բուսական զարդերի ռեալիստական պատկերումը։ Կոբալտը անգոբի վրա դրված է բավական հաստ շերտով, որի պատճառով նկարազարդումը ուռուցիկ տեսք ունի։ Անոթների ճիշտ ձևերը դժվար է վերականգնել, սակայն եղած բեկորների հիման վրա կարելի է ասել, որ դրանք հիմնականում պատկանում են թասերի և լայնաբերան այլ անոթների։ Պահպանված անոթների շուրթերը առանձին պսակներ չունեն։

Անբերդից 1936 թ. հայտնաբերված խեցեղենի ուսումնասիրող Տ. Իզմայլովան դա համեմատում է Սամարղանդի և Ուրգենչի նույնատիպ կերամիկայի հետ, և քանի որ վերջիններս թվագրվում են ամենավաղը XIV—XV դդ., իսկ այլ տեղերինը՝ XVI—XVII դդ., հնարավոր է համարում Անբերդից հայտնաբերվածները թվագրել XIV—XV դարերով[39]։

Սակայն այս թվագրությունը Անբերդի համար ճիշտ չէ։ Հայտնի է, որ մոնղոլական արշավանքներից հետո, երբ XIII դ. վերջում Վաչուտյանները նորից բնակվում են Անբերդում՝ չկարողանալով զբաղեցնել ամրոցի ամբողջ տարածությունը, մի պարսպով իրենց բնակեցրած տարածությունը անջատում են մնացած մասից։ Սա իր մեջ ներառում է միջնաբերդը և նրան կից ամրոցի հյուսիսային մասը։

[39] Т. А. Измаилова, նշվ. աշխ., էջ 185—187։



Հետագա դարերում, երբ ամրոցը նորից բնակեցվեց, բնակիչները զբաղեցրին նրա ամբողջ տարածությունը, որի պերճախոս վկաներն են այժմ լավ պահպանված ամբողջ ամրոցի տերիտորիան զբաղեցնող այդ շրջանի կառույցները։

Վերոհիշյալ խեցեղենը հայտնաբերվել է բացառապես նոր պարսպապատերի ներսի տարածությունից, այդ թվում նաև միջնաբերդից, այսինքն՝ այն տարածությունից, որը բնակեցվել էր XIII դ. վերջից։ Հայտնի է նաև, որ XIV դ. վերջում Հայաստանը ավերվել է Լենկթեմուրի կողմից, իսկ Անբերդը բացառություն չէր։ Այս հանգամանքները նկատի ունենալով, կարծում ենք, որ Անբերդի այդ խեցեղենը պետք է թվագրել XIV դարով։

Անբերդից հայտնաբերվել են նաև հախճապակե անոթներ, որոնցից ուշադրության արժանի է 1964 թ. գտնված լայնաբերան անոթը։ Այն պատրաստված է խոշորհատիկ կարծր կավից, պատված է բաց-երկնագույն, թափանցիկ ջնարակով։ Դրսից ամբողջ մակերեսը պատած է կենդանու դիմակներով, որոնք պատկերում են, հավանաբար, առյուծի դեմքը։ Լավ արտահայտված են ականջները և ծնոտը։ Շուրթը ունի դեպի ետ շրջված պսակ։ Նման անոթներ հայտնաբերվել են նաև Դվինից, այն տարբերությամբ, որ դրանց վրա պատկերված են մարդկային դիմաքանդակներ[40]։ Սակայն ընդհանուր գծերով սրանք իրար շատ նման են։

Անբերդում կան նաև ներմուծված հախճապակե անոթների բեկորներ։ Հայտնաբերվել են նաև ռեյան տիպի սափորի բեկորներ, չինական սելադոն, ջնարակապատ սալիկներ և այլ առարկաներ։

**Ապակի.**—*Արդեն տեսանք, որ հասարակ և ջնարակապատ խեցեղեն Անբերդում, ինչպես և մյուս բնակավայրերում լայնորեն օգտագործվել է։ Անբերդում ապակե առարկաներ նույնպես գործածվել են, սակայն այն տարբերությամբ, որ եթե հասարակ և ջնարակապատ խեցեղենի գրեթե բոլոր տեսակները ծանոթ էին ամրոցի բոլոր բնակիչներին, ապա ապակե առարկաներ գործածվել են մեծ մասամբ միջնաբերդում (նկատի չունենք ապակե ապարանջանները, որոնք լայնորեն գործածվում էին բնակչության բոլոր խավերի կողմից)։ Անբերդի պեղումներից հայտնաբերված ապակե անոթների 96 տոկոսից ավելին գտնվել է միջնաբերդից։*

Հայտնաբերված ապակե անոթները տարբեր չափերի են. շատ փոքրիկ սրվակներից (2,5 սմ բարձրությամբ, նույնքան էլ լայնությամբ՝ օծանելիք կամ այլ թանկարժեք հեղուկ պահելու համար) մինչև մեծ սրվակներն ու լայնաբերան անոթները։

Ապակե անոթներ Անբերդում հայտնաբերվել են մեծ մասամբ բեկորների ձևով։ Միայն մի փոքրիկ սրվակ է պահպանվել գրեթե ամբողջությամբ։ Սա կանաչավուն ապակուց է, պատերի հաստությունը՝ 1 մմ, թերի է միայն հատակի մասը։ Ապակե սրվակների վզերը ավելի հաստ են քան մնացած մասերը, այդ է պատճառը, որ հայտնաբերվում են վզի մասերը շրթի հետ միասին։ Սրվակների վզիկներ հայտնաբերվել են մեծ մասամբ միջնաբերդից։ Սրանց բոլորի համար բնորոշ է ապակու ոչ բարձր որակը և ոչ հաճելի դեղնականաչավուն գույնը, սրվակի պատերի համեմատաբար հաստ լինելը, նեղ անցքը և վերջապես փռված շուրթը։ Բացառություն են կազմում մի քանի փոքր սրվակներ, որոնք չունեն շուրթի պսակ։ Կան նաև համեմատաբար մեծ սրվակ-

[40] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 223—224։

*ներ, որոնց վիզը գրեթե ուղիղ է բարձրանում և արտաքին կողմից նիստավոր է։*

*Հայտնաբերվել են նաև լայնաբերան անոթների բեկորներ, որոնց կարելի է բաժանել երկու խմբի։ Մեկը ոչ հաճելի գույնի հաստ պատերով զանազան բաժակների, գավաթների և այլ առարկաների բեկորներ են։ Սրանց շարքում պետք է դնել, հավանաբար, ապակե աղամանները։ Վերջիններիս պատերը ավելի հաստ են, ապակին մեծ մասամբ ոչ թափանցիկ։ Աղամանների տրամագիծը տատանվում է 6—7 սանտիմետրի միջև։ Հատակը հարթ է։ Բարձրությունը՝ 2—3 սմ։ Ունեն բնորոշ ատամնավոր զարդեր։*

*Մյուսը բարձրորակ ապակե անոթների տարբեր բեկորներ են։ Դրանցից արժե հիշատակել շագանակագույն, շատ հաճելի տեսքով, թափանցիկ, դեպի ետ ծալված շուրթով ապակե անոթի բեկորը, դեղնավուն, շատ նուրբ պատեր ունեցող անոթի հատակը, 1964 թ. հայտնաբերված, շատ բարակ, միանգամայն թափանցիկ լայն անոթի բեկորը, շուրթը կանաչ ներկված անոթը և այլն։*

**Ապակե ապարանջաններ.**—*Ինչպես մյուս բնակավայրերի պեղումներից, այնպես էլ Անբերդից շատ են գտնվել ապակե ապարանջանների բեկորներ (նկ. 98)։ Ի տարբերություն ապակե անոթների, սրանք հավասար չափով հայտնաբերվել են ինչպես միջնաբերդից, այնպես էլ ամրոցից։ Սա ապացույց է այն բանի, որ միջնադարում, հատկապես XII—XIII դդ. ապակե ապարանջանը շատ տարածված ու էժան ապրանք է եղել։ Գտնվել են կապույտ, կանաչ, դեղնավուն ապակուց պատրաստված թափանցիկ ու կիսաթափանցիկ ապարանջանների բեկորներ։ Թափանցիկ ապարանջանների մի մասը տափակ, հարթ ապակուց է պատրաստված, մյուսները ոլորուն են։ Վերջիններիս մեջ հետաքրքրություն են ներկայացնում դեղնավուն ապակուց պատրաստվածները, որոնք շատ հաճելի տեսք ունեն։*

*Հանդիպում են նաև ոչ թափանցիկ, սև ամալտայից պատրաստված նմուշներ։*

*Ապարանջանների մեջ կան բաց-դեղնավուն, երկնագույն, կապտավուն, կանաչավուն և այլ գույներ ունեցողները։ Կարևորն այն է, որ Անբերդում հայտնաբերվել են բեկորներ, որոնք արտադրության խոտան են։ Սա ապացուցում է, որ ամրոցն ունեցել է ապարանջանի տեղական արտադրություն։*

*Ապարանջաններից մեկի վրա պահպանվել է միացման տեղը։*

*Անբերդից հայտնաբերվել է նաև արծաթե մի ապարանջան։ Այն պատրաստված է մի քանի բարակ՝ մոտ մեկ մմ հաստություն ունեցող արծաթե լարերից, որոնք ոլորվել են, իսկ ծայրերում տափակ են՝ վրան կետավոր զարդերով։ Ապարանջանի հաստությունը մոտ 0,5 սմ է։*

**Դրամներ.**—*Անբերդից հայտնաբերվել են մոտ 200 զանազան դրամներ, որոնց մեծ մասը 1936 թ. պեղումներից։ Սրանց մեջ կան ինչպես սելջուկյան, այնպես էլ վրացական ու բյուզանդական դրամներ (նկ. 100, 101), երկու դրամ էլ Կիլիկիայի հայոց Հեթում թագավորի կտրած նմուշներից է։*

*Քանակով առաջինը սելջուկյան դրամներն են (թվով մոտ 120 հատ), հաջորդը՝ վրացական։*

*Հայտնի է, որ սելջուկյան դրամները ոչ միայն Հայաստանում, այլև նրանց տիրապետության շատ վայրերում լայնորեն օգտագործվել են։ Այդ դրամները Հայաստանի մյուս հնավայրերում նույնպես շատ առատ են։ Դա բացատրվում է մի կողմից՝ սելջուկյան դրամների կենսունակությամբ, մյուս կողմից՝ այդ ժամանակաշրջանում դրամափոխանակության մեծ աճով։ Հատկանշական է, որ գրեթե բոլոր այդ դրամները պղնձից են, եթե չհաշվենք*



*միակ բյուզանդական ոսկե դրամը, թանկարժեք մետաղներից դրամներ չեն հայտնաբերվել։*

*Վրացական դրամներ Անբերդում նույնպես շատ են հայտնաբերվել։ Հատկանշականն այն է, որ վրացական դրամների հետ գտնվում են նաև սելջուկյան դրամներ։ Այսպես, 1964 թ. միջնաբերդում հայտնաբերված բրոնզե հավանգի մեջ մի վրացական դրամի հետ կար նաև երեք սելջուկյան դրամ։ Վրացական դրամներից մեկը՝ Թամար և Դավիթ մակագրությամբ, հայտնաբերվեց Անբերդաձորի կողմի դարպասի վերանորոգման մասի կրաշաղախի միջից։ Ակներևաբար, Անբերդը Զաքարե Ամիրսպասալարի կողմից ազատագրվելուց հետո ամրոցի վերանորոգման ժամանակ այդ դրամը գցել են պատի մեջ, որպես բարի նշան՝ շինության հիմքերը հաստատուն պահելու համար։ Նման սովորություն պահպանվել է նաև մեր օրերում։*

*Շատ հետաքրքիր է Կիլիկյան հայոց Հեթում Ա թագավորի երկու դրամների գյուտը Անբերդում։ Սա մեզ, իհարկե, թույլ չի տալիս դատողություններ անելու այն մասին, որ առևտրական կապեր են եղել Հայաստանի և Կիլիկյան հայոց թագավորությունների միջև, կամ էլ, որ կիլիկյան հայոց դրամները շրջանառության մեջ էին Հայաստանում, մանավանդ, որ մյուս պեղավայրերից նման դրամները նույնպես հազվագյուտ են։*

*Անբերդի պեղումներով հայտնաբերվել են նաև բամբակի, կաշվի, ցորենի և այլ մթերքների մնացորդներ։ Մեծ թիվ են կազմում մարդկային կմախքները։ Կան եզան, ձիու, ոչխարի, այծի, զանազան մանր ու խոշոր թռչունների ոսկորներ, որոնք լրացնում են մեր պատկերացումները Անբերդի կյանքում որոշակի դեր ունեցած անասունների տեսակարար կշռի մասին։*

* * *

*Այսպիսով, Անբերդի ուսումնասիրությունից պարզվում է, որ միջնադարյան Հայաստանի, հատկապես Բագրատունյաց թագավորության, արևելյան սահմանները պաշտպանելու գործում ամրոցը խաղացել է առաջնակարգ դեր։ Վերջինս ավելի է աճում XII—XIII դդ., երբ չնայած առանձին իշխանությունների գոյության երկրի քաղաքական վիճակը բավական անհաստատ էր։ Այդ է պատճառը, որ ամրոցը դառնում է նորաստեղծ Վաչուտյան իշխանական տան ռազմական ու վարչական կենտրոնը։ Անբերդը բուռն ծաղկում ու բարգավաճում է ապրում, սակայն շուտով ամբողջ Հայաստանի հետ ենթարկվում է մոնղոլական ավերիչ արշավանքներին, իսկ Լենկթեմուրի արշավանքներով դուրս է գալիս պատմական ասպարեզից։*

*Շարունակելով ու զարգացնելով վաղեմի ավանդները, հայ բերդաշինությունը Անբերդում կատարելության է հասնում։ Ամրոցապատերի և հատկապես բուրգերի ու աշտարակների նպատակայնաց օգտագործումը հայ բերդաշինության արվեստի պատմության կարևոր փուլերից է։ Հիանալի օգտագործելով տեղանքը և այն լրացնելով արհեստական կառույցներով, հաշվի առնելով կայազորի ստորաբաժանումների առանձնահատկությունները, Անբերդի ռազմագետ-ճարտարապետները բերդաշինության մեջ հասնում են լավագույն արդյունքի։ Մեծ առաջադիմություն է նկատվում դարպասաշինության ասպարեզում։ Անընդհատ ամրացվելով, դրանք դառնում էին կրկնակի։ Ճանապարհների նկատմամբ դարպասները տեղադրվում էին այն հաշվով, որ ամենանպաստավոր պայմանների մեջ են դնում բերդի պաշտպաններին, իսկ ամրոցի վրա հարձակվող թշնամու համար առավել դժվարություններ հարուցում։*

Անբերդի ջրամատակարարման սիստեմը օրինակելի է միջնադարյան, և ոչ միայն միջնադարյան, ամրոցներն ու բնակավայրերը ջրով անխափան ապահովելու խնդրում։ Կավե գունգերով սառնորակ աղբյուրներից ամենօրյա ջուր ստանալու բազմաճյուղ սիստեմը, պաշարումների ժամանակ ջրամբարներով ու գաղտնուղիներով ջրի անխափան ապահովումը Անբերդի կյանքը դարձնում էր բարեկեցիկ և պաշարումների ժամանակ հուսալի։

Անբերդի եռահարկ միջնաբերդ-պալատը միջնադարի լավագույն աշխարհիկ շինություններից է։ Տեղին ու դիրքին համապատասխան՝ այն հագեցվել է պաշտպանական հուսալի և հզոր կառույցներով, միևնույն ժամանակ ծառայել է որպես իշխանական հարմարավետ ապարանք։

Հայ եկեղեցական ճարտարապետության լավագույն կոթողներից է 1026 թ. Վա՛հրամ Պահլավունու կառուցած եկեղեցին։ Եկեղեցու կառուցողական բարձրը ու անթերի շինելակերպը, զուսպ ու անաղարտ ոճը դիմացել են բնության և ժամանակների ավերիչ ազդեցությանը՝ պահպանելով գեղագիտական ներգործության ուժը։

Միջնադարյան կենցաղային կառույցների մեջ իր ուրույն տեղն ունի Անբերդի բաղնիքը։ Ջեռուցման տնտեսվար սիստեմը ապահովում էր լողասրահի ու հանդերձարանի տաքացումը։ Միջնադարյան տեխնիկայի առաջնակարգ գյուտերից է նրա տաք և պաղ ջրերի կարգավորումը՝ երկաթե խողովակների և բրոնզե ծորակների օգտագործմամբ։

Հնագիտական պեղումները ցույց են տալիս միջնադարյան ամրոցների տեղն ու դերը ոչ միայն երկրի պաշտպանության, այլև կենցաղային առարկաների ու զենքերի արտադրման գործում։ Ապացուցված պետք է համարել, որ Անբերդը ունեցել է խեցեղենի, ոսկե և երկաթե իրերի պատրաստման իր արհեստանոցները։ Պեղումներով բացված դարբնոցներն ու դրանց շրջապատում գտնված երկաթի արտադրական թափոնը, անավարտ առարկաները, ջնարակած խեցեղենի խոտանը և հասարակ խեցեղենի՝ միայն Անբերդին բնորոշ առանձնահատկությունները կասկած չեն թողնում, որ Անբերդը եղել է նաև արհեստավորական կենտրոն։

Բրոնզե գեղաքանդակ հավանգների, աշտանակների և այլ առարկաների առատությունը խոսում է այն մասին, որ դրանց արտադրության վայրը պետք է փնտրել եթե ոչ Անբերդում, ապա նրան մոտ գտնվող Անի և այլ խոշոր կենտրոններում։ Փաստերը ցույց են տալիս, որ դրանք մի կողմից սերտորեն կապվում են X—XIII դդ. Հայաստանի ճարտարապետական հուշարձանների, փայտե ու խեցեղեն առարկաների զարդամոտիվների, մյուս կողմից Հաղարծնի 1232 թ. մեծ կաթսայի զարդամոտիվների հետ։

Ջնարակած խեցեղենի վաղ տեսակների բացակայությունը օգնում է նրանց օգտագործման վերջին եզրագիծը ճշտելուն։ Անբերդի պեղումները օգնում են ճշտելու նաև ուշ միջնադարյան խեցեղենի թվագրումը։ Ամբողջ Արևելքում մեծ տարածում գտած սևով սպիտակ անգոբի վրա (երբեմն նաև կանաչով) բուսական և այլ մոտիվներով նկարազարդված խեցեղենը Անբերդում թվագրվում է XIII դ. վերջով և XIV դարով։

Գոյատևելով մոտ յոթ դար, Անբերդը ականատես է եղել բուռն զարգացման ու առաջադիմության, որ կատարվել են ոչ միայն Հայաստանում, այլև բուն Անբերդում։ Ամրոցը տեսել է նաև բազմաթիվ արշավանքներ ու ավերումներ։



ՑԱՆԿ
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

**Արաճամյան Վ.**, *Արհեստները և համքարական կազմակերպությունները Հայաստանում IX—XIII դդ.*, Երևան, 1946։
**Արաճամյան Վ.**, *Միջնադարյան Հայաստանի զենքի տեսակները*, աշխ., Հայաստանի պետ. պատմ. թանգարանի, հ. 2, 1949։
*Ակնարկ հայ ճարտարապետության պատմության*, Երևան, 1964։
*Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց*, տեղագրեաց հ. Ղեւոնդ Ալիշան, Վենետիկ, 1890։
**Առաքել Դավրիժեցի**, *Պատմութիւն*, Վաղարշապատ, 1896։
**Առաքելյան Բ.**, *Քաղաքներն ու արհեստները Հայաստանում*, Երևան, հ. 1, 1958, հ. 2,1964։
**Առաքելյան Բ.**, *Գառնի*, հ. 3, Երևան, 1962։
*Գրիգոր Մագիստրոսի թղթերը*, Ալեքսանդրապոլ, 1910։
*Եղիշէի Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին*, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասյան, Երևան. 1957։
**Զաքարիա Սարկավագ**, *Պատմութիւն*, Վաղարշապատ, 1870։
**Էփրիկյան**, *Բնաշխարհիկ բառարան*, Վենետիկ, 1903—1905։
**Թովմա Արծրունի**, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, Թիֆլիս, 1917։
**Թորամանյան Թ.**, *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության*, հ. 1, Երևան, 1942, հ. 2, 1946։
*ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950։
*ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, երկրորդ մաս, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1958, մասն Գ, 1967։
**Ինճիճեան Ղուկաս**, *Ստորագրութիւն հին Հայաստանեայց*, Վենետիկ, 1822։
**Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի. Երևան, 1961։
*Համառօտ պատմութեան Վարդանայ վարդապետի*, Վենետիկ, 1862։
**Հովհաննէս Շահխաթունեանց**, *Ստորագրութիւն էջմիածնի հինգ գաւառացն Արարատայ*, էջմիածին, 1842, հ. Բ։
**Հովսեփյան Գ.**, *Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ*, Վաղարշապատ, 1928, հ. 1։
**Հովսեփյան Գ.**, *Խոտակերաց ս. Նշան, մի նմուշ ԺԳ դարու հայ ոսկերչութեան*, հրատարակութիւն «Գեղարուեստ» հանդեսի, Թիֆլիս, 1912, էջ 2։
*Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան*։
**Ղափանցյան Գր.**, *Սովետական Հայաստանի նոր տեղանունների մասին* (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., 1954, № 1)։
**Ղափանցյան Գր.**, *Ասորա-բաբելական բառերը հայերենում* (Տեղեկագիր, 1945, էջ 3—4, 7—33)։
**Ղաֆադարյան Կ.**, *Դվին քաղաքը և նրա պեղումները*, Երևան, 1952։
**Ղաֆադարյան Կ.**, *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները*, Երևան, 1948։
**Ղաֆադարյան Կ.**, *Հաղբատ*, Երևան 1963։
**Ղաֆադարյան Կ.**, *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները*, Երևան, 1957։
**Մանանդյան Հ.**, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հ. Գ, Երևան, 1952։
**Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898։
*Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.* հ. I կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951։
**Մխիթար Այրիվանեցի**, *Պատմութիւն Հայոց*, Մ., 1860։
**Մխիթար Գոշ**, *Դատաստանագիրք Հայոց*, Վաղարշապատ, 1880։

*Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913։*
*Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։*
*Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրութեամբ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963։*
*Պատմութիւն Ղեւոնդայ Մեծի վարդապետի, Ս. Պետերբուրգ, 1887։*
**Պողոսյան Ս.,** *Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1956։*
**Ջանփոլադյան Հ.,** *Դվինի պեղումներից հայտնաբերված ձվաձև անոթները, պետական պատմական թանգարանի աշխատություններ, հ. 3, Երևան, 1950, էջ 147—167։*
*Սիսուան, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, հաւաքեալ ի Հ. Ղեւոնդայ Ալիշան, Վենետիկ, 1885։*
*Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Խորհրդածութիւնք, Վենետիկ, 1847։*
*Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանյանց, Պետերբուրգ, 1913։*
*Վրաց աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, կազմեց Լ. Մելիքսեթ-բեկ, հ. 1, Երևան, 1934։*
**Տեր-Մինասյան Երվ.,** *Անբերդաձորի հնությունները և արձանագրությունները, Էջմիածին, 1961, հ. Ե, էջ 45—56։*
*Փաւստոս Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1914, Թիֆլիս, 1917։*
**Օրբելի Հ.,** *Սասունցի Դավթի տաճարանը, Երևան, 1961։*
*Аракелян Б.*, Гарни, 1, Ереван, 1950.
*Аракелян Б.*, Гарни, 2, Ереван, 1957.
*Ветрувий*, Десять книг об архитектуре, М., 1938.
*Измаилова Т. А.*, Керамика из раскопок в Анберде, Труды Отдела Востока Государственного Эрмитажа, т. 4, Л., 1947.
*Измаилова Т. А.*, Архитектурные фрагменты из Анберда, Труды Отдела Востока Государственного Эрмитажа, т. 1, Л., 1939.
*Казыев С. М.*, Историко-археологическое обследование городища Кабалы, Материальная культура Азербайджана, т. 5, Баку, 1964.
*Марр Н. Я.*, Ани, книжная история города и раскопки на месте городища, Л.—М., 1934.
*Мусхелишвили Л.*, Раскопки в Дманиси, СА, 1940, № 6.
*Орбели И. А.*, Баня и скоморох XII в., «Памятники эпохи Руставели», издание Государственного Эрмитажа, Л., 1938.
*Орбели И. А.*, Предисловие «Памятники эпохи Руставели», Л., 1938.
*Орбели И. А.*, О двух терминах в надписях Ани, Избранные труды, Ереван, 1963.
*Орбели И. А.*, Развалины Ани, Избранные труды, Ереван, 1963.
*Орбели И. А.*, Каталог Анийского музея древностей, Избранные труды, Ереван, 1963.
*Орбели И. А.*, Колокол с Анийскими орнаментальными мотивами XII—XIII вв., Избранные труды, Ереван, 1963.
*Токарский Н. М.*, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961.
*Токарский Н. М.*, Капитель из Анберда, Труды Отдела Востока Государственного Эрмитажа, т. 3, Л., 1940.
*Халпахчьян О. Х.*, Средневековые бани Армении, СА, 1960, № 1.
*Чубинов А.*, Декоративное убранство Анийских карасов, Христианский Восток, т. 5, выпуск первый, СПб., 1916.
*Шелковников Б.*, Поливная керамика из раскопок города Ани, Ереван, 1957.
*Шелковников Б.*, Художественная керамика двинских раскопок, Известия армянского филиала АН СССР, Ереван, 1940.
*Шелковников Б.*, Художественная керамическая промышленность средневековой Армении, Известия армянского филиала АН СССР, Ереван, 1942.
*Шелковников Б.*, Керамика и стекло из раскопок города Двина, Труды Гос. исторического музея Армении, т. 4, Ереван, 1952.
*Якобсон А. Л.*, Средневековый Херсонес XII—XIV вв., М.—Л., 1950.
Persian art, an illystrated souvenir of the exhibition of Persian art, at Burlineton House London, 1931.
A handbook of Myhamadan art, by M. S. Denond. New York, 1958.
The art of Constandinople, by John Beeknich, Paidon press, London, 1958.
Ernest Kühnel, islamische kleinkunst, Berlin, 1925.

# Ն Կ Ա Ր Ն Ե Ր



Նկ. 1. Եկեղեցու շինարարությանը վերաբերող արձանագրությունը։



Նկ. 2. Անբերդ ամրոցի ընդհանուր տեսքը՝ արևելքից։



Նկ. 3. Ամրոցի տեսքը հյուսիսից։



Նկ. 4. Միջնաբերդը՝ ամրոցի կողմից։



Նկ. 5. Անբերդաձոր իջնող պարիսպը։



Նկ. 6. Արխաշանի նոր մուտքը՝ ներսի կողմից։



Նկ. 7. Արխաշանի դարպասը՝ դրսի կողմից։



Նկ. 8. Անբերդաձորի հին մուտքը՝ ներսի կողմից։



Նկ. 9. Անբերդաձորի նոր մուտքը՝ դրսի կողմից։



Նկ. 10. Անբերդաձորի դարպասը պաշտպանող քառանկյունի աշտարակը։



Նկ. 11. Բագրատունյաց շրջանի բուրգերից մեկի շարվածքը։



Նկ. 12. Պարսպի մի մասը՝ վարպետի նշաններով։



Նկ. 13. Ամբերդ ամրոցը՝ Վահրամաշենյան եկեղեցով։



Նկ. 14. Միջնաբերդի նոր պարիսպը։



Նկ. 15. Միջնաբերդի հարավային պատը՝ Բագրատունյաց շրջանին հատուկ շարվածքով։



Նկ. 16. Միջնաբերդի ներսի տեսարան (ներքևում մուտքը՝ քարե դռնով)։



Նկ. 17. Միջնաբերդի երկրորդ մուտքը։



Նկ. 18. Միջնաբերդից կտուրը տանող քարե աստիճանները։



Նկ. 19. Միջնաբերդի հին և նոր պարիսպների միջև եղած տարածությունը։



Նկ. 20. Միջնաբերդի հարավային պատուհանները։



Նկ. 21. Միջնաբերդի սենյակներից մեկը։



Նկ. 22. Միջնաբերդի երկաթե շրջանակներով փակվող պատուհաններից մեկը։



Նկ. 23. Միջնաբերդը։ Աջ կողմում Վաղուտյանների կառուցած նոր սենյակը։



Նկ. 24. Ամրոցի ջրացծից մի հատված։



Նկ. 25. Ամրոցի ջրամբարի ընդհանուր տեսքը։



Նկ. 26. Հարավային գաղտնուղու ծածկի սալերը։



Նկ. 27. Եկեղեցին հյուսիս-արևմուտքից։



Նկ. 28. Եկեղեցու արևելյան ճակատը։



Նկ. 29. Եկեղեցու հարավային մուտքը (նստած է Ն. Մ. Տոկարսկին)։



Նկ. 30. Եկեղեցին հարավ-արևելքից։



Նկ. 31. Բաղնիքի ընդհանուր տեսքը։



Նկ. 32. Բաղնիքի գմբեթակիր ծածկը։



Նկ. 33. Բաղնիքի հնոցի կամարակապ բացվածքը՝ դրսից։



Նկ. 34. Բաղնիքի հարավային մուտքը։



Նկ. 35. Ուշ շրջանի բնակելի տներ ամրոցի տարածքում։



Նկ. 36. 1963 թ. պեղված սենյակներից մեկը։



Նկ. 37. Ջիթհանի քար։



Նկ. 38. Խաչքար Արխաշանի գերեզմանոցից։



Նկ. 39. Խաչքար Արխաշանի գերեզմանոցից։



Նկ. 40. Խաչքար Արխաշանի գերեզմանոցից։



Նկ. 41. Եկեղեցու հյուսիսային մասում կատարված պեղումները։



Նկ. 42. Եկեղեցու շրջապատում գտնված խաչքար։



Նկ. 43. Եկեղեցու արևելյան կողմում գտնված խաչքար։



Նկ. 44. Եկեղեցու հյուսիսային կողմում գտնված խաչքար։



Նկ. 45. Եկեղեցու հյուսիսային կողմում գտնված խաչքար։



Նկ. 47. Եկեղեցու մոտ գտնված եռանկյունի քանդակազարդ քար։



Նկ. 46. Զաքարե Ամիրսպասալարի կողմից կանգնեցված խաչքարը (1200 թ.)։



Նկ. 49. Պղնձե գավաթ։



Նկ. 48. Ամրոցի հյուսիսային մասում բացված թոնրատունը։



Նկ. 50. Նոր պարսպի երկրորդ բուրգի մոտ բացված անոթները։



Նկ. 51. Նոր պարսպի երկրորդ բուրգի ներքևի շերտի պեղումները։



Նկ. 52. Ամրոցի հին մուտքը (հետագայում փակվել է)։



Նկ. 53. Բրոնզե աշտանակ։



Նկ. 54. Վահան՝ գտնված միջնաբերդում։



Նկ. 55. Ջուր մաքրող-ֆիլտրող կարասը։



Նկ. 56. Նիզակ։



Նկ. 57. Բոլորաձև նիզակ։



Նկ. 58. 1968 թ. հայտնաբերված նիզակներ։



Նկ. 59. Քառանիստ նետասլաք։



Նկ. 60. Շեղանկյունաձև նետասլաք։



Նկ. 61. Նետասլաքներ։



Նկ. 62. Մեծ կացին։



Նկ. 63. Երկաթե դանակներ։



Նկ. 64. Դանակներ։



Նկ. 65. Քարագործ վարպետի մուրճ։



Նկ. 67. Մանգաղի գործող մասեր։



Նկ. 66. Սանդերք։



Նկ. 68. Բրոնզե ծորակ։



Նկ. 69. Երկաթե խաչեր։



Նկ. 70. Նիստավոր հավանգ։



Նկ. 71. Կլոր հավանգ։



Նկ. 72. Պղնձե թասի կափարիչ։



Նկ. 73. Պղնձե թասի կափարիչի բռնակը՝ առյուծի պատկերով։



Նկ. 74. Եռոտանի աշտանակ։



Նկ. 75. Քանդակազարդ աշտանակի մաս։



Նկ. 76. Աշտանակի մաս։



Նկ. 77. Դրոշմազարդ կարասի բեկորներ։



Նկ. 78. Սափորներ։



Նկ. 79. Հասարակ քրեղան։



Նկ. 81. Ջնարակած քրեղաններ։



Նկ. 80. Ջնարակած բրեղաններ։



Նկ. 82. Բրոնզե ամրակներ։



Նկ. 83. Խուփեր։



Նկ. 84. Ջիթաճրագներ։



Նկ. 85. Պայտ։



Նկ. 86. Ապակե ապարանջաններ։



Նկ. 87. Արծաթե ապարանջան։



Նկ. 88. Դրամ։



Նկ. 89. Պղնձե դրամ։



Նկ. 90. Աշտանակի մասեր։



Նկ. 91. Եզան պայտ։



Նկ. 92. Ջրատար խողովակ։



Նկ. 93. Պղնձե խողովակ։

Отделение Общественных
Библиотека
Арм. ССР

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | Էջ |
|---|---|
| Ներածություն . . . . . . . . | 5 |
| Գլուխ առաջին. Անբերդը պատմության մեջ . . . . . . . | 13 |
| Գլուխ երկրորդ. Անբերդի ճարտարապետական հուշարձանները . . . . | 34 |
| Գլուխ երրորդ. Անբերդի հնագիտական պեղումները և հայտնաբերված առարկաները . | 67 |
| Ցանկ օգտագործված գրականության . . . . . . | 110 |



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՎՌԱՄԻ
АРУТЮНЯН СЕРГЕЙ ВРАМОВИЧ


### ԱՆԲԵՐԴ


Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Ջափագրությունները
Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ, Ա. Ա. ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻ

Լուսանկարները՝
Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ, Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ և ՀԵՂԻՆԱԿԻ

Պատ. խմբագիր՝ Գ. Հ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ
Հրատ. խմբագիր՝ Է. Ս. ԱՎԵՏՅԱՆ
Գեղ. խմբագիր՝ Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Նկարիչ՝ Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՎՖ 04385 Պատվեր 945 Հրատ. 4465 Տպաքանակ 3000

Հանձնված է շարվածքի 3.12.1976 թ.։ Ստորագրված է տպագրության 18.8.1977 թ.։ Տպագրական 7,0 մամուլ + 39 տախտակ ներդիր, պայման. 13,3 մամուլ, հրատ. 10,87 մամուլ։ Թուղթ № 1, 70×108 1/16։ Գինը 2 ռ. 05 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН Арм. ССР, Ереван-19, Барекамутян 24 г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության էջմիածնի տպարան
Типография Издательства Академии наук Армянской ССР, г. Эчмиадзин


### ՈՒՂՂՈՒՄ

Տեխնիկական պատճառներով անհամապատասխանություն է առաջացել տեքստի հղումների և աղյուսակի նկարների համարակալության միջև։

| Էջ | Տող | Տպված է | Պետք է լինի | Էջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|---|---|---|---|
| 41 | 5 վ. | 9 | 8 | 79 | 9 վ. | 62 | 54 |
| 41 | 7 վ. | 10 | 9 | 82 | 6 վ. | 66 | 56 |
| 41 | 13 վ. | 11 | 10 | 82 | 17 վ. | 67 | 57 |
| 43 | 24 ն. | 12 | 11 | 82 | 21 ն. | 68 | 58 |
| 43 | 22 ն. | 13 | 10 | 83 | 9 վ. | 69 | 59 |
| 43 | 21 ն. | 14 | 12 | 83 | 13 վ. | 70 | 60 |
| 43 | 14 ն. | 16 | 13 | 83 | 22 ն. | 71 | 61 |
| 44 | 19 վ. | 18 | 16 | 86 | 7 վ. | 62 | 54 |
| 44 | 21 ն. | 19 | 17 | 86 | 8 ն. | 72 | 62 |
| 44 | 17 ն. | 20 | 18 | 87 | 14 ն. | 95 | 63 |
| 44 | 13 ն. | 21 | 19 | 88 | 17 ն. | 75 | 65 |
| 44 | 1 ն. | 22 | 20 | 88 | 9 ն. | 76 | 66 |
| 45 | 9 վ. | 24 | 22 | 94 | 5 ն. | 82 | 70 |
| 45 | 16 վ. | 25 | 21 | 96 | 19 վ. | 83 | 72 |
| 45 | 5 ն. | 26 | 24 | 96 | 23 վ. | 84 | 73 |
| 49 | 5 վ. | 29 | 26 | 96 | 2 ն. | 85 | 74 |
| 54 | 6 ն. | 33 | 29 | 96 | 1 ն. | 86,87 | 75.76 |
| 56 | 3 ն. | 48 | 31 | 97 | 13 ն. | 88 | 77 |
| 57 | 2 վ. | 36 | 32 | 100 | 11 ն. | 90 | 78 |
| 57 | 8 ն. | 37 | 33 | 101 | 1 վ. | 91 | 81 |
| 59 | 3 ն. | 39 | 35 | 101 | 7 վ. | 92,93 | 79,80 |
| 64 | 5 վ. | 48 | 41 | 101 | 11 ն. | 95 | 83 |
| 68 | 19 ն. | 40 | 36 | 102 | 17 ն. | 96 | 84 |
| 68 | 12 ն. | 57 | 49 | 106 | 16 վ. | 98 | 86 |
| 68 | 11 ն. | 80 | 69 | 106 | 10 ն. | 100,101 | 88,89 |
| 78 | 11 ն. | 61 | 53 | | | | |

Տեքստում չկարդալ նկ. նկ. 14, 27, 41, 57, 58, 59, 60, 65, 77 համարները։